



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

91
P-22

PM

11 DEC 201

Armenia

ԿԻՊՐՈՍ ԿՂԶԻ


Ա

ԱՇԽԱՏԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դրեց ԲԱԿՈՒՐԱՆ



ՆԻԿՈՍԻԱ, ԿԻՊՐՈՍ

ՏՊԱՐԱՆ Ա.Գ. ԿՐԹԱՐԱՆ — ՈՐԲԱՆՈՅ

1903



28.02.2013

20412

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կիսրու կղզին, երե իր բնդամուր շահեկանուրիւնն
ուժի սրտագրաց յիշառակենքով, բանաստեղծական տեսա-
րաններով և մշտապայծառ երկինքով՝ Հայերու համար յատ-
կապի հշանակելի հանգամանքներ կը ներկայացնե:

Կիսրուի և Հայկական Կիլիկիոյ տաճուրիւններ անց-
հանի դեպքեր են և միայն պատմութեան բաժին կը մնան այս-
օր, բայց ներկայ ժամանակի պայմաններն աշ վերահաստա-
տած են նոր կապեր։ Երե այդ կապերն անուեն մասցած մը լի-
նեին՝ այժմ այս մարուր մը նողորտին մեջ համախմբուած և
կազդուրուած պիտի տեսնելիք գեր մի մասը մեր հազարա-
շոր եղբայրներուն որոնք հեռաւոր աշխարհներ կը ցրուին
և դժբաղդուրեանց դեմ կը մաքատին:

Այս գրքոյիք կը մատուցանեն սիրելի ազգին ուշադրու-
թեան, այն յուսով որ կղզին առելի որոշապէս պատկերա-
նայ:

Թերեւս բաղդ ունենանք տեսնելու իմացական լուսաւո-
ռութեան նոր փառու մը այն խարիսխին վրայ՝ ուր ահա լոյն
կը տեսնեն այս տողերը:

Եկիսունիա, 1903, Փետրուար:



1807-2012

Արքայի Անուշտիւ,

Եթից բարեկանց,
Հայոց Թագավոր
1931

Տերընկըս

ԿԻՊՐՈՍ ԿՂԶԻ

Ա.

ԱՇԽԱԲԱՀԱԳՐԱԿԱՆ ԵԽ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ,

ԲԱԱԿԱՆ և ՃԱՏԿԱԱԿԱՆ ԱՀԽԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միջերկրական ծովի կղզիներուն մէջ պատմական և արնատեսական կարևորութեամբ երկրորդն, իսկ ընդարձակութեամբ երրորդն է կիպրոս, կիլիկիոյ ցամաքէն զատուած 40 մղոն հնոաւրութեամբ և Սուրբիայէն՝ 65 մղոն: Կղզիին տարածութիւնն է 3584 քառ. մղոն (9300 քառ. քիոմէգր), երկայնութիւնը 144 մղոն և մեծագոյն լայնքը՝ 60 մղոն (*): Կիպրոսի ցամաքին վրայ կը բարձրանան երկու առանձին լեռնաշղթաներ:

Քիրեմիս - Քարբաս, թանձրակուռ կրահողէ կազմուած այդ շարքը՝ կղզիին հիւսիսային կողմը՝ կ'երկարի հրակայ պատնէշի պէս և նեղ զագաթներու կարգ մը կը ներկայացնէ: Այս շղթայի բարձրագոյն կէտերն են՝ չիլարիոն(3340

(*) Մէկ մղոն հաւասար է 1,61 քիոմէգրի. մէկ մետր հաւասար է 3,28 սոքի:

սոր), Պիւֆալլինկ (2810 ոտք) և Լվիա (2810 ոտք):

Երկրորդ և բարձրագոյն լեռնաշղթան, թրօօսոսու, որ կը պրուաէ կղզին արեւելեան և հարաւային կեղրոնը՝ կազմուած է հրաբխային ժայռերէ որք շրջապատուած են երրորդական (tertiaire), կրային և կրախան կաւային հողերով: Այս շրջային ամենաբարձր կէտերն են՝ թրօօսոսու (6590 ոտք), Ատելքէ (5380 ոտք), Մահերա (4730 ոտք) և Սթավրո վանի (2300 ոտք): Երկու լեռնաշղթաներն ալ զուրկ են ջրի մեծ շտեմարաններէ և կղզին չունի հոսանք մը՝ գետ կոչուելու արձանի:

Կիսրոսի կլիման կը համեմատուի Փոքր Ասիային, իսկ բուսական և կենդանական ինքանքը՝ կիլիկիոյ Ամանոս լեռներուն: Մի կարծիք դոյցած է — ըստ ոմանց անկարելի — թէ մինչև իսկ ջրերու մէկ մասին աղբիքը Տօրոս լեռներուն ներքեւն է: Կղզիին ձմեռը, մանաւանդ դեկտեմբեր և յունուար ամիսներուն մէջ՝ անձրեսու է, բայց երբ հիսկիսային ժամին չը փշեր՝ առհասարակ մեղմ կ'անցնի:

Դարունը կ'սկսի փետրուարի կէսէն և ամենահաճելի տեսարան մը կ'ընծայէ: Դաշտերը կը դալարին, ցորենի ծղօտները ծիւեր՝ կ'արձակին և վայրի ծաղիկներն ամէն կողմէ առատօրէն կը փթթին: Ոռաջին անգամ կը տեսնուին քրքումի ցեղէն ներկայացուցիչներ, յետոյ՝ մարդախոտի տեսակ մը տափակ տերեններով ու մանուշակագոյն ծաղիկներով —, գոյնողոյն հարսնուկներ, և անոնց հետ օղինը (asphodèle), լոշը (cyclamen), թրաշուշանը (glaieul), և կերպ կերպ ձուածաղիկներ (orchis). Իսկ ջրերու մօտ՝ դափնելարդն ու ձարխոտը: Մեղք որ շատ չը աներ այս հեշտաբոյք եղանակը մայիսի սկիզբն արդէն զգալի կը լինի ամառը, և յուկիսին ու գոյսոտուին ջերմաշափը կը բարձրանայ մինչև 104° ջարէնայթի (40° Սանդիկրասի):

Չմրան և գարնան տարափներէն — որոնց գոյացուցած հեղեղները երբեմն աղէտալի կը լինին — դրեթէ և ոչ մէկ կաթիւշը թափիր զովացնելու ամրան հեղձուցիչ մթնոլորտը և անշրջի հողը: Ողողում կամ երաշտութիւն, ահա ասոնք եղած են կիսրոսի մեծագոյն պատուհանները, որոնց դիմալրելու համար՝ քաղաքակըթութիւնն իր ամբողջ ոյեր գեռ չէ թափած այսաեղ: Մեծն կոստանդիիանոսի ատեն ՅԵ տարի տեւող երաշտութիւնը՝ կիսրոսի անկման շրջաններէն մին կը բանայ:

Մի որիշ գերազութիւն եղած է ջերմախարը, որ թէն չունի վտանգաւոր բնութիւն և ոչ՝ առաջուան չափ ճարակ, բայց երբեմն կայցելէ անզգոյշ նորեկներուն և տեղացիներուն:

Չը նայելով ասոր՝ կիսրոսի կլիման բաւական բարեփոխուած է թէ՛ առողջապահական պայմաններու և թէ՛ նոր արնեկուած ծառերու շնորհիւ: Անգլիական բանակի բժիշկներէն Տեղակալ — Գնդապետ Գրէյք (Lieut. - Col. Craig) տարիներ առաջ այսպէս վկայած է իր Տեղեկագրին մէջ:

«Կիսրոս մնացի հինգ տարիէ աւելի, (1878 էն սկսած) չորս տար եղանակներ անցընելով դաշտերուն մէջ:

«Գրեթէ միշտ ինամբիս ներքեւ ունէի մանուկներ և կիներ, և անշափահասներու մէջ տեղի չունեցաւ մահուան գէպը մը իսկ, մինչեւ այս վերջին օրը՝ յարում կը ճամբորէի գէպի հայրենիք: Ես ինքս ալ, թէկ շարունակ աղային ճախիններու և մացառուած ձորերու մէջ աբար, կտցար, բաղ և ուրիշ երէներ որսալու ետեկ ինկած էլ՝ ամենեին չը գիտայց մինչեւ իսկ թէ ինչ է տեսնային զլխացաւը: Եթէ մաքրութեան հասարակ պայմանները գործազրուին՝ երկրին ջերմերն ալ, որոնց գիւրաւ դիմաղրել կարելի է՝ շատ թեթև են երբ յարձակին, և կը տեսնուի որ անգամ մը բուժուելէ վերջ նշան չեն թողուր:

Բնդէ. Կառավարչի 1901ի Տեղեկագրին ալ կը պարունակէ հետեւալ տողերը:

« Յղին բարեխառնութիւնը ձմրան մէջ կը լինի 40-60 աստիճանի (Ֆար.) կազդուրիչ ցուրտ մը, մինչ ամառնային արեւու ջերմութիւնը զաշտերու մէջ 100°ի կը հասնի։ Այս տարուան ամենաքարձր աստիճանը 165 եղաւ։

« Կլիման յոյժ լաւ է, և թրօօտոսի լեռնաշղթան ամառնային պատուական բուժարան մը (Sanatorium) կը ներկայացնէ, տան մէջ ջերմութիւնը 70° լինելով։

« Թրօօտոսի բանակատեղը, որ 6000 ոտքի չափ բարձրութեան մը վրայ կը գանուի։ Առոտանի պատերազմին մէջ հիւանդացող զօրքերէ ունաց համար այս նպատակով դործածուեցաւ և նշանակելի արդիւնք ունեցաւ։

« Տարւոյն հինգ ամսուան մէջ թրօօտոսի գաղաթը ձիւնապատ է, և անոր սլայծառ ու մաքուր օղին մէջ կրնայ հասաւատուիլ բուժարան մը, որ ձմրան եղանակին՝ կրնայ հաւասարիկ Զուիցերիոյ առողջարար բնակավայրերուն։ Իրբու ամառնային այցելարան՝ թրօօտոս կը ներկայացնէ մի լաւագոյն կլիմայ քան որ և է ուրիշ տեղ մը Միջերկրականի եղերաց վրայ։ Զմրան միջոցին՝ ջերմութեան աստիճանը հածելի և կազդուրիչ է, և ջինջ ու տաքուկ արեւ կը տիրէ։»

Կիպրոսի հողը հին գարերու մէջ յատուկ համբաւ կը վայելէր իրբու արգաւանդ և նոխաբոյս։ Տեղացիներն իրենց հայրենիքը կը բազգատէին Եղիպտոսի հետ, իսկ օտարները զայն կանուանէին Մաքարիա, այսինքն « Երանութեան վայր »։ Հելենական շրջաննեն յետոյ երկրագործութիւնն ինկաւ։ Հոսմէական կայսրութեան ու միջին գարերու ատենն ալ նախկին աստիճանին չը բարձրացաւ։ Իսկ մասնաւորապէս վերջին դարերուն՝ յոտի վարչութիւնը, ջրի պակասութեան, միջուռութիւնն աստիքի ջերմութեան և մարախներու յաճախակի յարձակմանց հետ՝ ամրող ջացուց գժրազդութեանց շարքը։

Կղզին երբեմն ունեցած է խիտ անտառներ, որոնք տատարձ լը հայթայիթէին օտար երկիրներու։ Իիպրոս անունն իսկ, ըստ ումանց, ծաղումն կ'առնու յանարէն Քիրարիսոս բառէն, որ կը նշանակէ նոճի, կիպարիս։ Այսոր՝ գալարազուրկի զաշտերու և խոսան լեռնակողերու անսրբ՝ տիսուր տպաւորութիւն կը թողու ուղեւորին վրայ։ Փէտք չէ ենթաղրել, սակայն, թէ կիպրոս այլևս ամուլ է։ Այստեղի սովորական գորշ ճերմակի փոշին ներքի պաշտոած է մի բուսական հիանալի հող, աեղ տեղ Յ մէզր խրունի, որուն նմանը Նեղոսի հովտին մէջ միայն կայ կըսեն գիտնականները։ Երկրին արգասաւորիչ ոյժը և ցօղին խոնաւութիւնը կը հակաշուն աննպաստ պայմաններուն և շատ տեղեր կ'արտազրին լիառատ հունձք։ Կղզիին հազիւ երրորդ մանը կը հերկուի այժմ և արտերը սովորաբար Չ-Յ տարի պարապ կը թողուին։ Ցանքը կ'սկսի հոկտեմբերին և կը վերջանայ յունուարին։ Յունիսի սկիզբները, երբ հունձքերը քաղուած են արդէն՝ չորսութիւն կը տիրէ ամեն կողմ։ մինչեւ իսկ Մեսոպոտէմ, կղզիին արևելքը տարածուղ արգաւանդ և պարաբատահող զաշար, սահարայի երեւոյթ կ'ատանայ։

Այն ատեն ուղեւորը պէտք է զիմէ զէպի լեռնային բարձունքները, որոնց վրայ ակնահաճոյ և զովարար հովոյներ չեն պակսիր։

Թրօօտոս, անզլիացիներուն ամարանոցը, ունի գեղածիծաղ պատուական տեսարաններ որոնք Երսապացի այցելուներէ ումանց յիշեցուցած են Հելլինիան։ Շոճի, կազնի, դղփի, տոփի, սօսափուշ, այծերեւ-ասոնք աւելի կամ նուազ առատութեամբ կ'առնի այլ գիցարանական Ուխնպոսի կողերուն և հովիտներուն վրայ։ Թրօօտոսի հարաւային դարվարները ծածկուած են այդիներով, որոնց խաղողէն կը շնուրին Գուշանաւարիան և ուրիշ զինիները։

Ոչ նուազ հաճելի է հիստիային լեռնաշղթան ալ: Այն-
ուեղ շաճիներու, հերձիներու և կընդինիներու ցանցառ ան-
տառակներէն վար՝ լեռանց ստորին կողերուն վրայ զիզուած
ճոխահւեթ խաւերը նշանաւոր են այլ և այլ բոյսերով: Այդ
փոքր գաւառը, Քիրենիա, հարավի ատար հովերան զիմ լեռնե-
րով պատռարտած և կիլիկեան ծովին զեփիւռով զոլացած՝
բնական առաւելութիւններ կը վայելէ: Եղջերենիներու և ձի-
թենիներու տառերախիտ պուրակներուն ներքեւ, և հանդիպա-
կաց ծոլային ու ցամաքային հեռանկարին առջև՝ հիացած
են Եւրոպացի աշխարհագիրներ, որոնց մէկին կարծիքով,
Քիրենիայի և Լաբայիսի գաշտավայրը՝ Նախորիէն և Վոսիորէն
ետք Միջերկրականի տեսարաններուն ամենէն զեղեցիկն է:
Լաբայիս այն վայրն է որ Կուսինեան թագաւորներուն օ-
րով կը կաչուէր Պէլլա Բաել գեղեցիկ աշխարհ:

Համեմատապէս աւելի անշատ, բայց ոչ ստական բեղմնա-
ւոր է Քարբասի լեռնուար որ երկարածիտ կ'ուզզուի զէսի Հա-
յոց ծոցը: Գիհի և հերձիի անտառակներ և խիս թուփեր կ'ա-
ճին այդ հեռաւոր և կիսալայրենի անկիւններուն մէջ:

Երկար պիտի լինէր թուել կիսպոսի բոլոր բերքերը. զիմա-
ւորներն են ցորեն, գարի, բանզակ, եղջեւը, ձիթապառղ, չա-
միչ, շուշմայ: Ամեն տեսակ մրգեղէն, բանջարեղէն և ծաղիկ
կ'աճին այստեղ: Անտառարերը կ'ստացուին բաւական քա-
նակութեամբ, — ոսկիէն, բեւեկնիէն, մազտաքէէն, լատանո-
նէն, աղտոքէն, ալուէէն և հինայէն:

Կինդանիներու մէջ նշանակելի են ջորիները, խոշոր էշերը
և մանր ձիերը. նոյնագէն՝ Թրօստոսի մէջ թափառող վայրի
խոյերն ու ցուլերը: Մեծ թիւ կը կազմեն արջառները, այ-
ծերը և խոզերը: Նախիրներուն և հօտերուն արօտավայրե-
րը մասնաւոր սահմաններու մէջ որոշուած են: Ծանր տու-
դանք կը պահանջուի այն անբան կովին կամ ոչխարէն—

այսինքն անոր բանական տիրոջմէն— որ կը յանդկնի ճա-
քակիւմի պարաքղի կամ ածուի մէջ: Խոկ վայ այն այժին
որ կ'արհամարհէ կարգապահութեան օրէնքը և կը խոյանայ
դէպի օտար սահման: Անտառապահն ալ, կալուածատէրն ալ
արաօնեալ են բանելու ըմբռուար և անոր որկրամութիւնը
տուժել տալու իր տիրոջ:

Կիպրոս չունի զիշաաիչ գաղաններ և ոչ փոքրամարմին
սահմատորներ:

Ծանօթ թոչուններու, սողուններու և միջատներու մա-
սին եա չը մնար զրացի ցամաքներէն: Խոկ մարախը, այդ
հինաւորց թշնամին, անհամար բազմութեամբ պիտի վրխ-
տար եթէ իրեն զիմ պատնէշներ չը բարձրացնէին:

Հանքային հարստութիւններէն՝ կղզին ունի պղինձ և եր-
կաթ, բայց ատոնց շահագործումը որ երկրին վաղեմի փար-
թամութեան զիմանուր պատճառ կը համարուի՝ զալրած է հի-
մայ: Միջին գարուց ատեն նշանաւոր էր արջասպը (con-
perose — զամբ զրպը): Մի քանի տեսակ քարահանքեր
կան. մարմարին ո՛չ: Լճակներէն հանուած աղը, որմէ տա-
րին 150,000 ոսկի արժէքով սպառում կը լինէր թուրքիոյ
մէջ՝ հիմայ ամենալոյզն հասոյթ կ'արտազրէ, որովհետեւ Բ.
Դուռն տյդ իրաւունքն իրեն վերապահուած կը նկատէ:

Պէտք է յիշել սպունզի արտազրութիւնն ալ, որ կարեւոր
հասոյթ կը թողու:

Արհեստական ճարտարութիւն պէտք չէ վնասել հոս: Ե-
ղած է ժամանակ որ կիպրացի վարպետներ համբաւ հա-
նած են: Անոնք շինած են Ազամեմնոնի համար պղնձէ
զրահ, Դելփիսի տաճարին համար ինկակալ և ոսկերչական
զարդարանքներ ու սպասներ: Այս տեղէն արտազրուած
են բրդէ ու բամզակէ ընտիր կերպասներ և երփներանդ ու ոս-
կեթէ հիւսուածներ Այս տեղ քանդակուած են մեծարժէք:

արձաններ և ճարտարապետական գործեր։ Բայց անոնք այլ եւս հին պատմոթեան կը վերաբերին։ Այսօրուան արհեստներն առհասարակ նախնական վիճակ ունին և արհեստաւորները հնարամութենէ և ձեռներեցութենէ զորկ մարդիկ լինելով իրենց աւանդական հին մեթոսէն ունէ շեղում կամ փոփոխութիւն կը մերժեն յաճախ։

Այս ամենուն հետ մէկտեղ, չը մոռնամ որ Զիգակոյի ցուցահանդէսին մէջ մրցանակի արժանացած են մետաքսէ բանուածքները և բրդէ կերպառներ, զորս կիալրոսէն դրկած էր Էլափ Ալչստրլ, նախորդ ընդհանուր կառավարչին կինը։

Եթէ զիտութիւն և զրամագլուխ միանան՝ կիալրոսի մէջ չեն պակսիր շահարեր արհեստներ, որոնց համար երկիրն իսկ պատրաստ ունի շատ նոպաստաւոր նախնական նիւթեր։ Ցիշեմ մասնաւորապէս բամզակի, զինիի, խեցեղին անօթներու, բանուած կաշիի և մետաքսի գործերը։

Քաղաքական Աշխարհագրութիւն

Կիալրոս կղզին 1878 ին անցաւ անզլիական կառավարութեան։ Վարչական այս փոփոխման պատճառներն ու անոր յարակից պայմանագրին Հայերութ բազրին վրայ ունեցած հետեանքը քաջայայտ են։ Բայց և այնպէս կը յուսամ թէ աւելորդ չը համարուիր այստեղ ներկայացնել այդ պայմանագրին բառկան թարգմանութիւնը։

«Յօդուած Ա. — Եթէ Պաթում, Արտահան, կարս կամ ասոնց որևէ մին Ռուսիոյ ձեռքը մնայ, կամ եթէ ապագայ որևէ ատեն Ռուսիոյ կողմէ փորձ մնի զրաւել որիէ մի մաս այն ասիական գաւառներէն՝ որոնք խաղաղութեան վերջնական գաշնագրին համեմատ Ն. կ. Վ. Սուլթանին սեփական կը մնան, այն ատեն Անդիխ սպարտականութիւն կ'ստաննէ միանալ Ն. կ. Վ. Սուլթանին հետ և զանոնք պաշտպանել զէնքի զօրսւթեամբ։

«Ասոր փոխարէն, Ն. կ. Վ. Սուլթանը Անզլիային կը խոստանայ կատարել այն բարենորոգումները՝ որոնք անհրաժեշտ են Բ. Պրան այդ երկիրներուն մէջ ունեցած քրիստոնեայ և այլ հպատակաց կառավարման և պաշտպանման համար։ Այս բարենորոգումներու մասին վերջէն համաձայնութիւն պիտի կայնայ այս երկու տէրութեանց միջնէ։ Եւ որպէս զի Անզլիա իր խոստումը կատարելու համար կարենայ հարկ եղած նախապատրաստութիւնն ընել՝ Ն. կ. Վ. Սուլթանը կը յօժարի նաև կիալրոս կղզին նշանակելու որ Անդիխ ձեռքով գրաւոի և կառավարուի։

«Յօդուած Բ. — Այս պայմանագրի պիտի վաւերացնի և անոր վաւերացեալ օրինակները պիտի փոխանակուին մէկ

ամսոյ միջոցին և եթէ հնար է աւելի շուտ:

« ի վկայութիւն որոյ՝ երկու կողմերու լիազօր պատուի բակները զայն կ'ստորագրեն և իրենց պաշտօնական կնքով՝ կը գրոշմեն:

Տուեալ ի կ. Պուիս. 4 յունիս 1878:

ՍԱՖՎԱՅԹ.

Ա. Հ. ԼԵՅԲՐՏ.»

Յետոյ երկու կողմէ ալ ընդունուեցաւ «որ Անզիա Բ. Դրան վճարէ կղզիին հիմակուան ծախքէն աւելցած հասոյթը: Աւելցած հասոյթին քանակութիւնը պիտի հաշուռափ և որոշուի վերջին հինգ տարիներու միջին գումարին համեմատ:»

Նոյնպէս ընդունուեցաւ որ « եթէ Ռուսիա Թուրքիային վերադարձնէ կարսը և Հայաստանի այն մասերը զորս գրաւեց վերջին պատերազմին ատեն՝ Անզիացիք ալ կիպրոս կղզին զուրս ելլեն և 1878 յունիս 4 ի պայմանագրութիւնուի:»

Ուրեմն այս յօդուածներու տրամադրութեամբ՝ Կիպրոսի անզիական գրաւումն առժամանակեայ բան մը կ'ենթադրուի և զուցէ ատոր համար է որ անզիացի զրամատերներ կարեւորութիւն չեն ընծայեր այս կղզիին, թէն անզիակարաւարութեան կողմէ քանիցս վասահացուցիչ յայտարութիւններ եղած են:

Անզիացիք կիպրոսի վարչական կազմակերպութեան մէջ արմատական փոփոխութիւն չեն կատարած: Ծնդհանուր կառավարիչը կը կոչուի թարձր Պատուիրակ և Առաջին Հրամանատար(High Commissioner and Commander in chief), զոր տաճկերէն բացատրութեամբ թարգմանած են վահի վէ Սկրտար:

Սակայն ոստիկանական և դատական շրջանակներու մէջ մուտ գտած բարեփոխութիւնն զգալի է: Մի Օքնսպիր ժողով,

անզիացի և բարձրագոյն պաշտօնեաներէ և քուէարկութեամբ լինարուած լիցն և մահմետական անդամներէ բաղկացած, տարին մի քանի շարաթ շարունակական նիստ կ'ընէ և երկրին համար օգտակար նորանոր օրէնքներ կը գծէ:

Այս ժողովին կը նախագահէ Բարձր Պատուիրակը:

Կղզիին մէջ կը մնան Ա անզիացի զինուորներ միայն, որոնք ձմեռը կը բնակին ՚ի լիմասոլ, և ամառը՝ թրօստոսի բարձանց վրայ: Աստիկան-զինուորները տեղացի են և կ'ընտրուին ամէն ազգէ, թէն ասոնց մէջ թուրքերն աւելի են թուով և աւելի ընդունակութիւն կը ցուցնեն: Աստիկան-զինուորները շատ մաքուր կը հազորն և յատուկ համազգեստ մը կը կրն, զլուխնին ֆեսով: Ասոնք պաշտօնապէս Զապրի և անունով կը յորչորչութիւն:

Կիպրոսի զատարաններուն մէջ տիրող Օքնը Շունանեան ֆիւրուրն է, բայց տեղական պէտքերուն համեմատ յաւելուածական օրէնքներ և փոփոխութիւններ ալ կան:

Կիպրոսի թարձրագոյն զատարանը (Supreme Court) կը բաղկանայ երկու անզիացի զատաւորներէ (Chief Justice և Քայլու Judge) որոնք եղենական և քաղաքային գատերու վերաբնութեամբ միայն կ'զբաղին. մինչ Նաւային զատերուն մէջ թէն նախաքննիչ և թէն վերաբննիչ են:

Այս զատաւորներու մին կամ երկուքը միասին գատաւոյին զատարանաց երկու կամ աւելի զատաւորներուն կամ միայն Նախագահին հետ միանալով վեց զաւառաց իւրաքանչիւրին համար կը կազմեն Պարբերական պատժագատ Ատեանը (Assize Court), որ եղենական խնդրոց մասին անսահման իրաւասութիւն ունի:

Գատառային գատարանները (District Court) եղենական խնդրոց մէջ սահմանափակ և քաղաքայիններուն մէջ անսահման իրավասութիւն ունին և կը բաղկանան մէկ

անդիմացի նախագահէ և երկու տեղացի անդամներէ , մին յօյն , միւսը թուրք:

Գաւառային գատարանի նախագահն առանձին , կամ միշայն երկու անդամները կրնան վճիռ արձակել . այն պարագային մէջ՝ գատարանը կը կոչուի Գատաւորական Ասեւան (Magisterial Court) , որ միայն եղենական ինպրոց մէջ սահմանաւոր իրաւասութիւն մ'ունի :

Գիւղային գատաւորները սահմանաւոր քաղաքային իրաւասութիւն ունին . միայն Յ ոսկիի գատաեր կրնան վճուել :

Խրաբանչխր գատառ ունի խոլամական գատարաններ ալ (Մահքէմէի Շէրի) օրոնց կը նախագահեն գատարները և միայն կրօնական հանդամանք ունեցող գատերով կ'զբաղին :

Մահմետական գլխաւոր գատաւորը (Նայխալ ի Գըպըրս) մեծ նշանակութիւն և պատիւ կը վայելէ :

Մահմետականաց բարեգործական (Վագֆ) կալուածներսւն համար պաշտօնարան մը կայ ընդ հսկողութեամբ անդիմացի արկդակալին և ընդ անօրինութեամբ մահմետական Մուշասեպիին : Ասոնց հասոյթները — տարեկան 2000 ոսկի գրեթէ — կը ծախուին խոլամական հաստատութեանց նարագութեան և այլ պէտքերուն :

Կառավարութեան լեզուն անդիմերէն է . բայց ամէն պաշտօնարաններու մէջ ալ կան յունարէնի և թուրքերէնի թարգմաներ : Պաշտօնական ծանուցումները երեք լեզուներով միանգամայն կը հրատարակուին :

Կիպրոսի բնակչաց բազմութիւնն , ամենահին թուականներու մէջ մինչեւ 3 միլիոնի կը հասնի եղեք ըստ ոմանց : Լուսինեան իշխանութեան օրով 600,000 կամ մէկ միլիոն մատցած կը հաշուեն : Խսկ հիմայ 237,022 հոգի է ըստ վերջին փիճակադրութեան (1901) : Այս բնակչութեան 182,739ը յոյն են , 31,399ը մահմետական և 2974 ը

զամազան ազգէ (մարոնի , լատին , հայ , անդիմացի , հրեայ են) :

Կիպրոսի յոյն եկեղեցւոյն հոգեոր իշխանութիւնը անդամին է և լորբեպիսկոպոսը ինքնազլուի : Այս առանձնաշնորհումը որ արդէն Եփեսոսի Ժողովէն (431) վաւերացուած էր՝ վերահաստատուեցաւ Զենան կայսրէն ալ , երբ Կիպրոսի մէջ նահատակուած Բաննարապա առարկելոյն մարմինը և ասոր կուրծքին վրայ Մատթէոսի Աւետարանին մէկ օրինակը գտնուեցան (478) :

Կիպրոսի եկեղեցին իր անկախութիւնը պահպանելու համար երկարատես պայքարը մղած է Անտիոքի պատրիարքաց գէմ: Ի վերջոյ , լուսինեան և վենետական շրջանին՝ հալածանք կրած է լատին կրօնականներէ , երեսն այնչափ խստիւոր մարմնաւոր իշխանութիւնն խակ հարկադրուած է միջամտելու ի նպաստ յունաց : Այս աններոզութիւնը կղղերնակ մեծամասնութեան ատելի գարձուց Արեմինեանները և դառն հետեանը ունեցաւ Օսմանիեանց յարձակման միջոցին : Անէ յետոյ Լատին տարրը տկարացաւ և յոյն եկեղեցին գորացաւ : Հիմայ կղղին ունի յունական 607 եկեղեցի և 94 վանք : Վանքերուն մէջ ամենչն հօշակաւորն է Քիքը , ծով վին 4360 ոտք բարձր գիրքի վրայ : Հող կը զտնուի Ս . Ղուկասի գծագրած Աստուածածնի պատկերը , զոր Աւերսիս կոմինոս ընծայած է 1081 ին : Հատ նշանաւոր է Մաշերայի վանքն ալ , ծովէն 2250 ոտք բարձր :

Մահմետականները Կիպրոս մտած էին՝ նախ 649ին Առերիոյ արաբացի կուսակալին առաջնորդութեամբ . յետոյ 1423 ին՝ Եղիպատոսի սուլթանին հրամանաւ , սակայն իբրև ժաղովուրդ՝ հաստատուեցան 1570 ին , երբ Օսմանեան բանակը նուազեց կողմէն Տեղացի բրիգանձէց մէկ մասն ալ հաւատափոս լինելով՝ իրառուած է ասոնց մէջ : Հիմայ կղղին ունի 209 մշտիլ ու 23 քիքեկ և մէկարէս :



Նշանաւոր է Հայարե Առշիրան տիկնոջ գամբարանը, Լաթինաքային չորս մղոն հեռու։ Սա խալամաց մարդարէին աղքականներէն էր և իր ամուսնոյն հետ 649 ին կը գտնու։ Էր արշաւող արար բանակն մէջ։ Զորիէն իբալով մեռաւ, և թագուած տեղը ուխտատեղի գարձաւ։

Կիպրոսի հին բնակիչներուն մէջ խառնուած են Եւրոպացիներ ալ։ Քարեասի կողմերը տեսնուած շիկահեր և կապուտաչուի գիւղացիները կը ներկայացնեն Միջին գարու ֆրանսական տիտղու։ Լարնաքայի մօտերը և ուրիշ տեղեր կը բնակին տարբեր հասարակութեան մը անդամներ, որոնք կ'ըսուին Լիսո-Բաւրաքի (կանեփ-բամպակ), և էսո-մահմետական կէս-բրիստոնեայ կրօնք մ'ունին. Թլփատութեան և մկրտութեան, նիքեանի և պսակի, օրուայի և պահքի պահնչումները միանգամայն կը կատարեն։ Անզիւթական վարչութեան ներքն ասոնցմէ շատ քիչեր գարձած են բրիստոնէութեան։ Ասոնք բանի խումացած լատիններու ցեղէն են։

Կղղերնակ հասարակութեանց մէջ նշանակելի են Մարտիններն ալ, որոնք Լուսինեան առաջին թագաւորին, Գուշառնի պաշտպանութեամբ Լիբանանէն եկած են մեծ թըսով — 60,000 հոգի — և վաթուուն երկու գիւղեր կազմած։ Հիմա ասոնք հազիւ 1130 հոգի մնացած են, և մեծ մասամբ կը բնակին կիպրոսի արևմտեան հիւսիսային անկիւնը, Քօրմաքիթի գիւղը և անոր ըրջականները։ Ասոնց ումանք կը խօսին լեզու մը որ յունարէնի և արաբերէնի խառնուրդ է։ Ունին 8 եկեղեցի և 4 վանք։

Կիպրոսի կաթոլիկները 824 հոգի են և կը գտնուին Երուսաղէմի լատին Պատրիարքին իրաւասութեան ներքի։

Հրեայք կղղին մէջ հաստատուած էին 230 ին Ն. Բ., երբ Պտղոմէոս Լակոս գերի ընտանիքներ բերաւ Երուսաղէմէն։ Ասոնք իսլամոյ շատ զօրացան և Տրայիանէս կայ-

ոնք օրով ջարդ մը տուին հեթանոս բնիկներուն (117 Յ. թ.)։ Բայտ Ք.սիփիլինոսի՝ զոհերուն թիւը 240000ի կը հասնի։ Այդ գէպերին վրայ կիպրոսի մէջ հրէից բնակութիւնը արգիլուեցաւ։ Բայց 1160ին նորէն մուտ գտան, Ճենսալցիք 1360 ին 100000 տուքազ դրամ կորդեցին ասսցմէ։ Երկու զար վերջ, վեհստացոց օրով, աւելի նըւազած էին և գեղին փաթթոց կրելու հարկագրուած։ Վերջերս Հրեական ընկերութեան մը (Jewish Colonization Society) օգնութեամբ հաստատուեցաւ նոր գաղութ մը, որ այժմ 15 տոնէ կը բաղկանայ։

Եղղերնակ անզիւթացիները միմիայն վարչական և զինուրական ծառայութեանց մէջ կը գտնուին և 213 հոգի են։

«Բարենորոգեալ Բողոքական» կոչուած յարանուանութեան պատկանող երկու ամերիկացի միօրոնարներ որ Լարնաքա կը բնակին կ'առաջնորդեն այդ հասարակութեան, հայ և յոյն օգնականներ ունենալով ինիկոսիս։

Կրթութեան մասին կիպրացիք շատ ես մնացած են, թէն վերջերս բաւական հոգ կը տարուի զպրոցներ բանալու։ Կան երկու կրթական ֆողովներ (Board of Education), մին յունաց և միուը թրբաց համար։ Առաջինին անդամներն են՝ կառավարութեան Գլխաւոր Քարտուղարը (Chief Secretary), յունաց Արքեպիսկոպոսը և ժողովրդին ընտրուած ինը յոյնիր։ Երկրորդին անդամներն են՝ դարձեալ Գիւսաւոր Քարտուղարը, մեծ Գաւառն, Միշքրէն և ժողովրդին ներկայացուցիչ եօմը թուրքեր։ Յունական և թրբական զպրոցներուն վրայ նշանակուած են մէկ մէկ անզիւթից Տեսուչներ (Inspector of Schools)։ Ասոնք կրթական ժողովներուն ներկայ կը գտնուին, բայց որչշանց մէջ ձայն չունին։ Ծրագիր կազմելու, նոցաստներ ինպրելու, պաշտօնեայ նշանակելու և նոր զպրոցներ բանալու իրաւունք-

ՆԵՐԸ ԺԱՂՈՎԻՆԿԵՐՊՈՒՆ կը պատկանին:

Դպրոց յաճախող երկսեռ յոյն աշակերտաց թիւն է 16375, թուրքերուն է 5130: Առաջիններուն համար կը ծախսուի տարեկան 10560 անգլ. սոկի, որուն 3120 ը կառավարութեան սնառուիչն նպաստ է: Ակրջիններուն համար կը ծախսուի 2633 սոկի, որուն 1100 ը նպաստ է:

Հայ և Մարոնի զպրոցներն ալ նպաստ կ'ստանան կառավարութենէն, աշակերտաց թուոյն համեմատութեամբ: Տարրական և նախակրթական զպրոցներէ զատ Նիկոսիոյ մէջ հաստատուած են յունական Էլիմնաղիոն և թրբական Մէրքիփի Խտատի: Աթէնք և Բարիլ ուսում առած յոյն երիտասարդներ ալ կան, որոնք գլխաւորաբար կ'զրադին բժշկութեամբ և փաստաբանութեամբ: Այս տեղ ալ զդալի է արհեստական կամ հողագործական ուսմանց շրջութիւնը, և ամեն ազգէ ուսանողներն ալ իրենց նպատակակէտ ունին կառավարական պաշտօն մը, կամ ազտական ասպարէզ մը և կամ գէթ ուսուցչութիւն:

Նշանակելի է Անդիխական նոր վարժարանը, Արժ. Ֆ. Նիկամի սեփական, որ ըստ քաջալերուիր յոյներին, և սակաւաթիւ աշակերտաներ ունի: Մր. Նիկամ կառավարական ջեսուչն է կիպրոսի բոլոր յոյն զպրոցներուն և անգլիերին գիշերային դասարանին, ուր ձբիալէս կ'ուստին կառավարութեան պաշտօնաբաններու մէջ գտնուող ամէն ազգի երիտասարդներ:

Նիկոսիոյ մէջ ասոնցմէ զատ կայ անզիխական տարբական զպրոց մը Միջնորր Օրիորդներու վարչութեան ներքի, ուր կը յաճախեն նաև յոյն և թուրք ազայք:

Լատին մայրապեաները (Ո. Յովաչփի քոյրեր) աղջկանց գիշերօթիկ զպրոցներ կը վարեն Նիկոսիոյ, Լարնաքայի և Լիմասոլի մէջ: Ջրանչխիկան կրօնաւորներն ալ յիշեալ

քաղաքներուն մէջ ունին վանքեր և ցերեկեայ դպրոցներ մանչերու համար: Լարնաքայի մէջ վերջերս Ամերիկեան միախանարներն ալ վարժարան մը բացին:

Կղզիին մէջ պաշտօնական երեքլեզուեան թերթէն (Cyprus Gazette) զատ կը հրատարակուին ութ յունարէն և մէկ թրքերէն լրագիրներ (շարաթաթերթ կամ ամասթերթ): Ամենէն շատ տպուածն է ֆօնի դիս Փիրուու (1000 օրինակ):

Կիպրացիներու բարուց վրայ Եւրոպացի ուղևորները, թէն տեղ տարակարծիք, բայց ընդհանրապէս աննպաստ կը խօսին: Անոնց նահապետական կեանքը, ընտանեսիրութիւնը, հիւրասիրութիւնը և գիւրամատչելի բնաւորութիւնը կը խոստովանին, բայց կը զատապարտեն արմատացած մզութիւնները, - ստախօսութիւն, անհաւատարմութիւն, աւազակաբարոյութիւն, աղահութիւն, վրէժինդրութիւն ևայլն: Այս կարծիքները վերապահութեամբ լսելով հանգերձ՝ ակնայացու կը տեսնենք թէ կղզեցիք առհասարակ զանգաղ, անհոդի, և յետամնաց մարդիկ են: Ուշագրաւ է նաև հիներէ մընացած վուս բիրյոս (կիպրացի կով) բացատրութիւնը: Նախնի ժամանակներու ճախութիւնն ու վերջին գարերու ստրկութիւնը՝ ասոնց զովելի բնաւորութիւնները պակսեցած են: Աստղիկի ծննդավայր համարուած և անոր պաշտաման խրախճանութիւններուն թատր եղած այս փոքրիկ աշխարհին մէջ՝ անբնական չէ որ հեշտասիրական հրայրքն ալ ժառանգութիւն մնացած լինի կիպրական արդի սերնդին: Նոյնապէս սակաւաթիւ չեն անոնք որ անվիսական վարչութեան ազատական օրէնքները կը զեղծանեն տղիտաբար, այնպէս որ ցաւալի համեմատութեամբ աճած կը թուին բարոյական գմբազութիւնները՝ բնաւանիքներու մէջ և կուսակցական կոիները հասարակութիւններու մէջ:

Կացունիստ, հազուստ-կապուստ, և կենցաղավարութեան

պայմաններ՝ նախնական վիճակէն շատ հեռացած չեն, և յունական, թրքական և սուրբիական ճաշակներու խառնուրդ կը ներկայացնեն: Վառ գոյները — կարմիրը, դեղինը, կանաչը — նախընտրուած երանգներն են: Բազմատեսակ անշնորհք փաթթոցիկներ, կոշտ ու վիճիսարի կօշիկ, կապոյտ կտաւէ շալվար, — ասո՞ք հասարակ կիպրացիներու սրոշիչ տարազը կը կաղմեն: Այսոց գէմ քաղաքացիներու լաւագոյն դասակարգին մէջ արգուզարդ — մինչև խոկ պճնասիրութիւն չը պակսիր: Թուրքերն ալ իրենց սովորական հին զգեսաները կը կրեն. կիները ճերմակ կամ գունաւոր ջարշաժներով կը փաթթուին ու թէե երեսի ծածկոց չունին՝ խնամքով կը փակեն իրենց գէմքը: Այստեղ չը մոռնամ ըսելու որ մարմնական վայելչութեան և շնորհի մասին ալ յատոկ պարձանք չունի կիսրոսի ժողովուրպը: Կղզին յաջորդաբար զրաւող ազգերուն արինախառնութիւնը զեղեցիկ սերանդ չէ դոյացուցած: Այրերը արբեցութեան և կիները ծանր աշխատութեան պատճառով շատ կանուխ կը կորսնցնեն իրենց թարմութիւնը: Ասկայն պէտք է որ այս տեղ ալ յարգենք բացառութիւնները:

Կիսրոս այժմ բաժնուած է վարչական վեց շրջանակներու, իւրաքանչիւրը մի կառավարչի (Commissioner) ներքի: Այս շրջանակներն են Նիկոսիա, Լարնաքա, Լիմասոլ, Բաքոս, Քիրենիա և Ֆամակոսա:

Նիկոսիա կամ Լեֆքորչա, համանուն շրջանակին և միանց գամայն կղզիին մայրաքաղաքը՝ հաստատուած է մի զեղատեսիկ գաշտի մէջտեղ, որ կը ձգուի լայնանիստ՝ արևմտեան և հարաւային ուղղութեամբ 8—18 ժամ մինչև թրօսառու լեռնաշղթան, իսկ հիսուսային ուղղութեամբ 2—4 ժամ մինչև Քիրենիան գօտին: Այս դաշտին վրայ էր որ կը կատար

ուէին հին ասպետներու ձիախաղութեանց մրցահանդէսները և որորդական եռանդուն արշաւանցները: Այս հարթավայրին և անոր նզերապիծ բարձունքներուն վրայ գիշերներով պարզուած կը մասին Յոսպէի կոմսին նման կենցաղասէրներու վրանները՝ 200 թռչնավարժներու և 250 ծառաներու բանակով և 300 քերծէներու երամակով: Նիկոսիոյ քնակաց թիւն, մերձակայ երեք գիտներուն հետ՝ այսօր հազիւ կը հասնի 17,000 հոգիի: Լուսինեանց շրջանէն մընցած պարիսպը և անոր զուգընթաց նորատունկ պուրակին և կալիսատուները, նոճները և պղպեղնիները (schionus molte), նոր ձեւերով կառուցուած և ծաղկանցներով շրջապատուած հանրային ու մասնաւոր շէնքերը, քաղաքին ամեն կողմէն բարձրացող արմաւենիները, նարնջնիները, և ալյազան ծառերը — քաղաքիս մասին շատ նպաստաւոր գաղափար կուտան նորեկ ազեռին, երբ նա գեռ չէ աեսած ծուռ ու մոռ փողոցները, ալտոտ խանութները և ցած ու հողաշէն տներու թաղերը: Ի հարկէ, այս քաղաքն ունեցած է մի ոգեւոր շրջան, տեսած է Միջին դարու ազնուականներուն և իշխանաւորներուն կեանքը, որպացած է փայլուն զօրականներ և փարթամ մեծատուններ, վերջապէս կատարած է նշանակելի զեր մը՝ լատին Արիելքի կրօնական, զինուրական և առեւտրական գործունէութենէն մեացած գիսաւոր յուշակերտն է Այա-Սօփիա մզկիթը, վաղնջական Ս. Պոփիա եկեղեցին, — ԺԳ. գարուն մէջ զոթական ճարտարապետութեամբ շինուած և ճոխ քանդակներով զարդարուած: Ենքը թուրքերու յարձակման ժամանակ (1571) բաւական վաստակած է և քանդակներու մեծ մասը եղծուած խոկ զանդակատան տեղ՝ բարձրացած է մինարէն: Այա-Սօփիայի քովը է Ա. Նիքոլա եկեղեցին, որ կը գործածուի իբրև

շանմարան։ Նշանաւոր են լ. կատարինէ եկեղեցին, մզկիւն
թի վերածուած, նաև յունաց հիմակուան Մայր եկեղեցին։
Լուսինեաններու օրուլ կանգուն եղող 250 եկեղեցիներէն և
մատուռներէն՝ որիշ չենք շը տեսնուիր այժմ։ Արքունի պա-
լատէն մնացած է կամարակապ դռնանցը, նորման գոթա-
կան ոճուլ շինուած։ Քաղաքն իր հին տարածութեան մէկ
երրորդ մասը միայն կը գրաւէ այսօր, թէկ հետզհետէ նոր
շնորհը կը շինուին դուրսը, զէպի արևմուտք և հարաւ-
ուած է Պայրագուարի մզկիթը, առաջին անգամ բարձրա-
ցող և սպաննուող օսմանցի զինուրականի յիշատակին։
Պարիսպին սասրուալ, Պափի (Բափոսի) զրան մօտն է Տնկա-
րուծական Պարտէզը, իսկ զրան դիմացն է նորաբաց Հան-
րային ձեմալվարը կամ Պարտէզը։

Քաղաքին ջուրը լաւ է։ Օղն ալ առողջ կրնայ ըստիլ,
բայց առհասարակ գիշերային խոնաւութիւնն ու ամառ-
ուան սաստկութիւնը զգաւութիւն կը պահանջէն։

Առողջապահական տեսակէտով ցաւալի է կոյսութիւնը
շգոյսութիւնը քաղաքին մէջ։ Ամեն տեսակ աղտաբութիւնը
կ'ամբարուին տուններու մաննաւոր հորերուն մէջ, և երբ առ
ոսնք լեցուին՝ նորերը կը բացուին բակին որիշ կողմը։
Անգլիացւոց տները, նոյնպէս զպրացներ և հասարակային
շնորհը՝ սովորաբար հոր չունին ճեմիշներու համար, այլ
աղբի փոքրիկ դայեր, որոնք ամեն օր քաղաքէն գուրս կը
փոխարտուին թաղապեսութեան ծառաներու ձեռքով։

Նիկոսիոյ մէջ ապրուստի զինը Թուրքիոյ ներքին դաւառ-
ներուն հետ բազգատելով աւելի թանկ է։ Խանութիւնները բազ-
մաթիւ են, ասոր համար խանութպանները համեմատարար
գանդաղ սպառում ունին և ապրանքներուն վրայ մեծկալի՝
շահ դնելու հարկադրուած են։ Երաշտ տարիներու մէջ հա-

թին զինը կը բարձրանայ։ Ներածեալ ապրանաց զիներն ալ
փոփոխութեանց ենթակայ են, քաղաքին մէջ զանուած բա-
նակութիւնն մհծապէս ազգուելով։

Նիկոսիա ունի մի շատ սրճարան և օթեւան և մի քանի
մաքուր ճաշարան և պանդոկ (օթէլ) որոնց մին է « Հայկական
պանդոկ »ը, հայոց թաղին մէջ։ Իբրև կանոնաւոր թատրոն՝
կայ Բարատարուլոյի շնորհն ուր յունական և իտալական
այցելու խումբեր երրեմն ներկայացումներ կուտան։ Անդիա-
ցիները, Յայները, Թուրքերը յատուկ ընթերցատառներ
կամ քիւաներ ունին։ Եկեղեց հաստատուեցաւ հայկական
Խորան—Ընթերցատան մը։ Կայ նաև Մարմարական
հրապարակ մը (Կիմասպիրիսն), յունաց սեփական։

Քաղաքին հարաւային արեւմտեան կողմն է ընդհ. Կառա-
վարչին բնակարանը (Government House), բլուրի մը
վրայ, ծառազարդ շրջափակի մը մէջ։

Քաղաքին նշանակելի նոր շնորհը են՝ կառավարու-
թեան կեղրունական պաշտօնատունը (Office), Նիկոսիոյ
գտառ, վարչութեան պաշտօնատունը (Գօնադ), Ֆրանչիսկ-
եան—լատին եկեղեցին, խոյամական Մահմետէն, հիւանդա-
նոցը և բանարը։ Ժողովլական միթինի մը որոշման հա-
մեմատ հնութեանց թանգարան մը պիտի չինուի հանդա-
նակութեամբ, ի յիշատակ վիլթորիա թագուհոյն։ Առայ-
ժմը, իրու թանգարան կը ծառայէ Հայոց թալին մէջ տուն
մը որ կը պարունակէ 6000 կտոր հնութիւններ։ (*)

(*) Կիպրոսի հնութիւնները մասնաւոր տեղ և կարեռութիւն ունին
Հնագիտութեան մէջ։ Առոնք կը բաղկանան արձաններէ, քարերէ, և ոսկե-
զին, խեցեղէն ու ապակեղէն զարդերէ, նոյնպէս և արցունքի շիշերէ։ ընդհանրապէս գերեզմաններէ հանուած։ Ամենահին առարկաները Փիսիկ-
եան դոցը կը կրն։ Եւլենականն ու Հռոմէականը կը յաջորդեն անոնց։
Հատ մը քարեր և արձաններ փոխադրուած են արդէն և ըստակ և Ամերիկա։
Այժմ արդիւուած է հնութեանց արտածումը։ Վերջերս (1901) Նիկոսիոյ
մօտ կարեռ պեղումներ կատարեց ծանօթ հնագէտ Պ. Գամկէլ Անլար

Նիկոսիոյ մէջ կայ Յիմարանոց մը, 470 պատապարեալ՝ ներով, և քաղաքէն գուրս «Բորոտներու ագարակ» մը ուր շնուռած են կոկիկ տուներ, եկեղեցի և մզկիթ։ Այս տեղ մինչեւ մահ կը պահուին ողորմելի բորոտները, այժմ թուով 88 հոգի։ Նոր հաստատուեցաւ մի Անկելանոց։

Լարնաքա, կղզին արևելեան հարաւային ծովեղերքին լրայ, համանուն շրջանակին կեղրոնն է և զիմաւոր նաւահանգիստ, թէն շոգենաւերուն չընծայեր ապահովութիւն երր օգը փաթորկալից ըլլայ։ Ունի իր 8000 բընակիչ։ Այս քաղաքը հին կիտիոնն է, Սաոյիկեանց հիմնադիր Զինոնի հայրենիքը։ Աւանդութիւնը հոս կը բերէ Ղաղարոսը և հոս կը թաղէ զայն երկրորդ և վերջնական մահէն յետոյ։ Իր անուան կառուցուած եկեղեցին հաւատացեալներու ուխտատեղի է։ Լարնաքայէն Նիկոսիա, ինչպէս ուրիշ շատ տեղեր ալ, շինուած է կառուզի մը 26 միլոն, որ կը տեւէ 4 ժամէ աւելի։ Թիէն փոքրիկ քաղաք և խոշնաւութեան ենթակայ՝ ոմանք Նիկոսիայէն աւելի կը սիրն այս տեղը՝ իրեւ նաւահանգիստ։ Քաղաքը կը բարկանայ երկու մասէ, — Աքալա (նաւահանգիստ) և բուն Լարնաքա կամ Թուզլա (աղալիմ)։ Երկու մասերը իրարմէ կը զատուին իր մէկ մինչ հեռաւորութեամբ։

Լարնաքայէն մինչև Բօրթ-Մայիս 258 մզնն է, և իր 24 ժամ կը տեւէ անգլիական փոքր շոգենաւերով։ Մինչև Խոկէնաէրուն 200 մզնն է, մինչ Պէյրութ 120 մզնն։

Լիմասոլ, կղզին երկրորդ նաւահանգիստն է հարաւային ծովեղերքին լրայ։ Ունի 8300 բնակիչ։ Այս քաղաքն աւելի եւրոպական ձեւ ունի։ Գինիի արտածութեան

(M. Camille Enlart), Ֆրանսական կառավարութեան կողմէ։ Մի արժեքաւոր ճառութիւն է կալինի գիշը գտնուած կիպրական Դիտուէին, Անօտիյուննեն (Ծովի փրփուրէն ելքը)։

գործն ալ մեծ մասամբ հոս կը կատարուի։ Բոլոր շոգենաւերը՝ Լարնաքայէն առաջ կամ վերջ հոս ալ կը հանգիպին։ Այս քաղաքին մէջ կայ Ֆրանսասոնական օթեակ մը (Craft Lodge)։ Լիմասոլէն Լարնաքա կը տեւէ ծովով 4 ժամ։ Բաֆոս եւ Քիրենիա նաւահանգիստները, առջինը կղզիին արեւմտեան կողմը, երկրորդը՝ հիւսիսային։ մեծ կարեւորութիւն չունին և սովորաբար առավաստաւոր նաւերով միայն առեւրական հաղորդակցութեան մէջ են։

Ֆամակոսրա կամ Մալուսա, կիպրոսի արեկենան ծովեղերքին լրայ, նշանաւոր է իր անցեալ ծոխութեամբ։ Նաւահանգիստն ալ շատ ընդարձակ է, բայց հիմայ յատակը լեցուած լինելով շոգենաւերու երթեւեկութեան յարմար չէ։ Հին ամրութիւններուն, եկեղեցիներուն, և ուրիշ հըսկայ շնորհերուն հետքերը կամ աւերակները հիացում պատճառած են հնագէտ ուղեւորներուն։ Բնակիչները թուով 100 հաղարի կը համակին երրեմն, հիմա 871 հոգի են։ Մօտակայ Վարօշիա գիւղաքաղաքը, որ Ֆամակոսթայի մաս կը համարուի՝ 2723 բնակիչ ունի, մեծ մասը թուքը։

Ֆամակոսթայի նաւահանգստին յատակը մաքրելու ձեռնարկուեցաւ այս տարի։ Հետեւար քիչ ատենէն պիտի վերակենդանանց և նորէն պիտի լինի կղզիին առաջին ծովաբաղադրը։

Վաճառականութիւն

Առեւտրական գործունէութեան մասին՝ Կիպրոս կղզին եւնեցած է շատ նշանաւոր անցեալ մը: Միջին դարերուն, երբ Արևելքի լատին իշխանութիւնները ինչան և մահմետական վեհապետները գօրացան՝ Եւրոպացի վաճառականներն սկսան հեռանալ վուրիոյ և Եզդիպուսի շահաստաններէն և իրենց մթերանոցները հիմնեցին աւելի ապահով կէտերու վրայ: Այս կէտերն էին Հայկական կիլիկիա և Խիոլոս, երկու քրիստոնեայ աշխարհներ, որոնց վերջինը իր մեկուսացեալ դիրքի շնորհիւ աւելի զօրաւոր և աւելի երկարակիեց: Հետևաբար, ասիական ու եւրոպական վաճառականութեան խառնարան մը դառնալով՝ կիպրոս մեծ կարեորութիւն ստացաւ և անսահման հարստութիւն զիզեց: ԺՊ. զարու հեղինակներէն մին՝ կիպրոսի ծոխութեան մասին խօսելով, կը վկայէ թէ Նիկոսիացի ազնուականի համար տարեկան 3000 գուլդին եկամուտն այնչափ միայն նշանակութիւն ունէր, որչափ որ մի քանի շինուի կամ քրանզի հասոյթը պիտի ունինար ու բիշ տեղերու համար: Այն ատեն կդպիին առաջին վաճառատեղին էր ֆամակոսթա նաւահանդիսար, որուն հարստութիւնը պատմելու առթիւ յիշեալ հեղինակն այսպէս դրած է: « Կըսեն թէ այս քաղքի բնակիչներէն մէկին աղջիկն նշանաւուքին ատեն օժանեցաւ այնպիսի աղամանդներով որ միանսայի արքայական թաղի գոհարներէն աւելի կ'արժէին: Ֆամակոսթայի վաճառականներէն մէկին համար ալ կը պատմուի թէ կայսերական ոսկեղին զըն-

տակ մը ծախսեց սուլթանին՝ 60,000 գուլդէնի: Գնդակին վրայ կային չորս գոհարներ— զմբուխտ, կարկեհան, մարդարիտ և յակինթ: Մի քանի տարի ետքը՝ զայն ետ ստաշնալու համար սուլթանին առաջարկեց 100,000 գուլդէն բայց մերժուցաւ: Ուկեհամուկ զիստակներու, ծանրագին կերպաններու և բազմասեսակ գոհարներու առատութիւնը եթէ նկարագրեմ անհաւասարի պիտի թուի: Միայն հաւուէն (ալօք, հօռ աղաձը), որ ուրիշ տեղեր մեծ արժէք ունի, հոս այնչափ հասարակ է որ անոր յարդ չեն ընծայր:

Այդ անցած օրերու հսկայական գործողութեանց շրջացուցիչ ճոխութեանց փոխարէն՝ այսօր կիպրոսի մէջ կրպարզուին առևտրական դանդաղութիւն և ակնայցյ չքառարութիւն: Երկրագնոտիս հաղորդակցութեան ճամբաներուն և միջացներուն, ինչպէս և վաճառականական և քաղաքական պայմաններուն միծամնեծ յեղաշրջութեանց հետեւանօք, այս փոքրիկ կղզին ի հարկէ չըր կրնար պահել իր նախկին կարեորութիւնը, բայց և այնպէս կարելի էր ապահովել գոհացուցիչ վաճառականութիւն մը եթէ ինսամբ տարուէր անոր բնական և արհեստական արտադրութիւններուն: Դժբաղգաբար այդ ինսամբը չէ տարուած դարերէ ի վեր և այսօրուան առևտրական կեանքը ոգեւորելու համար բաւական ժամանակ, զրամազլուի և չանք հարկաւոր են: Ըսի արդէն թէ կիպրացին որչափ անտարբեր է արհեստական զարգացրան, նոյնը կրնամ կրկնել նաև առևտրական գործունէութեան մասին: բայց այս պարագայի մէջ, պէտք է խոստովանիլ որ անխուսափելի գժուարութիւններ ալ կը ծանրանան ժողովրդին վրայ, զժուարութիւններ՝ որոնց դէմ մաքառելու համար կառավարութեան ջանքը և արտաքին գրամազլի ոյժը պէտք են: Աքմանեաց արտածութիւնն ոյ-

Կղզին առևտրական մեծագոյն շարժումը պիտի գոյացնէր՝ զիներու տարավայրման անկման պատճառաւ սովորականէն քիչ հասոյթ կը բերէ տարիներէ իվեր։ Պէտք չէ մոռնալ նաև որ անձրեի նուազութեան տարիները, հասոյթի այդ աղբիւրն ալ տեղ տեղ կը ցամքի և գործի հրասլարակն աւելի ես կամայանայ։ Այս անպատճութեան վրայ տեղուր մաքսային տարօրինակ դրութիւն մ'ալ որ կղզին կառավարական ելումուտքը հաւասարակշխու պահելու համար անփոփոխելի է առ այժմ։ Կիսրոս, իրի օսմանիեան երկրի մաս, սովորական մաքսը կը ստանայ թէ՛ անզիւտկան և թէ ուրիշ երկիրներու ապրանքներէն։ Կիսրոս, իրի վարչութեամբ անջատեալ երկիր, սովորական մաքսը կը ստանայ նոյնպէս օսմանիեան վաճառքներէն և ինքն ալ սովորական մաքսը կուտայ ինչպէս ուրիշ երկիրներու նոյնպէս ալ Թուրքիոյ նաւահանգիստներուն մէջ։ Այսպէս, 10 առ հարիւր մաքս վճարելով նախնական նիւթ մը ստանալէ յիսոյ, բանուած վիճակի մէջ Թուրքիա ներսուծելու համար ալ պէտք է վճարել 8 առ հարիւր։ Այս արգելէս և վնասաբեր դրութեան շարունակումն անհնար կը լինէր թերմա, եթէ գանուէին այնպիսի արհեստաւորներ կամ գործարանատէրներ որոնք արտածելի մեծաքնակ վաճառք պատրաստելու շափ ճարտարութիւն և դրամ ունենային։

Նորեկ հայ վաճառականներու կողմէ վերջին վեց տարուան միջոցին երկու անգամ զիմում եղաւ կառավարութեան, որ այս մասին մի զիւրութիւն ընծայուի, բայց մինչև հիմա ինչպի՞ն անհետանք մնաց։

Կիսրոսի առևտրական շարժման մասին մի գաղափար տալու համար կը նշանակեմ վերջին տասը տարիներու արտաքին գործառնութեանց դրամական արժէքները։

Երաժողութիւնը (*)	Արտաժողութիւնը (†)
(անգլ. ոսկի)	(անգլ. ոսկի)
Հազար	Հազար
1893ին	317
1894ին	272
1895ին	242
1896ին	240
1897ին	263
1898ին	288
1899ին	290
1900ին	290
1901ին	364
1902ին	403

Կղզին արտաքին վաճառականութեան մեծագոյն մասը կը կատարուի Անգլիայ հետ։ Ետքը կուգան Թուրքիա, Եգիպտասոս, Ֆրանսա, Աւստրիա, Յունաստան և այլն։

Վերջին մէկ տարուան (1901) միջոցին կիսրոս հանդիպած են 932 առագաստաւորներ, և 220 շոգենաւեր։ Առաղաստաւորները մեծ մասամբ օսմանիեան եւ կիսրական էին։ Շոգենաւերու 106ը անզիւտկան էին (մեծ մասամբ Bell's Asia Minor ընկերութեան), 42 ը աւստրիական (Lloyd), 41ը՝ ֆրանսական (Messageries Maritimes), միւսները՝ յունական, օսմանիեան և խոտական։

Անգլիական Bell's ընկերութեան շոգենաւերը փոքր են։ Ասոնք կը կատարեն այժմ շաբաթական թղթատարական երթեւելը Եցիպտոսի և Կիսրոսի մէջտեղ, տարին 1500 ոսկի նախատ ստանալով կառավարութենէն։

Վարձուած է մի փոքր շոգենաւեր և որ կղզին եղերը շրջան կ'ընէ և բոլոր նաւահանգիստները կը հանդիպի։

(*) Հեղուան դրամի ներածութիւնը և արտածութիւնը պահպան կազմուէն դուրս են։

Արտածելի արմատաց մէջ՝ կիպրոսի ցորենը բնափիր տեսակ կը համարուի, կարծք թականը ըստին կը նմանի և անդամական կակուղ ցորենին հետ խառնուելու կը յարմարի:

Այս ցորենին զլխաւոր հրապարակն է ֆրանսա, բայց վերջերս Անգլիոյ մէջ ալ յարտ գտած է: Եթէ կամնելու եղանակը բարեփոխուի և հիմակուրնէն քիչ քարոտ լինի, արժէքը կը բարձրանայ: Գարին զլխաւորապէս կը զրկուի թուրքիա և Եղիպատոս: Բլրային դարին կը գործածուի գարեջուր շինելու և Անգլիոյ մէջ բաւական կը ծախուի: Վարսակի բերքն ալ կարեւորութիւն ունի և մեծ մասամբ ֆրանսա կը զրկուի: Եղիպատոս (carouche, քիչ պոյշնուզու) կիպրոսի տուածին վաճառքն է և իթէ զինը ինկած ըլլար՝ մեծ հարստութիւն պլատի բերքը: Եղիպատոսի բերքի կանոն աշելին կը զրկուի Անգլիա: Կիպրոսի դինին որ համբա հանած է, մեծ քանակութեամբ կ'արտադրուի, բայց պատրաստութեան անկատար եղանակին պատճառաւ Եւրոպայի մէջ յարտ չունի: Մայրո (սեւ) տեսակին հրապարակներն են Եղիպատոս, Թուրքիա և Յունական կղզին: Գոյսանանարիան կը զրկուի Խալիլա, Անգլիա, Աւստրիա, Թուրքիա և Եղիպատոս: Պանիրը համեղ է և մեծաքանակ կը պատի Թուրքիոյ և Եղիպատոսի մէջ: Զիթապատուը մի քանի տարիէ ի վեր քիչ կարտադրուի, ծառերուն տրուած խնամքն ալ թիրի է: Բամկակը բաւական կ'ածի, բայց արժէքը ինկած է: Մետաքսի խոզակին մեծ մասը կը զրկուի ֆրանսա, առոր տեսակը տուածին կարոի է:

Մասնաւոր ուշադրութեան արժանի և մեծ զարգացման ընդունակ գործ է անսառւներու արտածութիւնը: Եղիպատոսի համար կով, խոզ, ոչխար, ջորի, էշ և ուղար կ'ուզակ այս տեղէն, Թուրքիոյ համար ալ ջորի, էշ և ուղար կ'առավարութիւնը ամեն տաքի կը կազմակերպէ անառուն:

Ներու Ցուցահանգէս, և զրամական մրցանակներ կուտայ ամեն տեսակի լաւագոյններուն համար:

Ներածութիւններն ալ արտածութեանց համեմատական են և կարեոր գումար չեն ներկայացներ: Ամենէն աւելի արժէք ունեցող օտար ապրանքներն են բամպակեղէնք և բրդեղէնք:

Վաճառականութեան այս անկեալ վիճակին և ժողովրդին աղքատութեան համար շատ անգամ գանգատ կը լսուի անզիական կառավարութեան դէմ և տեղական լրագիրներու եւ Օրէնսդրական ժողովի նիստերուն մէջ կծու դիտողութիւններ կ'ուղղուին: Դժուար է ըսել թէ այս մասին անգլ. վարչութիւնն որչափ և ինչո՞ւ պատասխանառու է. բայց յայտնի է որ ժողովրդին պուրքերը բաւական ծանր են և հասոյթները՝ համեմատաբար չնշին:

Բնական է որ զրամի ընդհանուր նուազութեան մէջ շահամնդիր զաշխառուներն ալ ճշմարիս պատուհաններ զարձած լինին զրամազգուրի զասակարգին: Կառավարութիւնը հաստատած է մի Փոխառուութեան Արկղ հողագործական ձեսնարկութիւններու համար, բայց անոր ընծայած օգնութիւնը յոյժ սահմանափակ է, և անհրաժեշտ հարկ կայ մի Երկրագործական Դրամատան:

Կղզիին մէջ գոյութիւն ունեցող միակ Դրամատունն է Օսմաննեան Կայսերական Պանքան(*):

Անցեալ տարի հաստատուեցաւ ժողովրդին համար մի

(*) Օսմաննեան հեռագրատուններն ալ կը շարունակուին կիպրոսի մէջ բաց կղզին Լաթաքիայի (Սուրբա) հետ կապող ընդծովեայ թեւլը մի քանի տարի է խոզուած լինելով արտաքին եռուագիրները ցամաքի ամենամօտ քաշաքէն փոստի միջցուած կը հաղորդուին: Ասկէ զատ կայ մի անզիական հեռագրաթիւն ևս (The Eastern Telegraph Co.), որ աշխարհի ամեն կողմերուն հետ հաղորդակցութիւն ունի:

Հասարակաց համար Հեռուսուր (Թէլէֆոն) մուտ չէ գտած տակաւին:

Հանայողական Արկդ (Savings Bank), որ պիտի ընծունի մեծ ու փոքր գումարներ, — 300 սոկէն մինչև մեկ շնկուն, և տոկոս պիտի վճարէ 2 և կէս առ հարիւր: Թէ՛ գրամագուխը և թէ՛ տոկոսը երաշխաւորեալ են կառավարութենէն:

Կիբրոսի ժողովրդին աղբատութեան մեծագոյն պատճառ կը նկատուի 9,000,000 սոկոյ տարեկան հարկը որ կը վճարուի 0սմ. կառավարութեան հաշոյն:

Կղզին կառավարութեան տարեկան լնդհանուր ծախըը, այդ գումարին հետ միանալով՝ կը հասնի զրեխէ 220,000 սոկի, որուն զէմ ալ տարեկան լնդհանուր հասոյթը հիմա կը լինի իբր 180,000 սոկի: Բայց մընացած գումարը մինչև ցարդ կը վճարուի Անգլիայ պիտի կառական գանձէն: Այս առթիւ Անգլիոյ Գաղթային նախարարը այսպէս յայտարարած էր 4,98 ին:

«Կղզին այս երկրի ձեւըով կառավարուիլը՝ մեզի արքած է կէս միլիոնէն աւելի (սոկի), և կղզեցիք շատ տպերախտ պիտի լինէն եթէ չը ճանչնային իբրեւց համար այս երկրի կատարած զոհութիւնները»:

Անգլիոյ կառավարութեան համոզումն այն է որ կղզին մեծապէս օգտուած է վերջին քսան տարուան միջոցին: Արդի կառավարիչը (Sir William Haynes Smith) Օրէնսդրական ժողովին առջե այսպէս խօսեցաւ 1901ի բացման ձարին մէջ:

«Կիբրոս կը յառաջանայ: Դուք կառավարութեան ջանշիքուն գործակցելով կրնաք մեծ միում տալ այդ յառաջ ջացման: և կը խնդրեմ որ կառավարութեան շնորհէք ձեր ամենաջերմ աջակցութիւնը, զի եթէ ուզէք՝ ձեր երկիրն Աստուծոյ օրհնութեամբը կրնայ ամենէն գեղեցիկ կղզին բարձր Միջերկրականի մէջ»:

Ջը նայելով այս լաւատեսական յայտարարութիւններուն՝ տեղացիք, մանաւանդ յայները, գառնապէս կը գանգատին՝ ներկայ Վարչովթեան զէմ: Լան բազմաթիւ յայներ որ մինչև իսկ բացէ ի բաց կը պահանջնեն կիսլոսի միացութը Յունաստանի հետ: Այս գանգատաներու ամփոփումը կը գտնենք Օրէնսդրական Ժողովի վերջին (1902ի) Աւելեցին մէջ, իբր պատասխան ընդհ. կառավարչի ձաւին: Աւելեցը Խմբագրուած է ծանր զիտողութիւններով և խիստ բացատրութիւններով և կը պարունակէ հետեւեալ պահանջնումները:

Ա.- Աւելի ընդարձակ իրաւունքներ տալ Օրէնսդրական Ժողովին, որ կղզեցիններուն ներկայացնեցիչ մարմինն է: Բ.- Ցուրբերը թեմիցնել և անոնց հաւաքման եղանակը դիրքացնել: 0սմ. կառավարութեան հաշոյն տրուած հարկը չնջել: (*)

Գ.- Հանրօգուտ ընդարձակ շինութիւններու ձեռնարկելով երաշտութենէ տառապող աղքատ զասակարգին գործ հայթայթել: Ջամակոսթայի նաւահանգստին մաքրութեան ակմիջապէս սկսիլ: Արգէսեան ջրհորներ փորել, ոռոգման ջրմուգներ բանալ, աւելի մեծ թուով ձառեր տնկել, ճահնային հողերը մշակութեանց համար ձրի բաշխել, նոր կառուցիններ շնորհել, մետաքսի, զինիի և ոզելից ըմպելիններու արհեստագործութիւնները քաջալերել:

Դ.- Էալոււածահամարի, Անտառաց և Շնորհկանութեան վարչութիւնները կանոնաւորել, և յանուն օրինաց գործու-

(*) Ան- Այս հարկը կը վճարուի անգլիացի և ֆրանսացի գրամատէրերու, 'ի հաշիւ 1855 ի (Ամանեան փոխառութեան տոկոսին: Աման կ'առաջարկեն որ մայր պարտքը, 3,815,000 սոկին, վճարուի Անգլիայ գանձէն և կղզին սեփականութիւն լինի Անգլիայ, որով տարեկան հարկը կրնայ չնջուիլ, կամ կէս առ կէս նուազիլ:

Պատմուքիւն

ած վասակար խոտութիւնները բառնաւէ:
 Ե.- Առողջապահական սլայմանները բարելաւել. գիւղային բժիշկներու թիւը աճեցնել. յանտախտի և չնտախտի դէմ ձեռք առնուած զգուշութիւնները շարունակել:
 Զ.- Հնութիւնները պահպանել և անոնց գողունի արտածումը արդիել:
 Է.- Օտար երկիրներու հետ թղթատարական (Փոստի) յարաբերութիւնները կանոնաւորել:
 Ը.- Կիպրոսի գինիները կեղծելով կղղին վաճառականութեան վասար Եղիպատական գինեգործներու դէմ օրինական միջոցներ ձեռք առնել:
 Թ.- Պատժական օրէնքները բարեփոխել, կղղին բոլոր օրէնքները կանոնաւորապէս ամփոփել, և գործադիր իշխանութեանց կամայական մեկնութիւններուն վերջ տալ:
 Ժ.- Տարրական կրթութեան համար յունաց կողմէ ներկայացուած Ծրագիրը նկատողութեան աննել: Նոյնակէս դպրոցաց երկու անգլիացի Տեսուչներուն կամ վնախներուն տեղ մի յայն և մի թուրք նշանակել:
 ԺԱ.- Երկրագործական Դրամատուն հաստափելու խոստումը գործադիրել:

Յովսեփոս կ'ըսէ թէ Յարեմի թոռներէն կետիմ, հետեւ ելով իր եղբօր թարշիշի օրինակին - զոր կիւիկիոյ Տարսոն քաղաքի հիմնաղիրը կը համարի - ինքն ալ կիպրոսի ծուվեղերին վրայ շինեց կետիմ կամ ֆետիս կոչուած քաղաքը, որու զիրքին վրան է արդի Լարնաքան: Ինչ որ ալ մինի այս վկայութեան արժէքը՝ առհասարակ կ'ըստուածի որ կիպրոսի ամենահին զաղթականները Սուրբիացներ են, փեսիկեցի կամ հրեայ ցեղէ, որտնք Քրիստոսէ 1043 տարի առաջները կղղին մէջ հաստատուելով հետեած են նաւաշինութեան, հանքագործութեան և զանազան արհեսաններու: Ոյս զաղթականներու հետ մուտ գտած էր նաև Աստարաէ գիցուհոյն պաշտամունքը, որ կիպրոսէն ալ անցաւ Յունաստան:

Տրովական պատերազմը - Արեկէի և Արևմուտքի մէջտեղ մղուած առաջին պատմական կուրը - վերջանալէ յիսոյ յոյն ցեղապետներ նուաճնեցին կիպրոսը և հետզետէ խառնուեցան փինիկեցի և հրեայ բնակիչներուն հետ: Այդ առնչութենէն գոյացած քաղաքակրթութիւնը մասնաւոր տիպ կը ներկայացնէ և ծանօթ է Յունա-կիպրական անունով: Հելենական նրբութեան ազգեցութեամբ՝ կիպրոսի մէջ գաղափարային - կրօնային յեղաշրջում՝ ևս տեղի ունեցաւ: Հաճոյիքի և ցովսութեան զիցուհի Աստարաէի տեղ՝ սկսան պաշտել Ափրոդիտէն (Աստղեկը), շնորհաց մայրն ու իւտէական ծնունդներու ամենէն զեղանին: Ոյտ օրէն սկսած կիպրոս մոքերու առջև կը պարզուէր իրրե աշխարհ փափ-

կութեան, կապուտակ ալիքներու վրայ հիմուած և վարագոյն երանգներով շողշղուն: Հոն էր որ գեղեցկութեան դիցուհին կ'ապրէր սաղարթախտ հավանուաներու մէջ և հասարակ մահկանացուներուն երանութիւն կը բաշխէր: Այդ միզապատ, խորհրդաւոր շրջանին կղզին մէջ կը տեսնենք ինը տարրեր թագաւորութիւններ և վերին աստիճանի ծայկեալ աղջարնակութիւն: Գետակներ և վտակներ կը խոնարհէին զարարապատ բարձունքներէ և զաշտերու վրայ ծաւալելով կեանք և արգասաւորութիւն կը ջամրէին: Գետարերաններու մօտ հիմուած կային քաղաքներ կամ զիւղեր, և ծովկերեայ շրջազգին վրայ՝ երեսուն նաւահանգիստներ, ամէնքն ալ չեն, պայծառ, ոգեոր:

Այդ բարդաւաճ վիճակն անտարբեր աշքով՝ չպիտի դիտուէր: Արեւելքի մէջ բարձրացող ինքնակալութիւնները և Ասորեստան, Եղիպտոս, Պարսկաստան-մէծ զահողութիւններ կ'ընէին զրաւելու համար այս կղզին, որ ընդէրկար դիմադրելու անկարող՝ կամաւ կը հպատակի Եղիպտոսի Ամաւիս Բ. թագաւորին (568, նախքան զբրիստոս) *, և յետոյ կամրիսի օրով Պարսկական պետութեան, (325 Ն. Ք.): Քսէրբսէսի ժամանակ՝ Կիպրացիք 150 տոկանաւերով Պարսից կ'օգնեն Ելլեսպոնտան անցնելու, բայց շատ չ'անցած իրենք ալ կը միանան հելլենական բանակին:

Կիպրոսի անկախութեան շրջանը կարծառէ իր: Իր հանքային և անտառային հարստութիւնները, բերքերը, ձեռագործները և մանաւանդ ուղմական ուշագրաւ զիրքը՝ անշէջ նախանձ կը գրգուին օտարներու մէջ և կղզեցիք անընդհատ ինքնապաշտանութեան կոփ մղելու հարկագրուած էին: Պարսկական զօրութիւնն ամենէն մէծ վասնզն էր կղզին համար և անոր զէմ մղուած նաւային պատե-

* Բայ նոր քննութեանց թագմէւո Գ., նուաճց կղզին 14:0թ (Ն. Ք.):

քաղմները՝ երկարատե էին: Այս պայմբարին մէջ Կիպրացիք մեծ յաղթանակներ տարին ու Եւակորասի պէս զօրագարներ ունեցան (410 Ն. Ք.), բայց պարսիկ գերիշխանութիւնը հաստատուն մնաց մինչև Մ'եծին Աւեքսանդրի օրը: Մակեդոնացի աշխարհակալը մասնաւոր կարեսորութիւն կ'ընծայէր. Կիպրոսի, զայն կը նկատէր իրու Եգիպտոսի բանալին և Մ'իջերկրականի պահպանը, ուստի իր հզօր բազուկը տարածեց մինչև Հոն՝ Տիբրոսն առնելէ յետոյ (333 Ն. Ք.): Կիպրացի նաւաշէններ Աւեքսանդրի ծառայութեան մոտան, անոր նաւատորսիլլը կազմեցին և մինչև ինդու գետն առաջնորդեցին:

Աւեքսանդրի մահին յետոյ, անոր յաջորդող զօրավարներին Փաղոմէսո Սոստեր և Անտիգոնոս իրարու զէմ կը մաքարին և վերջապէս Պաղոմէսանները յաղթական կը հանդիսանան և 200 տարի կը կառավարեն կղզին, երբեմն իրու եղիպտական նահանգ և երբեմն իրու ինքնիշխան երկիր:

Այն տաենն էր որ հասան Արևմուտքի հսկայ պետութեան փաղանգները, և Հոռմէտական անթիպատ (Proconsul) Մարկոս Լատոնի տիրական հեղինակութիւնը հաստատուեցաւ Բաֆոսի մէջ (38 Ն. Ք.)*: Հոռմէտական տիրապետութեան հաստատուելին մէկ զար վերջ՝ Կիպրոսի մէջ կը կատարուի կրօնական մէծ յեղաշրջումը: Պօղոս և Բառնաբաս առաքեալներու քարազութեամբ քրիստոնէութիւնը մուտ կը զանէ (45 Յ. Ք.), Հոռմէտական կուսակալը Պօղոս Սերդիս հաւատքի կուդայ և Աստղիկի մեհնական պաշտօններուն կը յաջորդեն Աստուածածնի տօնախամրու-

* Կատոնի ձեռքով կղզին Հոռմէտական զանձարանը զրկուեցաւ 7000 տաղանցիք (երբ 2 միլիոն անգլ. ոսկեայ) հարստութիւն: Այնափ նախանձ կը գրգռէր Կիպրոսի ճախութիւնը:

թիւնները։ Յաջորդ գարուն նշանակելի դեպքերէն մին է հրէական մեծ ասպատամբութեանը, որ ատեն կիպրոսի մէջ քառորդ միլիոն յոյն կը ջարզուի։ Նշանաւոր է նաև Մհեմն կոստանդինոսի մօր, Ա. Հեղինէի այցելութիւնն ի կիպրոս, որու հետեանքով քրիստոնէութիւնը մեծ մղում կ'ստանայ և քաղմաթիւ ընտանիքներ կուգան Ուրիխայէն։

Հոռմէական պետութեան բաժանումէն վերջ՝ այս կրպին բաժին ինկաւ Բիւզանդիինի և անոր կայսերական թագի ամենափայտն գոհարներէն մին եղաւ (395)։ Ասկէ քիչ վերջ կ'սկսի կիպրոսի քայլքայման և անկման շրջանը։ Զանազան դժբախտութիւններ կը հասնին, սաստիկ երկրաշարժ և երկարաւու երաշտութիւն իրարու կը յաջորդեն և սոսկալի աւերտում կը գործեն երկրին մէջ։ Եօթներորդ դարու կիսուն՝ վրայ կը հասնի նոր պատուհաս մը, Արաբական արշաւանքը։ Մուալիյէ 1700 նաւերով կը պաշտէ կղզին, անապատի զաւակները ցամաք կը թափին, կ'այրէն, կ'աւրեն, կը գերեն և հիմնայատակ կը քանդեն յունական և հոռմէական արուեստի չքնաղ արտադրութիւնները (649)։ Բիւզանդիեան կայսերը՝ երբեմն զէնքի երբեմն ուկւայ զօրութեամբ կը գիմազրեն։ վերջապէս կը յաջողին հեռացնել արաքները, բայց ասոնք՝ մէկ ու կէս զար վերջ, Հարուն էլ Ռէշիսի օրով, կղզիին մէջ կը վերահաստատուին (802), մինչեւ որ Վասիլ Հայկաղն և Նիկեփոր Փոկաս զօրավարներու ձեռքով վերջնականապէս կ'արտաքսուին (938)։

ԺԲ. զարու վերջին տարիները մի ուրիշ շրջան կը դանան կիպրոսի համար։ Արևմտեան ազգերը նորէն կը միանային Արեելքի դէմ կոռուկու, երրորդ Խաչակրութեան նաւախումբերը. կը յառաջանային դէպի Սուրիխական ցամաքը։ Ա-իշարտ Առիւծասիրտ, Անգլիոյ յանդուդն և ոէդ թաքաւորը՝ Ֆրանսայի թագաւորին զինակցութեամբ պիտի ա-

դատէր Ա. Երկիրը։ Ծովագնացութեան պահուն փոթորիկ ծագեցաւ, նաւերն իրարմէ հեռացան և մի քանին կիպրոսի եղերքին վրայ խորտակուեցան։ Խաչակ կոմինեան իշխանն, որ այն ատեն Կ. Պուսոյ կայսերական իշխանութեան, զէմ քնզված ինքնազլուի կը տիրէր կղզիին վրայ՝ անզթօրէն վարուեցաւ նաւարեկեալներուն հետ և զանոնք բանտարկեց։ Միւնոյն ժամանակ Լիմասոլի առջև կ'ասպատանէր մի ուրիշ նաւ, որուն ճամբորդները—երկու իշխանուհիներ և իրենց հետևորդները,—թոյլառութիւն կը խնդրեն ցամաք ելլելու և կը մերժուին։ Այս իշխանուհիներն էին ՈՒչարտի նշանածը Բերենկարիա և քոյրը Յովհաննա։ Այդ տագնապալի միջոցին՝ գիպուածով հոն կը հասնի նաև ՈՒչարտ իր նաւախամբով։ Նա կը զայրանայ անսիրտ իշխանին գէմ, ցամաք կը հանէ իր բանակը, կղզին կը զբաէ և խաչակը կը ձերբակալէ ի Քօլոսի։ Կղզին կը կատարուի իր հարսանեաց հանգէնն ալ Լիմասոլի մէջ (1191, մայիս 12)։ ՈՒչարտ, ըստ իր քըմահանցից կը բամնէ Կիպրոսը։ Երկրին կէսը կը սեփականէ ինքն իրեն, մաս մը կը յատկացնէ վանքերու և եկեղեցներու, մնացածն ալ աւատական օրէնքով կոտայ եւրոպացի պարոններու, որոնք Պաղեստինէն և Ասորէքէն հասած էին իր զրօշակին տակ ծառայելու։ Բայց ՈՒշարտ չէր կարող երկար մնալ այս տեղ և ամբողջացնել վարչական գործերը, ուստի աւելի շահաւոր կը համարի կղզին վաճառել Տաճարական ասպետներուն՝ 100,000 սարակինեան բիզանդի, (950,000 ֆրանդ, իսկ ներկայ համեմատական արժէքով 8 միլիոն ֆրանդ)։ Տաճարական ասպետները կը տիրանան երկրին, բայց անկարող կը լինին զսպելու և կառավարելու բնակիչները, ուստի իրենք ալ միենոյն զնով կը ծախեն կղզին կի կամ

Գուիտոն Լուսինեանին, Երուսաղէմի նախկին թագաւորինք Ահա այդ ժամանակին (1492) կ'սկսի Կիպրոսի Լուսինեան հարստութիւնը որ կը տեէ երեք դար, մինչև 1489, և կուննեայ 18 յաջորդական իշխաններ որոնց ամենէն նշանաւորներն են Հենրի Բ., Հյուկո Դ. և Պետրոս Ա.: Լուսինեան իշխանութիւնն ալ մի տարրեր թուական բացաւ և յեղաշրջեց Կիպրոսի քաղաքական և ընկերական կեանքը: Գուիտոնի հետ կզբին հաստատուեցան ՅՈՒ առպետներ և 200 պարոններ, որոնք լատին տարրի գերիշխանութիւնը հաստատեցին երկրին մէջ, աւատական զըրութեան համեմատ հողերու տիրացան, պարոնական զրդեաններ և զոթաձեն եկեղեցիներ կառուցին, կառավարութեան կարգն ու սարքը, օրէնսդրութիւնը և կազմակերպութիւնը բարեփոխեցին: Բնիկ ժողովուրդը չը ձուլուեցաւ տիրող ցեղին հետ. իր լեզուն, կրօնքը և աւանդութիւնները պահեց, բայց միենոյն ժամանակ լիովին վայելեց բարեկարգութեան և անդորրութեան բարիքը: Այդինք և պարտէջներ անկունեցան, արմատիք և բանջարեղինք առատացան, արհեստական և առեւրական գործունեութիւնը վերսկսաւ և մանաւանդ երբ Ս. Երկիրը նորէն մահմետականաց ձեռքն անցաւ՝ Կիպրոս եւրոպական գաղթականութեանց կեզրուալայր դարձաւ:

Աական, այսպէս երկու զար ժաղկելէ յետոյ, նոր նախանձորդներ դոյացան: Ճենովացիք այն ատեն սաստիկ կը մրցէին վիճնետական վաճառականութեան դէմ, որու արեկեան մթերանոցը Պէյրաթի մէջ էր: Իրենք ալ կը ջանային անոնց մօա հաստակել մի շտեմարան և այդ նովատակին շատ յարմար կը գտնէին Կիպրոսը: Աւտի թշնամութեան պատրուակներ ստեղծեցին և վերջաղէս ձեռք անցուցին ֆամակոսթա նաւահանգիստը (1373):

Անկէ վերջ հետզհետէ Խրացուցին կղզին վաճառականութիւնը, շահարեր ամեն աղբիւր մենաշնորհ ըրին և անխղճարար կեղեցեցին ժողովուրդը: Կիպրոսը զրաւելու համար կազմուած Ճենովական Բնիկերութիւնը (Mahone) զրամագլուխ դրած էր 400,000 գուկատ, որ է 1,600,000 ճերմակ բիտանդ (բացարձակ արժէքով 2300 միլիոն ֆրանդ): Անկէ վերջ հաստատուած «Ս. Գէորգի զրամատան» պահանջը կը հասնէր Զ միլիոնէ աւելի ֆլորինի, (իբր 25 միլիոն ֆրանդի): Կիպրացիք բանիցո փորձեցին վանել բանակալները, բայց չը յաջողեցան: Ճենովացիք երկիրը կատարելապէս նուածելու համար օգնութիւն ինդրեցին Եզիփտոսի Մէմուրներէն: Ասոնք եկան, Յանոս թագաւորը գերեցին և արդէն ծանրաբեննեալ ժողովրդին վրայ նոր հարկեր զրին (1423): Այս ատեն սկսաւ անիշխանութիւն մը որ ազբատութեան և բռնութեան հետ միացած՝ ամեն չարիք կը հանցնէր, զօրաւորը կը բռնանար տիկարին վրայ, ալքատը կը հարստահարուէր ունեւորէն: Առիթներէն օգտուելով՝ Վիճնետացիք սկսած էին երկրին գործերուն միջանուել: Ճենովացիք ալ կամաց կամաց թուզցած էին, ասով մի համեմատական հանդստաթիւն տիրեց երկրին մէջ:

Լուսինեան Յովիշաննէս Գ. Թագաւորի մահէն յետոյ (1458) իր զուսարը Շարլոթ—որ ամմանացած էր իր հօրեղոր, Սալուայի դքսին, որդույն Լուգովիկոսին հետ՝ հանդիսաւոր օծում կուտանայ Նիկոսիոյ մէջ և կը գահակալէ (1460): Բայց քիչ վերջ, իր ապօրինաւոր եղբայրը Յակոբոս՝ Մէմուրեաններու օգնութեամբ զինը կը վանէ և կը բռնակալէ: Այս Յակոբոսին հետ կ'ամուսնանայ Կատարինէ Գօրնարոյ, մի Վիճնետացի աղնուականի աղջիկը, դոր 1471ին Վիճնետական Ծերակոյտը կը յայ-

տարարէ իբրև որդեգրեալ գուստը Ա. Մարկոսի Հանրաժայտութեան։ Յակոբոս թագաւորի մահէն յետոյ վենեատական պահակազօրք կը դրկուի կիպրոս՝ պաշապանելու համար մանուկ թագաւորը և անոր խնամակալ թագուհի մայրը։ բայց երբ երիխան ալ կը մեռնի՝ Հանրապետութեան յորդորանօք դահէն կը հեռանայ գեղանին Գօրնարոյ և կիպրոս բոլորովին կը յանձնուի Վենետիկան վարչութեան (1489)։ Այդ թուականէն կը դադրի Լուսինեան հարստութեան իշխանութիւնը։ Ազգէ երկու տարի առաջ չոսմի մէջ կը վախճանէր Շարլօթ Լուսինեան, զահուն օրինաւոր տէրը։ Սա իր ժառանգական իրաւունքները կը տակած էր Սալուայի գուքս կարուսին։ Այդ հիման վըրայ է որ Սալուայի տան վեհապեսներն իրենք զիրենք կ'անուանեն «Թագաւոր Կիպրոսի, Երուսաղէմի և Հայաստանի»։ Հայաստանի (Հայկական կիլիկոյ) թագաւորական տիտղոսն ալ կիպրոսի թագաւորներուն անցեր էր մեր Լեռն Լուսինեանի մահէն յետոյ։

Վենետիկան իշխանութիւնն ալ, որ ութսուն տարի կը տեւէ կիպրոսի մէջ՝ իրական բախտաւորութիւն չը բերեր։ Կառավարութեան զլխաւոր ջանքը կը լինի հնար եղածին չափ շահագործել կղզին և ժողովուրդը։ Հետեւաբար երկրին զարգացումը անիմամ կը թողուի, աղքատութիւն և դժոհութիւն կը տիրեն ամեն կողմ։

Այն ատեն քաղաքական հորիզոնին վրայ նորէն կը դիզուէին փոխորկալից ամպերը։ Սուլթան Սիւլէյման Գ. օարսափ ձգած էր Եւրոպայի մէջ, և Վենետիկացիք որ կիպրոսի վրայ գրուած եղիպատական հարկը (10,000 դուկատ) 1517 էն ի վեր Եղիպատոսի գերիշխան տիրոջ—Օսմանեան Սուլթանին—կը վճարէին՝ այժմ սաստիկ մտահոգութեան մատնուած էին։ Վենետիկացիներու երկրակալութեան սահ-

մանն իրենց զինորական և նաւային զօրութեան համեմատական չափէն շատ աւելի ընդարձակուած էր, միւս կողմէ՝ կիպրոսի մէջ բաւական ոյժ չըկար գիմաղբելու Օսմանցւոց հաւանական արշաւանդին, մանաւանդ որ կղզիին բնիկներուն հաւատաբմութեան վրայ վստահանալու իրաւունք ալ չունէին։ Այս ամենուն հետ մէկտեղ՝ պաշտպանութեան կանխահոդ միջոցներու ձեռնարկուեցաւ։ 1566 ին էր որ որոշուեցաւ մայրաբաղաբը ամրացնել, իր տարածութեան մէկ երրորդ մասին մէջ ամփոփել, խրամներով, պարիսպներով և ամրոցներով շրջափակել։ Ակներե ընդհանուր վանադին առջեւ ամեն ոք — աղնուական և ռամիկ, կղերական և աշխարհիկ — համակերպնեցան այդ հրամաններուն։ Նշանակեալ սահմանագծէն գուրս մնացած բազմաթիւ ապարաններ և ամարանոցներ կործանուեցան, Դոմինիկեանց վանատունն ու հօն շինուած արքայական զամբարանները քանդուեցան։ Ճշնաժամ ալ մօտեցած էր մինչեւ այն ատեն։ Սիւլէյման Գ.ի յաջորդը Ծելիմ Բ., կը ցանկար իր ձեռքն ունենալ համբաւեալ Գումանաւարիա գինիին աղբիւրները։ Մի թորգուկալցի հրեայ, Եսուֆ Նաշի, սուլթանին կը թելաղբէր փութացնել այդ նպատակին գործադրումը, — մատնամիշ ընկող կղզիին ուղղմագիտական նշանակութիւնը՝ իրեն բանալի Փոքր Ասիոյ, Սուրբոյ և Եղիպատոսի։ Վերջապէս, թրբական նաւատորմը երեցաւ կիմասովի առջեւ և 400,000 հոգի արշաւեցին զէպի մայրաբաղաբը։ Եօմը շարած տեւեց պաշարումը, յորում քաղաքացիք, — 100,000 հոգի ալ իրենք — դիմադրեցին դիցացնարար։ Յամառ կատաղութեամբ կը մղուէր յարձակումն ալ և օսմանեան նոր զունդեր կը հասնէին օգնութեան։ Սեպտեմբեր Զին (1570), զիշերանց սկսաւ երրորդ ընդհանուր յար-

ձակումը, և արշալուսին՝ ամրոցներէն երեքն ինկած էին արդէն թշնամոյն առջեւ 20,000 նոհատակներով։ Յուսահատական այդ ահաւոր ժամանեն՝ կեանքն անարժէք բան մ'էր պաշարեալներուն համար, կիներ տանիքներէն վար նետուեցան կամովին ու ջախջախուեցան, աղջիկներ իրենց ծողաց ձեռքով սովանուեցան։ Ութ օր շարունակեց աւերման և սրածութեան գործը և իններորդ օրը՝ զեղեցիկն Նիկոսիա, Արևմտաքի ազնուականներուն արեւեկան վերջին ոստանը, փլատակներու տեսարան մը կը ներկայացնէր։ Կապուտ կողոպուաը չափ չունէր, աւարեալ դոհաւրեցիններու և սոկեղններու, զարդական և արուեստական գործերու գինն անսահման էր։ Հաղար աղջիկներ, կիպրացի զեղուհիններու ընտրանիներէն, Առութանին զրոկուելու համար նաւ զրուած էին։ Ասանցմէ մին, Արևատա անուն, մահը նախընարելով կրակ տուան նառուն վառոգանոցին։ Նաև ու ամրոգչ նաւախումբը հրոյ ճաշրակ զարձան և նաւաստիններն ալ միասին ծովակուր հազարոսի եղերաց մօտք։

Նոյնչափ ողբերգական կերպավ ինկաւ ֆամակոսթա, զոր 7,000 Վենետացիներ կը սրաշապանէին Լալա Մուսթաֆա փաշայի գէմ։ Տասնամեայ սովատանջ պաշարում յետոյ՝ այս քաղաքն, ալ բացաւ իր գոները (1571 օգոստ. 3)։ Անձնատութեան պայմանները նպաստաւոր էին պաշարեալներուն, պահակ զօրքերն իրենց զէնքով ու սովամթերքով պատաօրէն պիտի զրկուին կրետէ — որ այն ատեն վենետացոց ձեռքն էր, — և քաղցին մէջ մնացողները կենաց և ընչից ապահովութիւն սկիսի վայելէին։ Հրամանատար Պրակտինո, երեք զօրավարներով միասին ծովեղը իջաւ բերդին բանալիները յանձնելու։ Մուսթաֆա փաշա պատուած միայն կը սափորի մէջ պահաւած կը մնայ Վենետիկի Յունիանիսո-Պօղոս եկեղեցին։

Խօսակցութեան սպահուն հետզհետէ այնչափ տաքցաւ է զայրացաւ, որ Պրակտինո խիստ պատասխան տնւաւ։ Փաշան կատաղութեան աստիճանին հասած՝ զիսատել տուաւ Պրակտինոյի երեք զինակիցները և պահակազօրքն 300 հոգի, և քաղաքը երեք օր աւերման ու կոտորածի մատնեց։ Իսկ իրեն, Պրակտինոյին, վերապահուած էր աւելի սոսկալի տանջանք։ Քիթն ու ականջների կտրուելէ ետքը, երեք անդամ տարուեցաւ զիսատման կոճղին վրայ և կիսամահ քաշկոտուեցաւ մութ բանար։ Ինը գիշեր այլպէս չարչարուելէ յետոյ՝ մի քանի ժամ՝ հող կրեց ամրութիւններուն համար և վերջապէս ցիցի մը կապուելով ողջ ողջ մորթեզներծ եղաւ վայրենասիրա Առուժափայի աշըին առջեւ։ Իր մորթը, որ չոր խոտով լեցուած Առութանին տարուեցաւ և ետքէն վենետացիններուն ծախուեցաւ՝ մինչեւ հիմա մի սափորի մէջ պահաւած էր մնայ Վենետիկի Յունիանիսո-Պօղոս եկեղեցին։

Օմանինան իշխանութիւնն երեք դարու չափ տեւեց լիխլրոսի մէջ — մինչ անզլիացւոց մուտքը 1878 ին։ Այդ շրջանի միօրինակաւթեան մէջ նշանակելի պատմական դէպքերն են 1764ի ներբին կոխը թուրք փաշաներու մէջ, 1828ի յունական շարժումը և որ ատեն Միւսէլիմ Ահմէտ փաշա ինլլիել տուաւ Նիկոսիոյ եղիսկուուները և երեւելիները —, նոյնպէս եղիսկուական ութամեայ վարչութիւնը (1832-1840) որ վերջ զտաւ՝ Անզլիացւոց ձեռքով Արեայի սրբակոծութիւն և Խորբանիմ փաշա մի նահանջումն յետոյ։

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Անցեալ Ժամանակ

Հայոց Կիպրոս հաստատուելուն ամենահին թուականը
ծանօթ չէ ինձ:

Բիւզանդիան կայսրերը հայ զինուորներ կը գրկէին Կիպրոս։
Աւելսիս գորավար, հոկայ հայ մը (Արմէնիոն կիղաւայէօն անուրա), Վասիլ Արշակունի կայսեր օրու (368) Կիպրոսը ետ առա Արաբներէն և 7 տարի «թշնամեաց սարսափ» եղաւ։ Մէկ գար շանցած՝ Վասիլ Հայկազն զօրավար աւելի բախտաւոր գանուեցաւ և կզգին վերջնականապէս վանեց Արաբները (938)։

Անշուշտ վաճառական և արհեստաւոր հայեր ալ հաստատուած էին Կիպրոս, բայց բազմանդամ հայ հասարակութեան մը զայտթիւնը հաստատող առաջին վլայտթիւնը որ ինձ ծանօթ է ԺԲ. գարու երկրորդ կէսին կը վերաբերի։ Այսպէս, Հոռմիլայի ժողովին կողմէ (1179) Մանուկը կայսեր ազգուած գրութեան ներքե կ'ստորագրէ նաև «Թաղէոս եպիսկոպոս Կիպրոսի»։ Յեսոյ, 1194 ին, երբ Անգլիոյ թագաւոր Ռիչարտ Ա., կը յարձակէր Կիպրոսի վրայ՝ իշխանը խսահակ կոմմինոս կը հրամայէ քակել «Լիմասոլի Հայոց և Յունաց տուներուն գոները», անսնցմով պատնէշ կանգնելու համար, ինչպէս կ'աւանդէ մի ժամանակագիր։ Կիպրոսի մէջ այդ միջոցին հայ տարրի կատարած դերը աւելի աւշագրաւ կը լինի մի այլ ժամանակադրութեամբ զոր թողած է անողիացի Աբբայ Բենետիկ (Benedict of Peterborough)։ Բայ այսմ, երբ Ռիչարտ կղզիին

ներսերը կը հալածէ իստհակը և վիմասոլ կը վերապառանայ՝ կը տեսնէ որ Յոյները և Հայերը (Griffons and Herminians) փախեր են, և քաղաքը դատարկացեր եք Դարձեաւ, երբ իստհակ ձերբակալուելէ յետոյ կը փախչի և անգլիական նաւերը կղզին զանազան կողմերէն ներս կ'արշաւեն՝ «քաղաքներու, զղեակներու և մթերքներու պահպանութեան նշանակուած Յոյները և Հայերը» կը քաշուին զէպի լեռները: Ի վերջոյ, երբ Ռիչարտ կղզին հեռացած էր, Յոյները և Հայերը որոնք զեռ հաշուուած չեն՝ իստհակի ազգականներէն կրօնաւոր մը կ'ընտրեն իրեն կայոր կիսլրոսի, որ սակայն, կը բոնուի անգլիացի Դատաւորին (Robert of Tornham) ձեռքով կը կախուի:*

Աւելի հետաքրքրականն այն է որ մինչ կիսլրոսի հայերը զէն ի ձեռին կը սպասուանն իրենց նոր հայրենիքը՝ Կիլիկիայէն Ռիչարտին զինակցելու եկած էր Ռուբինեան նրբամիտ քաղաքագէտը «Լեոն, Ռուբին լեռնականի եղբայրը» (Leo, brother of Rupin of the mountain):

Ուրիշ պատմիչներ կը վկայեն թէ Լեոն մաս կ'ստանայ Ռիչարտի պատերազմական աւարէն, և ասոր Ռիբին կարիսի հետ ամուսնութեանը կ'նրահայր կը լինի:

Երբ կղզին մէջ Լուսինեանները հաստատուեցան՝ Լեոն անոնց հետ ալ մշակեց սերտ յարաքերութիւն, և իբր 20 տարի վերջ, իր առաջին կինը արձակած լինելով Ամորի թագաւորին աղջկան հետ ամուսնացաւ: Այս առթիւ կատարած ուղերութենէ մը Կիլիկիա վերապառայում միջոցին էր որ թշնամի ծովահեններ դարան լաւ

* Այս ժամանակագրութեան տիտղոսն է Gesta Regis Henrici II et Ricardi I: Ասդի երեն թագավանութենը կը տեսնուի Excerpta Cypria հաւաքածոյն մէջ, զոր կը հրատարակէ Լաբնաքայի մեծահմատ կառավարէք, Mr. C. Delaval Cobham.

թէցին իր գէմ, զոր լսելով լեռն նորէն կիսլրոս զարձաւ և «առ իւր նաւո պատերազմականո, և եկեալ ի գարան որ դործեալ էր նմա նաւուց բազմաց՝... ծանեաւ թէ յորում նաւուն իցե զիսաւորն, եհար զնա արագաթի նաւով և շը րասոյլ արար զամենեսեան, և մնացեալ նաւըն փախեան»:¹

Կ'երեի թէ Լուսինեաններու առաջին օրերուն մէջ Կիպրոսի հայոց վիճակի նախանձեկի չէր: Միայն ֆրանզներն էն տիրող, և «Յոյներն ու Հայերը անոնց կը հնազանդէն իրեն մշակ հողագործ, ամենքն ալ սարկութեան ենթարկուած՝ հարկ կը վճարէն»:² Բայց շատ չանցած՝ նիւթիոյ Հայ արքունեաց հետ կիսլրոսի խնամիական և քաղաքական առլուչութիւնները սերտացան, և Հայերը կղզին մէջ բարձրացան: Եկա ժամանակ մը որ ասոնք «տեղական ժողովրդին ամենէն աւելի յարգուած և նպաստաւոր ուած մասը եղան, ինչ որ արքար փոխարինութիւնն էր այն զաշնակցութեան՝ զոր կազմեր էն ֆրանզաց հետ, անլրծովիայ պատերազմաց սկիզբէն ի վեր, և զոր կնքեր էն իրենց արիւնով»:³

Կիպրոսի Հայերը Փ. և Ժ. զարերաւ մէջ կը տնանենք ամեն ասպարդէններու վրայ: Իր վաճառական հաստատուած էին Բաֆոս, Լիմասոլ, Նիկոսիա և Ֆամակասութա, Երկրագործութեամբ կը սպարապէն Մեսօրէի զաշտին և Քիրինեան լեռնաշղթայի կողերուն վրայ, և եկեղեցիներ ու եղիսկուպոսական երկու աթոռներ ունեցած էին:⁴

* Կիպրոս Գանձակեցի:

** Willebrand d'Oldenbourg.

2. — Հայ գեւեր էին ՍԵԱԱԹԱՐԻՔԹ, ֆամակոսթայի հետիսային կողմը՝ այժմ յունացած, ՔՕՐՆԾԹՐԻՑՈՅՑ, Ա. Մակարի արեւելեան կողմը՝ թքքացած, և Բ. Ա. Վ. Ա. Ա. արևմտեան կողմը՝ աւերակ: Լատին կղերի հեն կայուածացուցակին մէջ կը տեսնուին Մերթար և Արմեն Խորի անոնները, Ա. Երջին անոննու յոյն գիւղ մը ինչպէս և Ո. Ջի Ա. բ. մէնի կամ Էրմէնի փանայիրի անոնով ուխտատէղի՝ տօնավաճառ Ֆ.

1. — Mas-Latrie.

Եկեղեցիայ և Եկեղեցու արքայական տոհմինը յաճախ իրաբ
րու կապուած էին լուսինեան և Հեթումեան իշխանուհի-
ներով։ Արքջիններու կարգին մէջ է Գասպուն, Առօն Գ. ի-
զուստրը, որ ամսունացած էր Հենրի Բ. թագաւորին եղա-
բօր Ամորիի հետ։ Ամորի կը կալանաւորէ իր եղբայրը,
զնա կ'արսորէ ՚ի Կիլիկիա, և ինքը կը զահակալէ։ Մեր
Ոշին թագաւորն ու Ալբանիս սովարագիս կը պաշտպանեն
իրենց քեղայիքի անիրաւ զատը. այլ երբ նա զաւոլ կ'ըս-
պանուին կ'ստիլուուն Էիպրոս վերագարձնելու զՀենրի
որդիսը Զամպուն ու որդիքը անվտանգ մեկնին զէսի Սիս։
Զամպունի որդիներն էին Զեհան և Գուխտան, որոնց առաջ-
նոյն թագապահհովենէն յետոյ Հայոց Թագաւոր ընտրուե-
ցաւ երկրորդը։ Ասոնք չափաղանց օտարասէր թուեցան
ազգին, և սպաննուեցան ՚ի Ախ (1344), եւ այս զէպքե-
րուն յաջորդող շփոթութեանց միջոցին Էիպրոսի թագա-
ւորները քիչ շատ միջամտեցին Կիլիկիայ զործերուն։

Բայց Ելակրոսի թագաւորութիւնն ալ վտանգի մէջ էր
այն պահուն։ Գարսամանի իշխանը, Պէտրէատին, Հայոց
ահեղ թշնամին, զաշնակցած էր Եզիկառոսի հետ։ Հիսրըն-
կալ ասպետներուն հօանդը մարած էր և ջաճարականները
թուզած էին։ Պետրոս Ա., օգնութիւն խնդրելու համար պիմեց

կայ Լիմասոլի մօտ: Հեն գաւերաթվթոց մէջ Կը տեսնուի Հայկական
Բայուստական - սառատրութիւնը:

այսինքը - Erminesques - բաղատրութեան
այսինքը - Erminesques - բաղատրութեան
Հայ եպիսկոպոսներ կը բնակին Ֆամակոսթա և Նիկոսիա: Վերջնայ
մէջ հայոց թագուր որ հնա ատեն Արմենիա կը կոչուէր՝ Օսմանցիներու
օրով ըստուած է Գրաբամանաւու մահալլէսի, որովհետեւ Գրաբամանէն-
Լիւիկիա - հայեր եկած բնակած են աստ: Ֆամակոսթա ունէր (1287)
երեք եկեղեցի: Ս. Սարգիս, Ս. Վանական և Ս. Առաքելածածին:
Լաբայիսի կամ Բիսկոպիի մէջ Կար եկեղեցի մը և աստ մօս Պիրմոնն
դրատեանց -Prémontre- մենաստանն, ուր կրօնաւորեցաւ մեր իշխան
պատմիլ Հեթուու Սնառու, սեր Կոռիկոսի - 1305 ին:

Լաբայիսի կամակա արքամարանին ներսը, պատմին վրայնկարուած եւ
կիսովին եղուած պատկերի մը ներքեւ կը նշարուին այս հայերէն առ
առքու - Փ Հ 0 Ե Ն Տ :

Այս մասնաւոքը, բայց ժամանակն անհպատ էր իրեն: Վենետուացիք և ձենովացիք՝ շահախնդրութեան տեսնչով միայն կը դորձէին, Անգլիա՝ Ֆրանսայի դէմ կը պատերազմէր, Գասպարիս Արակոնի դէմ թշնամացած էր, իսկ Գերմանիա բաշխութին անտարբեր կը մնար: Զկար մէկը որ օգնութիւն հասցնէր կիսպառի և կիմիկիոյ քրիստոնէից:

Պետրոս Ա. թէկ անյաջող գարձաւ. Եւրոպայէն՝ բայց իր քաջութեան ասլացոյցները առուաւ միշա: Ավեքսանդրիան նուածեց, Կոսիկոսի պաշարեալ Հայերուն օքնեց, Տրիպոլ-սոյ և Թորթոսի այլազգիները լինեց և Հայիկական մեծ նաւահանդիստ Այասը մի անգամ ևս Թիւրքմէն հրոսակ-ներու ձեռքէն պատեց (1367): *

Յաջորս տարին է որ Պետրոս Ա. կը տիրէ Կիլիկիոյ մէկ մասին, լռւ ևո՛ վերին իշխանութիւն մը կ'ոսանձնէ, քանի որ միւսնոյն ատեն կը տեսնենք Կիլիկիոյ մէջ՝ կոստանդնուպոլիսում թագավորը^{**}: Շատ չանցած՝ Պետրոս Ա. գտաճանութեան զոհ կը լինի 'ի Կիպրոս (1369), և իր յաջորդը Պետրոս Բ. Եղիպատոսի հետ դաշնակցելում բոլորովին կը կըսնէ Կիլիկիան^{***}:

*Կիյեմ ու Մալու պապէս կը պատմէ այդ դեպքերը
«Dessus vous ait dit et compté,
Comment le roys pleins de bonté,
Voloit aler en Hermenie.
Il fist aprester sa navie,
Et se parti bien m'en remembre,
Et tient toute la Signourie,
Dou bon royaume d'Ermenie,
Pour le roy, qui prochainement,
Y sera s'il peut nullement».

Guillaume de Machaut

*** Եր Անգարոսի Հորտերին ըստ Յովհան Դարդելի:
*** Պարոսի վեհապետական Խմբանութեան նշան պէտք է լլինի այս
դրամը որոն վրայ կը քարգացուի «ՊՏԾՄ ԹԱԳԱԾԻՈՐ ՀԱՅՈ ՇԻՆԵԱԼ
Ի ԳԱՂԱԾԻՆ Ի ՍԻԾ» :

Աանցնի Յ-կ տարի, և Ախոէն Կիպրոս կուգան յատուկ
պատգամաւորներ, — Պարոն Լեռն Համուսցի և այլք. — Ի
դահ հրաւիրելու զեւոն Լուսիննեան, որ սպանիալ Գուխտոն
թագաւորին եղբօրորդին լինելով՝ միակ օրինաւոր ժառանչ
զարդն էր զահուն* : Մինոյն ատեն Ճենովացիք կը յար-
ձակին կիպրոսի վրայ, որպէս թէ ի վրէժինդրութիւն Պետ-
րոս Ա.ի սպանման, կը բանատրկեն նորա յաջորդը եւ
շատ մը աղնուականներ: Անոնց հետ կ'արզիւուի նաև Լեռն
լուսիննեան, որ Հայոց առաջարկն ընդունելով՝ կը սպա-
ռաստուէր մեկնելու Ջամարկոսթայէն: Նա հաղիւ թէ կը
յաջողի — իր կնոջ զարդեղինները և կալուածները փրկանք
տալով — համոզելու Ճենովացինները և Կիպրոսին մեկնելու
(1374):

(1374): Այդ թուականէն կէս զար տուած, Այսոփ տուածին ան-
կումէն սկսեալ, Կիլիկիոյ Հայերն արգէն սկսած էին կիպրոս
գիմելու, խակ այժմ, եղբ Լևոնի իննամսեայ իշխանութիւնը
Կիլիկիոյ անկախութեան հետ մէկտեղ վերջ դառւ՝ մէծա-
խառնը գալթականութեան հոսանք մը սկսաւ հետզհետէ
թափի ի կիպրոս :

Սիսակին մշջ կը կարգանք մի ժամանակազրի վկայութիւնն որ - եթէ ուրիշ գէպքերու հետ շփոթուած չ' - կը ցուցնէ թէ Ասոնէ վերջ ալ մի ոմն կոստանդին թագաւորեց 48 տարի, և յետոյ «ի կիպրոս անցաւ (1423 ին) և բնակուին՝ բազում իշխաններ իւրաքանչիւր տոհմականօքն հանդերձ, զի եկն ի վերայ սոցա Սուլթանն Եղիպատուի Մուղագիւն, և ոչ կարացին զգէմ ունել, վասնորոյ 30,000 տուն անցան յանկոյս ծովուն»:

* Ակնանի մայրը, Տիկին Սուլթան, Վրաց թագավորին գուստին էր:
Իր ամուսին Զէհան թագավահին սպանումէն յետոյ Երկու որդուցը հետ
Կիպրոս կը փախչի Կիլիկիային (1348), և Երեք տարի կը մնայ յականի
Ո. Սիւէսնի, Գրեգոր բերդին մէջ, ի Քարբա:

Լեռնի մահէն յետոյ Կիպրոսի թագաւորներն, իբրև աղաքական և ժառանգորդ՝ սկսան զործածել «Հայոց թագաւոր» տիտղոսը, և Տարսոնի Մատթէոս արքեպիսկոպոսին ձեռամբ «Հայոց թագաւոր» օծուեցաւ Յակոբ Ա. ի յաջորդը, Յանս կամ Յովհաննէս Ա. (1399): Քարլոպղա թագուհինս սուրբագրութեանը կը տեսնալի այսպէս, «Karlotta, Dei gratia Hierusalem, Cypri et Armeniae Regina», կամ այսպէս, «Charlotte, par la grace de Dieu, royne de Jerusalem, de Chipres et d'Arménie»:

Հայոց թագաւորութեան միջոցին կիսպոսի մէջ կային հայազգի դիւանագիտական պաշտօնակայներ, որպէս միջնորդ յարաբերութեանց։ Ասոյ անկումն վերջ՝ կիսպոսի թագաւորները հայկական արքունիքաց յատուկ տիտղոսներ հաստատեցին կղզին մէջ, ՚ի նշան իրենց ժառանգական իրաւանց։

* Ուրենային սպասակով լինելու է որ Կիսպրոսի թագավորութերը Հայոց եղիսկազմունքն ճեղքով պահպանած են Ֆամակոսթայի Ա. Կիբուշ եկեղեցոյն մէջ:

Նկոսիոյ Հայոց Ներդեցոյն տապահաբարելէն միզնի վրայ փորագուած պատկեր մը կը սերկայացնէ մի տիկին շըեղազնեստ, և փառնէն արձանաբարձրթիւն մը այս իմաստով: «Այիս, գուստը աղնուական ձիասորին պարոն Յոհանն Պետուիին, ամսուսն աղնուական ձիասորին պարոն Յոհանն Ծիւերիաց-յ, մարշալաւուին Հայաստանի Թագավորութեան, վահճաննեցաւ շարաթ օրու Տեսաւեմեւունի 1857 թւուանինեւ:

Հայերը զինւորական ծառայութեանց մէջ ալ զանոնած
են կիսրոսի թագաւորաց ներքն։ Ժամանակադիր Մախե-
րաս, մի գէպքի առթիւ (1369) կը յիշատակէ «Թուրքօ-
բօլներ, Հայեր, զինեալ մարդոց խումբ մը...»։ Պետրոս
Բ.ի օրով երբ Ճենովացիք կը յարձակին ծովեղերք՝ «Գումա-
զստապլ Յակոբ իւուինեան միւս զօրքերն առաջնորդեց
գէպի Նիկոսիա, և ընտրելով ամենաքաջերէն 300 հոգի՝
զանոնք շարեց (Լարնաքայի) ծովեղերքին վրայ։ Այս վեր-
ջններուն հետ եկան միացան շատ մը տեղացի հետեւակ-
ներ, Հայեր և ուրիշ հետեւակ զինւորներ։ Ասիկա տեսնե-
լով Ճենովացիք չը համարձակեցան ցամաք ելելու (և զար-
ձան ՚ի լիմասոլ)։ Եղիստացւոց գէմ մղուած պատերազմի
մը մէջ կ'իյնայ լեռն եղիսկոսովն եղբայրը կոստանդին երէց
(1423)։ Նոյն թուականին ՚ի կիսրոս կ'ապրէր Սիր թու-
րոս կոսանց ձիաւոր։ Հայոց Մարաջախտի մը (Marescal
d' Armenie) ստորագրութիւնը կը կարգացուի մի վաւերա-
թղթի ներքն (1466)։ Երբ Յակոբ Բ. ի զինւորներն եկան
Նիկոսիայ վրայ՝ առաջին յարձակամը մղեցին «Հայոց
դրաներուն» դէմ, զորս կը պահպանէին Հայերը, և որք
թշնամուն բազմութեան առջն տեղի տալու սափուեցան
(1437)։ Այս թուականէն 10 տարի վերջ, երաշտու-
թեան առթիւ Հայոց կողմէ կատարուած կրօնական թափորի
մը յիշատակութիւնը կ'ընդորինակեմ ձեռագիր Յայսմա-
ռուրքէ մը, որ կը պահուի Նիկոսիոյ ազգ, զպրոցին մէջ։

«... Եւ եղի այս ով Քրիստոնասէր ժողովուրդ, ՚ի կիս-
րոս կըզոջ ի մայրաքաղաքն լեքուսիեայ սքանչելագործու-
թիւնս և զնշանս այս, զոր բազում բաղձանաւը կամիմ
պատմել ձեզ։ ՚Ի՞ թուէ, փրկչէն մերմէ մարդեղութիւնն ՈՒՆԻ-
(1467) ամի և ի մեծ թուականութեանս Հայոց Զժ. Զ.
՚ի Հայրապետութեան Տոն։ Ստեփաննոսի, և յեպիսկոպո-

նութեան կիպռոսիս Տէր Ասրդսին և թագաւորի Ուհազին *
զեկանեմբեր ժղ.։ Եղեալ էր երաշտութիւն և անձրև ոչ զայր
վասն մեղաց մերոց . . . և բազում ջրհորք և աղբերա-
կունք ցամաքեցան. և եկեալ Հոռոմին և ֆրանկնին ՚ի յա-
զաշանք ՚ի Տէր Ողորմեան երկու երեք անգամ վասն
անձրևու և ոչ անձրեաց։ Եւ ապա յետոյ Հայոց ազգս
առին հրաման ՚ի ֆրանզաց զի և նոքա ելանիցեն ի յա-
զաշանք ի Տէր Ողորմեան, և ժողովեցան և ելին եպիսկո-
պոսն և քահանային և ժողովուրպքն և վանականքն, արք
և կանայք, ծերք և աղայք առհասարակ. և ապավինուցաք
՚ի գթութիւն խաչեցելոյն վասն մեր Քրիստոսի Ածոյն., և
ի սր. Խաչ նորին սր. Նշանին Հայոց սր կայ այժմ ի քա-
զաքին լեքուսեայ զսքանչելագործ։ Եւ ընթացան ամենե-
քին առհասարակ սր. զգեստի շուրջառաց, և սր. Նշանաւ
և սր. Աւետարանաւ, սաղմոսիս աւրհնութեամբ և երդովի
հոգեորաւը և բազում արտասուաւը և պալատանաւը ել-
եալ ՚ի յարեկից զանն քաղաքին և զնացեալ մինչ Ասո-
րոց վանքն Ար. Խաչն և ամսակ զարձեալ եկեալ պաշտեուի ՚ի
քաղաքն, և մտեալ ի միւս զուսն Արևմտից քաղաքն։ և
երկինք և աւզն ամենեւին սպարզ էր իբրև զամանային, և
եկեալ ի տեղի մի որ կայը ջուր և որժամ՝ բնթեցան
կուրք Աւետարանն և զաղաւթման, և հասոցեալ զուրք
նշանն ի ջուրն, ո՛վ զարմանալի հիացմանս, զի ի նոյն ժա-
մայն ամպեց երկինքն արևմտից հիւսիսոյ կողմն և սկսաւ
անձրէ, և մինչև զերկիւն լիացոյց։ Եւ ուրախացեալ բերկրե-

* - Ուհազը պէտք է իմանալ Ու Շաղ, Զակոր Բ. Դուսինեան թա-
գաւորը։ Աս եր հօրբոջ նարլոդի ձեռքէն առա իշխանութիւնը, ակա-
մայ ամուսնացաւ Վենետիկի Աստարինէ Գործարոյի հետ որով Վենե-
տիկից գերակշռութիւն ձեռք բերին զղգին մէջ։ ՚իր մահը, որ տեղէ
ունեցաւ մի սրբութեան առթիւ ամրապնդեց Վենետիկան հանրապե-
տութեան իշխանութիւնը։

ցան ամենայն հաւատացեալ Քրիստոնեայքն և առաւել Հայոց ազգս որ փառաւորեաց զԱր. Նշանն և ծանեան ամենայն ազգ Քրիստոնէից զի ճշմարիտ և ուղղավատ հաւատ է Հայոց ազգիս : *

Լուսինեան թագաւորութեան վախճանին՝ վենետիկան հանրապետութիւնն որ 1489 ին իրավէս տիրացաւ կղզիին՝ հսկածութիւն կը ցուցնէ Հայերուն։ Ծերակոյտին կողմէ հրահանգ կը տրուի առաջին կուսակալին, Յզոստինոս Պարտպարիկային, որ «Հայոց այլ սահմանեալ թոշակները տայ իւրաբանչիւր արդեանց համեմատ, բայց երբ անոնք հեռանան կամ մեսնին՝ անսոց տեղ տրիշ անձ մը չի դնէ, առանց Ծերակայտին հարցնելու»։

ԺԶ. դարու սկիզբը (1303) կը յիշուի Մուրաս Անկիւրեացի որ Դաւրէժէն Կիպրոս կուգայ և կը պատմէ Հայասէր Շահ իսմայիլի՝ ընդդէմ Ուզուն Հասանի թոռան մղած պատերազմները, որոնց արդիւնքին շատ կարևորութիւն կ'ընծայէին վենետացիք։ 1504 ին Կիպրոսի Հայոց եպիսկոպոսն էր Դաւրէժը։ Այս կը տեղեկազրէ ի Վենետիկ (1545) Շահ իսմայիլի և Առութան Սելիմի պատերազմները, որոնց մասին մանրամատնօրէն լսած էր մի այցելու հայ եպիսկոպոսէ։

Եփարքսի Հայոց առևտրական յարաբերութիւնք ընդերկար կը շարունակուին, Յսմանեան յաղթութենէն վերջն ալ.

— Այս Յայսմատորքի Առաջին Յեշատակարանն է հետեւալը։ «Յուսնշն Ասոուծոյ և սիրով սրբոց նորա, նուաստ ոգիս Կիրակոս գարդակեալ Ուեւեցի ի վանոց Գետիկեցի։ Ի միայն հաւաքեցի զտանս սրբոց Այ, ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց, գրեցի և զամառան պատմութիւնն սացունց, որոց ոչ էր եղեալ ի զիս Յայսմաւուրց ։ Եւ եղե իւրաքութիւն այս ՉգԲ (1263) թուականի, յաշխարիս Կիրեկեցոց, ի Ախս մայրաքաղաքի, ի թագաւորութեան Հեթմայ և յառաջին ամիս իշխանութեան որդուց նորա, Անոն։ ՚Ի կզ. ամի կենաց պանդաստութեան մերոյ, յորում աւարտն եղե ի փառ Այսմաւուրց ։ Եւ աւրիւ յաւիսեանս»։ *

մինչև իսկ Հայերը Վենետիկան հանրապետութեան պաշտպանեանին կը նկատուէին Պարսիկ, Թաթար և այլ տրեկեան տէրութեանց ներքէ ալ։ Շատ վերջերը, 16 ՀՅին, երեսունի չափ Հայեր փոխանորդ կը կարդեն զԱյարութան որդի Յակոբայ, որպէս զի Քառասնից գատարանին մէջ բողոքէ Կիպրոսի մաքսառուաց զէմ, զիրենք նեղենուն համար։

ԺԶ. դարու վերջին կիսուն մէջ (1372), Կիպրացի լատին կրօնաւոր Հայոց Ատեփան Լուսինեան կ'աւանդէ հետեւալ տեղեկութիւնները։

«Հիմակ այս տեղ կը խօսուի 12 լեզու. լատիներէն, իտալերէն, աղաւաղեալ յանարէն, Հայերէն, զփաներէն, յակոբիկերէն, մարոներէն, ասորերէն, հագիկերէն, վրացերէն, ալբաներէն, մակեդոներէն, արաբերէն . . . Կիպրոսի Հայերն ունին երկու եպիսկոպոս, Նիկոսիա և Ջամակոսթա քաղաքներուն մէջ, որոնք կը հսկատակին միայն Հայոց պատրիարքին որ Կիլիկիա կը բնակի, զնա կ'ընդունին պիտ եւ կեղեցւոյ, որ Հոռմայ պապին հաւասար և նոյնանան իշխանութիւնն ունի։ Հայերն ունին նաև երեք զիւզ. Արաթարիք, Բւաթան (Քիթրէայի մօտ, լեբանոնց վրայ) և Փօրնօքիրէ։

«Մեր օրով եղբայր Յուլիան, Հայողզի լատինապատան Դոմինիկեանը եպիսկոպոս ընտրուեցաւ, եկաւ ՚ի Հոռմ Պիոս Դ. պապին, սիրով ընդունուեցաւ և հաստատուեցաւ։ Երբ Կիպրոս վերագրածաւ՝ Հայերը չուզեցին հնազանդի իրենց պատրիարքին և Պապը ճանչցան։ Յետոյ, նա վերցնել տուաւ շատ մը հերետիկոսութիւններ և նախալաշարութիւններ . . . իմ առաջին ուղեւորութեանն ատեն՝ այս բարի անձին Հայ եկայ Եւրոպա 1336 ին, երբ զեռ եպիսկոպոս չէր եղած, այլ վարժապետ էր։ Աւրիշ անգամ մ'ալ 1370 ին, երբ

* Տես՝ Հայոց Անունական Հ. Ղ. Անելանի։

թուրքը տիրեց կիպրոսի թագաւորութեան՝ զանազան կործեար համար իրեն հետ զնացի Հռոմ, Պապին: Նորին Սրբութինը տեսնելով զնա, և իմանալով որ բարի եպիսկոպոսը զմուած էր իր հովուական թեմէն՝ զինք յեպիսկոպոսութիւն որկեց 'ի Պուէ, Քալապրիա: Պիոս, պապն, այս բանն ըրաւ զի այդ տեղ կային բազմաթիւ Յոյներ, և յիշեալ գերազայժառը, թէն հայազգի՝ կիպրոսի յունարէնը կը խօսէր մայրենի բեղուին որէս: Մինչեւ հիմա կ'ասլի՛ հո՞ն»:*

* — Description de toute l'isle de Cypre et des roys, princes et seigneurs... par R. père F. Estienne de Lusignan de la Royale maison du Cypre.

Օսմանեան իշխանութեան ներքեւ.

Օսմանցիները կիպրոսի մէջ Հայոց նպաստաւոր տրամադրութիւն ցուցած կ'երեխն: Աւանդութեան մը նայելով Հայերը զիւրութիւններ ընծայած են արշաւող բանակին, ուստի Եկեղեցից լատին արքեպիսկոպոսը անէծք կարդացեր է Հայոց զէմ որ ԳՈ տունէ տւելի չը բազմանան: * Ինձ ծանօթ պատմիչները լուռ են այս մասին, բայց թերեւ ինչպէս աեղացի յոյներուն ուղարկեալ Հայերու մէջ հակակրութիւն կար վիճնետական իշխանութեան և լատին կղերին զէմ:

Ինչպէս Լատիններուն և Վիճնետացիներուն՝ այնպէս ալ Օսմանցիներու ժամանակ մայրաքաղաքին պահպանութեան կը ժամանակցէին Հայերը, և մինչեւ կէս զար տուած հայ պահապաններու յահնուած էր «Պաֆի գրան» կէսը. որմէ էր մնայ ցարդ Էրևենի Գափուտու բացատրութիւնը: Կար նաև Էրևենի Խօսկու անունով ծանօթ թնդանօթ մը, որ 1878 ին կ. Պոլիս փոխազրուած է:

Ներկայ զաղութի զիւրաւոր եկեղեցին, Ա. Աստուածածին, որ մայրաքաղաքի նուանման պահուն ազի շանմարան եղած էր՝ մինոյն տարին (1370), Հայոց կը յանձնուի յոստուկ Ցերմանով:

Այս եկեղեցին՝ մասն է կուսանցի մը, զոր «Երուսաղէմի Աստուածածին» անունով հիմնեց Պալտուին որ Պուլոն (1116 ին մեռած): Ի վերջոյ Վանքը կաշուցաւ «Տիրոսի Աստուածածին» (Notre Dame de Tuy): Հենրի Բ.

* Ա. Վիճնետացի զօրավար Անձելո Լամթի (որու ձեռագիրը հրատարակած է Բուլքարոս Քաղաքիների) վկայած է որ Ասմանեան բանակը կազմով 243, ու 20 հզզին մէջ էային 40000 հայեր, որոնք կը ծառայէին իրեւ ուսէվիրած: ամրութիւններ կը կառուցանէին, ականներ կը բանային և մեքնազործական աշխատութիւններ կը կատարէին: Եթէ վկայութիւնը անձեզ չէ՝ զէթ թիւը չափագանցեալ կերեւ:

տեսնելով որ շնորը թէ՛ ժամանակի և թէ՛ երկրաշարքի աղօղեցոյթեամբ վառապուած էր՝ կոյսիքուն հաւանութեամբ քանօղեաւ առաւ զայն, և ի հիմանց նորոգելու ձեռնարկեց։ Մինչ է 18000 բիզանդ ծախուած էր արդին եր իր եղրօրը Ամուրի (մեր Զատուուն և Կանանի ամուսնոյն) ձեռքով գահազուրկ եղաւ (1310):

« Այս կրուսանոցի Մայրապեան էր 1308 ին՝ քոյր Թիֆլի, խոր ծերութեան հասած հայ իշխանուհի մը, — Հեթում Ա. կուսարք, Ալիսոնի տէր Յուլիսանի այրին։ Իրմէ վերջ Մայրապեան կը լինի իր քայրը Մարիամ, * Գուրիան Խալիսեանի այրին, առարինութեամբն ալ մեծահամրաւ տիկին մը։

Քիչ ժամանակ վերջ կը տեսնենք Կարպուսեան (Chartreuse) կրօնաւորուհիները հասաւառուած այս վանցի մէջ։ Խոկ Թուրթուզա անուան գործածութիւնը կը կարծուի արշադանք շփոթութեան մը, որովհետև Կարպոսի մէջ կար մի որիշ արքայարան, « Թորթուզի Աստուածածին » անունով, (Notre Dame de Tortose):

Այս է չայոց տբուած Ջերմանի օրինակը։

« Եմիր իւլ իւմերայի քիրամ, քեսիր իւլ քիսպէրայի ֆիսամ, զիսլապար վելիչթիրամ, սահիպ իւ իզր վելիչթիշամ, և մուսիթասաս պիմելզիտի ինայէթ իւ մէլիք իւ էրպէր։ Դըպրը Պելերուիսի Մուղամփիւր, տասէ իրպալուհու։ Թէվզիի թէֆիի հիմայուն վասրդ ուրինադ, մալիսմ օլու քի

* Camille Enlart Մարգարիտ անունով կը միշտապէ այս տիկինը, ինչ որ չշենէի Է ի մէջ այլոց, չին ժամանակապութեան մը հանեւել առողջով։

.... Puis esposa la royne Ysabeau d'Ermenie Heiton, le fils Constans, qui estoit constable et baill d'Ermenie et oreint deus fis et cinq filles: Livon, Thoros, Sebille, Femie, Ritta, Ysabeau et Marie Marie esposa Gui de Ibelin,

Ավագօշա գալլոխուէ աման իւէ աղատ օւան էրմէնի թաշյիթէսինին պազր կէլուով՝ զալայը մէղպուրէտէ վաղի օւան թարթուզա ալչուելը մարտի զատիմի քինսիւէրինաէ հալիկա մըրի թուզ գոնըլմըրշ օլուով՝ պօշանուզպա իւրու քինսիւէրի օլմասըրն ըշնա լյլտիքւէրի էնլուն, պալուրտումը քի, կէօրիսիզ, ֆիլվադի թայիթէրի մէղպուրէ խաթիման իւէ խէլաս օլուով զիքր օլունան քինսիւէ զատիմի քինսիւէրի օւուով ճամիի շէրիֆ զարպինուէ տէյլի խէնսուէ օլուն թուզ պօշալաւալ թէմար օլուրգաւան ոսնըա ենին քինսիւէրի օլուով այնոնի պաթրէւէրի խոզր զապթ կլիշէւէր, ամամա վազը զատիմաւէն զիհատէ նէնսէ պինա էթանիրմէրուն հազէր էլլէյէսիզ, շէօյէ պիլէսիզ, ալամէթի շէրիֆէ իթիւմստ զըլասորզ։ Թահրիբն փի ալասրմը շէրիբ զիսէնձէ, ունիթէ սիմանին վէ սկզինէ վէ թիսամիյէ։

Մուրէթին միւթապըդէթիւն լի տալիչա։

Նիողիմը ան հիւ պիլա թաղեիր նէմմէզէ-հիւ-ֆաւզիր Մուհամմէտ խոնի Մուհամմէտ էլ միւլիլա պի զազայը էլֆզօշա։ Խոֆիյէ ան հիւմա։»

(Թարգմանուրիչն)

« Առ կիպրոսի Պէյէրալիի Մուզաֆֆիր, զերազնի Հրամանատարաց, պերճաշուր միծոյ միծաց, յարզելի և պատկառելի, միծազատի և միծափա, ամենամիծ թագաւորին (Աստուծոյ) տաւել շնորհօրն յատիալիս ընտրեալ, տեսկան բլույ բախտաւորութիւնը։

Երբ հասնի թագաւորական բարձր Հրավարտակը՝ յայտիցի որ Նիկոսիոյ բրդին մէջ թուզութիւն հայցենով փրկուած չայ ազգին ունանը հիան և աղաչեցին որ միշնայ ըլրդին մէջ զանուած թարթուզա անունով ծանօթ իրենց հէկեղեցին,

որուն մէջ հիմա պետական աղ գրուած է, երբ պարզուի՝
նորէն իրենց եկեղեցին ըլլայ: Այս պատճառով հրամայեցի
որ տեսնէք. ճմէ իրօք յիշեալ ազգը զթութիւն խնդրելով
ազատուած է, և իմէ յիշեալ եկեղեցին իրենց նախնի եւ
կեղեցին է և մզկիմի մօտ չէ մէջը գտնուած աղը պար-
սպուելով լմնալէ յիտոյ նորէն իրենց եկեղեցին ըլլայ, և
իրենց սնոսի ծէսին համեմատ տիրանան: Բայց հին գիր-
քէն աւելի բան շինել տալէ զգուշանար. այսպէս դիմնար.
փառաւոր նշանակին հաւատ ընծայէք:

Գիրուեցաւ զինեհանք ամսոյ կէսին, ինը հարիւր եօթա-
նասուն ութ թուականին (1370):

Պատճէնս համաձայն է բնագրին:

Անփոփոխ ընդօրինակուեցաւ բնագրէն: Գրեց, նուասսա,
Մուհամմէտ որդի Մուհամմէտի, զատաւոր Նիկոսիոյ գա-
ւարին մէջ: Աստուած ներէ երկուրին ալ (հօրը և որդւոյն):»

Յայնի չէ թէ եկեղեցին օսմանցիներէն առաջ երբ
և ինչպէս անցաւ Հայոց ձեռքը, և ինչու Յոյները
տարիներով կը զատավարէն անոր տիրանալու համար:
Յարդ պահուած հեօթերներու օրինակներէն զատելով Հա-
յերը առնուազն ՅՅ տարի զբաղած են Յոյներու գէմ և
հեազհետէ ձեռք բերած են տասնէ աւելի վաւերաթուզթեր
ինպաստ ազգին: Պատին ամենէն տափնապալի միջոցը
եղած է 1614 թուականը, յորում՝ համարակալ իսա էֆէն-
տին եկեղեցին ամուրդի կը հանէ, մէկ երրորդ մասը կը
վաճառէ Յունաց և երկու երրորդը Հայոց, և իրրի օրինար
ուր վաճառում սեփականութեան մուրհակ ալ կուտայ: Բա-
րեբազգաբար Հայերը կը յաջողին բեկանել տալու տրուած
վճիր և իրաւունք կուտանան ևս պահանջելու իրենց
դրամը: Յոյներն ալ նոյն առթիւ կը զատավարէն համարա-

կալին զէմ, որով Հայոց անկախ սեփականութիւնը կ'ըն-
դունուի, — թէն կը տեսնեք որ աղկէ ԶԱ տարի վերջն ալ
Յունական պահանջումները կրկնուած են:

Ահա այս վաճառումը բեկանող հեօթակը:

Սէպէսի թահրիրի քիթապը շէր'ի պու ալրը քի:
Տէրկեահը ալիի լազարէ մէրձիէն լիլ իւալի շալուշարնբան
Ֆէրուս շալուշ, զիյաէ զատրուհու, եւտինաէ ումումէն
մզկիրէի Գրալրսատա վագի գուտաթը իսլամէ իսլմապէն
Էմրի շէրիֆ վարիս օլուպ՝ մազմուն ը սաստէթ մազրու-
նընատան՝ նէղիրէի մզպուրէտէ մալ տէֆթէրտարը օլան
իսա, վէ Պէյէրպէյի միւսէլլիմ էլհաճճ Սիւէյմանըն
թէֆթէրի ֆէրման պուրումազին՝ իսթիսալէն աղտը
մէնլիս օլունուպ՝ միւսպաշիրի մզպուր մարիֆէլէրիէ միւ-
մանիւէյի իսա էֆէնտի վէ էլհաճճ Սիւէյման պէյ իւզարը
շէր' օլընալըտա՝ մահրուտէի էլֆուշտա սարին օլան
էրմէնի թայիփէնիստէն Սիմիօ վէլէտի Պաղէլ վէ Ասթուր...
վէ զայրիկէրի պա սէրիհիւմ մէնլիսի շէր'ի շէրիֆէ կէտուպ՝
միւշարիւէյի իսա էֆէնտի մահզարընտա շէոյլէ թահրիրի
քէւար էյէտիւէր քի, մզպուր իսա էֆէնտի Պաֆ գա-
փուսու գուրալինստէ Թարպուսի տէմէքլէ մարուփ օլան քի-
լիսա պա՛տ էլ ֆէթէ այինի պաթըրըմըզ իսզրէ իսպատէթ
էթմէք իշխն հիյնի ֆէթհատէ մէրհում Մուսմաֆա փա-
շա, նէվիւէր Սըլլահու մէրգատիչի, հազրէթէրի պիզէ թէմ-
ւիր վէ թային էտուպ էլիմիզէ գաթի թէմէսալը վէրուպ
մուժիպիննէ Տէրսատէթուն ահքեամը գաթիյէ վէրիւուպ
պունտան աղտէմ մուճիպիննէ հիսքեամը զիւլիհմի-
րամ հուզուրլարընտա Փալր խուսումէթ օլունուպ՝ քիլիսէի
մզպուրէ եւտիմիզտէ իսպա օլունմադ իսզրէ հիւճէճի շէր-
իյէ վէրիմիշ իրէն, պի զէյրի հազըն, մզպուր իսա

էֆէնտի քիլիսայը մէզպուրը պիլա թէմէսսիւք զապթ էտիր՝
սիլ տէյու սիլսինիւ քէֆէրէի թումա վէ սիլսանընը սիլէ
պէյ էտէրիզ տէյու զուլմէն սիլստէն օթուզ ալթը պէն
ագչէ ալտը. քիլիսէի մէզպուր սիլիմ եէտիմիզտէ միւրի-
յէթ իւզրէ թասարրուֆումուզտա իրէն՝ ֆիզուկի պիզէ
պէյ էթարիմ տէյու ալտուզը ազէյի էմսի շէրիփ մուճի-
պինձէ ալբէրիլմէսինի թաւէլ իւէրիզ աէտիբէրինտէ,
խաւէսսիւալ միւշարիէյին իսա էֆէնտի ճէվապ վէրուպ,
ֆիշազիգա, քիլիսայը մէզպուրէ սիւտանընը էրմէնի թա-
յիփէնինէ եիկիրմի պիր պին իւչ եիզ ազչէյէ պէյ էտուպ
ազչէնինի ալտըմ տէյու իղրար վէ իթիրափ էտուպ, մէզ-
ուրուուն էրմէնիլէրին եէտէլընտէ օլտն ահընամը զաթէյէ
վէ հիւճէճի շէրիյէյէ նազար օլունտուզտա՝ ֆիլվազի, քի-
լիսայը մէզպուրէ քիրարէն մէզպուրուն էրմէնիէրէ պէր
մուճիսի էմրի շէրիփ իւչ տէփտ հիւրմ օլունտուզունտ
եէտէրինտէ օլտն հիւճէթի շէրիյէլէրի տավարլարընա
միւթապըզ օլմազին՝ մէզպուր եիկիրմի պիր պին
իւչ եիզ ազչէ մէզպուրուն էրմէնիէրէ հիւրմ պիրէ հէ-
զէ իւ վասիկա զըպալէթթալապ քէթու օլունտու։ Ֆի էվա-
խրոը շէրիփ թէմէզան իւլ մէտարէք, լի սէնէթի սէլասէ-
թէ ու աշըրինէ ու էլփ։

(Թարգմանուրիւն)

«Պատճառ դրութեան Օրինական գրոյս այս է որ։

Բարձր զրան — մշտնջենապէս թող լինի ամենարարձր
անձաց զիմելու տեղը — բարապաննիրէն ֆէրուխ չավուշ, —
թող աւելնայ անոր յարզը եկած է, իր ձեռքն աւնենալով
իիլրուի մէջ զանուոզ համայն իուլամ զատաւոր
ներուն ուղղեալ նորիրական հրամանազիր, որուն երջանու

կաշնորհ բովանազակութեան մէջ հրաման տրուած ըլյան
լով որ յիշեալ կղզոյն դանձային լնողհ. համարակալ իսա,
և Պէյլերպէյի զաւասուղեա էլհաման քննութեան
ենթարկուին՝ լսու այնմ, ժաղով կազմուելով, յիշեալ բարա-
պանի միջոցա յիշեալ իսա էֆէնտի և էլհաման Սիւէյման
Փէյ, Ատեանին առջն րերուելով, Նիկոսիա քաղաքի մէջ
բնակող Հայոց ազգէն Սիմէռն որդի Ղաղաքի, և Աստուր
որդի ... ի, և այլք, հանգերձ իրենց գլխաւորով, նուրիրական
Օրինաց Ատեանը գալով, յիշեալ իսա էֆէնտի առջն այս-
պէս խօսիցան։ «Պաֆի զրան մօտը, Թարգուսի անուշ
նով ծանօթ եկեղեցին, (Յամանեան) նուածումէն վերջը,
հանգուցեալ Մուսթաֆա փաշա, — Աստուր լուսաւորէ գե-
րեզմանը — մեզի սեփականից և յատկացուց, որպէս զի մեր
մնուի ծէսին համեմատ ազօթենք, և ձեռքերնիս վճռական
մուրհակ տալով ըստ այնմ է. Պոլիսէն վերջնական հրա-
մանազիր արուած և ասկէ առաջ անոր համեմատ մեծա-
րելի զատաւորներուն առջն ալ վէճը լուծուած և մեզի օրի-
նական ծէօձէկրներ արուած էին որ յիշեալ եկեղեցին մեր
ձեռքը մնայ, ասոնց հակառակ՝ յիշեալ իսա էֆէնտին ա-
նիրաւորար, լսելով որ գուք այդ եկեղեցին առանց մուր-
հակի կը զրաւէք՝ և լսելով որ մէկ երրորդը Յոյն որա-
ցողներուն և երկու երրորդը ձեզի կը ծախննք՝ մեզմէ բոնի
առա երեսուն վեց հաղար սասակ; Փառաւոր հրամանազրին
համաձայն կը պահանջնք որ եա անուի այն զրամը զոր
յանիրաւի մեզմէ ստացաւ որպէս թէ մեզի վաճառած
ըլլալով յիշեալ եկեղեցին, մինչեւ անիկա մեր ձեռքն էր
իրեւ մեր սեփականութիւնը»։ Երբ ասիկա ըսին՝ յիշեալ իսա
էֆէնտին, իրեն հարցուելուն՝ պատասխանից և ընկունեց
և խոստովանեցաւ որ արգարե յիշեալ եկեղեցւայ երկու երրոր-
դը Հայոց ազգին ծափեցի քան մէկ հաղար երեք հարիւր

սուակի, և գրամը առի: Ուստի յիշեալ Հայոց ձեռքը եղած բացարձակ հրամանազիբներուն և օրինական մուլհակներուն նայուելով (աեսնուեցաւ որ) իրօք յիշեալ եկեղեցին կրկին կրկին յիշեալ Հայոց վճռուած է, և ասոր համար նուիրական հրամանազիբն համեմտա ձեռքերնին դանուած օրինական մուրհակները իրենց պահանջին համաձայն են: Հետեաբար յիշեալ գումարը, քսան մէկ հազար երեք հարիբ ստակը* Հայոց (արուելու) վճռուելով՝ այս վկայակիրը, ի պահանջման զրուեցաւ: Ի վերջ օրհնեալ թամազան ամսոյ. հազար քսան և երեք թուականին (1613):»

Պէտք է զիտնալ որ Թուրքերն ալ պահ մը հետամուա գանուած են այս եկեղեցին իրեն մէկիթ գործածելու: Բարեբազզարար ժամանակին Միւֆթին՝ անոնց հակառակ վճիռ արձակած և ինպիրը փակած է:

Պատճառ չկայ տարակուսելու որ Ա. Աստուածածին նախապէս լատին կրօնաւորներու եկեղեցին էր. շնչին ձեւն ալ կը յայսնէ այդ բանը: Սակայն տարակոյ չկայ նաև որ օսմանցիներէ առաջ իսկ փոխանցուած էր հայերուն: Կանխաւ յիշուած ձեռագիր Յայսմաւուրքի երրորդ յիշատակազրողը, Թուրմա Ալտրպատականցին, այս մասսին թուղած է մեծարմէք վկայութիւն մը: Յիշելէ յետոյ իր օրով կատարուած վերանորողութիւնը՝ կ'ըսէ, «... և մինչեռ կազմէաք զեկեղեցին՝ դատաք յարմ եկեղեցւոյն մարմարինեայ խաչ մի զար կազմեալ էր յջ և յժո թուումըն (1460): Այս և պատմութիւնն իմն սակս երաշտութեան յջ և ջ թուին (1467) եղեալ ի սկզբան Այսմաւորաց ի Արքի եպիսկոպոսէ, որ էր լեալ Առաջնորդ քաղաքին Լաւքօշայ. դատաք նաև որ է ի սկզբըն ձաշու գըշ Երեք ստակ (առէէ) կ'արժէ մէկ փարա. 40 փարա կ'արժէ մէկ դահնեկան:

բոյն եղեալ ի Դաւիթ եպիսկոպոսէ ումեմնէ յջնի (1504) թիւ: Ուստի և սա ամենամեզս և թափուրս ի լաւագունից, թուումա, լոկ անուանը յօդեալ յերամս բանասիրաց, պարտ վարկայ՝ զերեսին վկայութիւնս դայսոսիկ ի մի վայր պարունակել, զի սոքին երեքեան թիւքս հաստատահիմն վը կայութեամբ ցուցանեն զլինել տաճարիս որբոյ ի ձեռս Հայոց յառաջազոյն քան զգալն Յաճկաց, վասն որոյ խնդրեմ ի սրբազնն հարցդ զինի եղելոց, անմնուաց յիշմամբ ունելի մաի զօրեղ և զհաստատուն վկայութիւնս զայսոսիկ, զի գուցէ արգեօր յորժամ երեսցին ներհակը ումանը սակս եկեղեցւոյ որբոյ ինդեանց զոլ ասելով՝ սոքօք հերքել և պապանձեցուցանել զամենայն հակառակողորոշու: Գրեցաւ սա ձեռօքն ամենավարան թուումայի: * Ռձժի և թուին (1638):»

Այս տողերէ կը հասկցուի որ, թէն եկեղեցին հայոց բացարձակ սեփականութիւն կը մնայ, բայց յունաց կողմէ պահանջումը զեռ չը դադարիր օսմանցուց մուտքէն զրկիթէ մինչև մէկ զար են. և որ ուշազրաւն է տւելի՝ հայոց կողմէ տարուէ տարի յունաց արքեպիսկոպոսին սուրճ, շաքար, բրինձ են. ընծայ զրկելու սովորութիւնն մը կը շարունակուի մինչև դարբու սկիզբները:

Ա.Աստուածածնի խորանին կողմէն պատուի անհատուած կայ իւղաւուն մը որ Ա. Արքիս կը կոչուի, երբեմն հոն զրուած պատկերին անունով: Եկեղեցւոյն արևմտեան մասսին ալ այժմ կանանց յատկացուած և Ա. Գէորգ անունով ծանօթ է, մանաւանդ յոյներու, որոնք զեռ կը այցելն հոն կախուած Ա. Գէորգի պատկերին: Կարելի չեղաւ ճշգել հայոց նախկին եկեղեցւոյն տեղը, թէն տես-

* Այս է Թովքմաս վարդապետ (Ճետոյ եպիսկոպոս) Դուրիհանեան, հայ արքագրութեան բազմերախտ աշխատաւոր մը: Վախճանեցաւ ՋԱ. մնդերտամ:

դացիք սմանք կը զրոցեն Ա. Գևորգ անուն Ավելցույ մը
դրյաթիւնը ազգային գերեզմանատան մօտերը, նոյնպէս
Պօղոս-Պետրոս անունով մատուռի մը՝ միենոյն կողմէրը*:

Նիկոսիային գուրս, Կիպրոսի հայկական ամենահին յիշալիքը կը համարուի ֆամակոթայի մատուռը, ուրուն գմիկթը մասամբ, և սեղանն ամբողջովին կործանած էն: Չունի հին արձանազրութիւններ բացի հայերէն միքանի տառերէ, որոնք կը նշանարուին պատերուն վրայի եղուած պատկերներուն վերէ: Ասոնցմէ զատ՝ քարերու վրայ կը կարգացուին վերջին այցելուներու անուններ և թուականներ, ամենահինը 200 տարուան: Ասոնց կարզին՝ կը տեսնուի մի Աստուածատոր վարդապետ 1714ին, և Կիսարացի Թագէսս վարդապետ 1718ին?: Երուսաղէմի վանուց ձեռագիրներէն մի «Խորհրդածութիւն սրբազն պատարաղի» կը պարունակէ այս յիշատակարանը: «Պըրիցաւ դիբըս այս ձեռագիր անիմաստի մեղացելոյ Յօհաննիսի սպասաւորի տասուածային բանի, և թուականիս Հայկաղեան սեսի Զեզ (1317) ի Կիպրոս կզզի, ի գուռն Աստուծոյ մօր տաճարին Աստուածածնի որ է վանք, և կաչի լանչուոր, ի քաղաքի Մազուսա»: Յայտնի չէ թէ ներկայ կիսաւեր մատուռը սոյն Կանչուոր վանքինն է: **

Ֆամակոթայի և Շիսկոպիի եկեղեցիներէն զատ՝ ձեռագիրներու մէջ յիշուած կան Ա. Խուչ և Ա. Հրեշտակապետ, որոնց առաջնոյն տեղն անձանօթ է ինձ: Իսկ Հրեշտակա-

* Հնագէտ պ. Անլարի կատարած աեղութերը Հայոց գերեզմանատան մօտ գուրս բերին հին եկեղեցոյ մը հմերը, (1902): Ա՛յսուի որ այս է Հայոց նախկին եկեղեցին, զոր իսպարած ևն Կարդուսեանները և փոխարակած ևն իրենց եկեղեցայն հետ:

** Վեհանայի հայերէն ձեռագրաց Յուղակին մէշ (Հատոր Ա., Գիրք Բ., 1905) թուն ըստ մասին ի Մազուսա (Մազուսայն) Կիպրոսու . . . :

լիետ կը դանուեր, ըստ «Սիսուան»՝ Ճիշտ գիւղի մէջ, որ հաւանօրէն՝ նոյն խել Քօրնո-Քիրոյ կամ Քօրնո-Ճիշտ պոյ հայկական գիւղն է, այժմեան թրքացած Կիւրնէրը: Հան կայ եկեղեցոյ աւերակ մը:

Այս եկեղեցիներու և անոնց սեփական կալուածներու լրումն ու աւերամբ բնական հետանքն են հայ ժողովրդի հետպհետէ նուազման, որ նոյնպէս հետեանքն էր, կարծեմ, կրօնափոխութեան և արտազադութեան: ԺՈ. զարու Կիսուն (1743)՝ մի անզիփացի ուղեւոր -Richard Pococke - զբած է: «Թէի յոյժ սակաւաթիւ հայեր կան (ի Նիկոսիա), բայց և այնպէս հին եկեղեցի մունին հսու, ... խիստ չբաւոր են, թէի ունին արքեպիսկոպոս մը, և լեռներուն կոզմն ալ՝ վանքը մը»: Աւելի ասած, 1734 ին՝ Նախիջեանցի տիսաւոր մը վանքի մասին կը զրէ թէ էր «քարբրեալ և խաղակալ և ամայի. չկայր կրօնաւոր», թէի մինոյն տարին վանքի մէջ նորոգութիւններ կը կատարուին ձեռամբ Յարութիւն վարդապետի: *

Քարերազգաբար այդ միջոցներուն իրարու կը յաջորդին մի քանի զործոն հոգեւորականներ, որոնք թէ քարպի եկեղեցւոյն և թէ վանքին համար նոր հասոյթներ կ'ապահովին: Թիերեւս ատոնց շնորհիւ է որ Եփովրոսի մէջ խապա չէ անհետացած հայութիւնը: Գրաւոր յիշատակութիւններէ կը տեսնենք որ նախ Քիմերէայի մէջ կը դնուի երեք ու կէս արտավար հող (1744) Գրիգոր Շղթայակիր պատրիարքին զրամով: Դոյն գիւղը, եօլ Տէյիրակնի Հաղացրին կէսը՝ 1751ին կը նուիրուի Ասացնորդ Յովուէփ վարդապետին: Այն միջոցներուն կը դնուին Պաշ փուշեարի հողերը - վանքի ճանապարհին վրայ - նաև վանքին ծու-

* Այս նորոգութիւնն արտօնութ Մարտակէլէ: ին մէջ Քարութիւն մարտակէլէ գոյն գիւղն է Անդրանիկ անդրանիկ Պատրիարքի պալետը կաչուած է Անդրանիկ քահանա քահանա:

վեղերեայ մասը: Ասոնց կը յաջորդեն Մարտիրոս եպիսկոպոսի կտակած երեք չաղացքները, վերոյիշեալ զիւղին մէջ, որոնց երկուքը գեռ կը մնան ազգին ձեռքը: Մարտիրոսի յաջորդ Յակոբ եպիսկոպոսի օրով (1783-1799) կը կատարուի Առաջնորդարանի տեղափոխումը, որու պարագաները յայտնող վկայաթղթին սկիզբը՝ կը կարգանք այս առողերը:

«Արդ՝ զայս ինչ յայտ լիցի յԱրամեանս գրոհիցդ. զի շուրջ զժուականութեանս մերում. որ 'ի ՌՄԼԲ (1789) յունվարի ա. ին. և Տէր Յակոբ Եպո., որ և առաջնորդ 'ի Կիպրոս ժողով. ևան. Ար. Ածածնայ. Եկեղեցւոյ. և կամօք իմալք, մեր հին առաջնորդարանն, որ էր ջրի տօւալի ետեն. յարեկից կուոէ, կարի հին և նեղ տեղի, փոխեցի հետ մշտի. Յովլակիմի որդուցն, բարեպաշտոն, մհամի. Յարուի, և Արգիս ամիրայիցն, և առի իւրեանց մուլքըն, որ Եկեղեցւոյ պարտիզի, յարեւուտն է և արարի առաջնորդարան. ւու բնարձակ տեղ է, քան զիմ տվածն երկու զաթ աւելի, թէ տունն, և թէ միջի պարտէզն. են են . . . »:

ԺԹ. զարու սկիզբը՝ Էտիրնէցի Մկրտիչ վարդապետ և Տաթևացի Պօղոս վարդապետ հոգեր կը կատկեն վանքին: Նոյն միջացին՝ նշանաւոր կը լինի Առաջնորդ Յովլականնես եպիսկոպոս, ըստ ամենայն հաւանականութեան նոյն Յովլականնես վարդապետան՝ որ ծայրագունութեան աստիճան սահացած էր 1784 ին, Ասոյ թէ ողովորոս կաթողիկոսէն: Ուշադրաւ են այս առմիւ տրուած կոնդակին հետեւալ մասերը:

«Յի. Քի. ծառայ Տէր թէ ողովորոս կաթողիկոս ամենայն Հայոց, որ և պատրիարք Տանն Կիլիկիոյ և սպասաւոր Առաստարչի Աջոյն երկնահանդէտ և վեհափառ Աթոռոյն

Նորին աշակերտ ևս յետնեալս որ նարդենիս եմ կաթողիկոս ասեալ, առեալ զշնորհս այս և զատահճանս ծայրագոյն վարդապետութեան 'ի վերոգրեալ վեհէ, այսինքն ի Միքայէլ սրբազնակատար կաթողիկոսէ, շնորհեցի Ցն. Յօհաննու հրեշտակակրօն վարդապետի վանականի 'ի միարանութեանցն ուխտի Սրբոյն Մակարայ խստակրօն ճըպնաւորի, որ 'ի Կիպրոս կղզւոյ, զի եկեալ էր սա վասն ժողովարարութեան յԱտանայ քաղաք, և ետու զգաւազան ծայրագունի, այսինքն մեծ վարդապետութեան, 'ի թվին Հայոց ՌՄԼԲ ամին, յըսկիզբն դեկտեմբեր ամսոյ, ի մէջ սրբոյ Եկեղեցւոյ յանուն նախավկային Քսի. սրբոյն Ատեփաննոսի, առաջի բազմամբոսի ժողովրեան, և երկու ծայրագոյն վարդապետոք, որք խարտակակ եղեն սմա, այսինքն Կարապետ և Ղիրակոս խմասնատենչ վարդապետօք: որ թելագրութեամբ հոգուոյն սրբոյ գոլովլ իմ յԱտանայ, ետու զվարդապետական իշխանութիւնս զայս, Ցը. Յօհան մաքրակենցաղ վարդապետին, այսինքն զշորեքտասան իշխանութիւնս, որ և 'ի սրբոյ Երջանկաց՝ վարկանի ծայրագոյն վարդապետական իշխանութիւն: Զկարգն քահանայութեան և արեղայութեան 'ի Մարտիրոս ծերունի և լուսահոգի վարդապետէն, որ գէտ և Առաջնորդ էր Կիպրոսի ընկալեալ. և զատահճան մասնաւոր վարդապետութեան՝ 'ի Գաւթայ եպիսկոպոսէ Պէլէնկցոյ ընկալեալ. և զատահճան մեծի վարդապետութեան ընկալաւ. յինչն: Եւ արդ այսուհետե ունի իշխանութիւն 'ի Հոգուոյն սրբոյ և յինչն զոր ընկալաւ 'ի ձեսնապրաթեանս նոսիլ և բազմի ի վերայ մետաքրեայ և կերպարքեայ Աթոռոյն, նա ևս թագիւ բարդաւաճեալ և պճնեալ յանդիման մինիւ սրբութեանցն :

Գլեցաւ զիրս և կոնդակս օրհնութեան և վկայականի ձայրագոյն վարդապետութեան, 'ի թվաբերութեան Արամշեանս տոհմի Ռ.Մ.Դ. (1784) և գեկտեմբեր ամսոյ ժ և է, ընդ հովանեաւ սրբոց չորից աջերաց, որք աստ կան 'ի պահպանութիւն ազդիս Հայոց:»*

Այս Յովհաննէս վարդապետի առաջնորդական պաշտօնը հաստատող կոնդակներ արուած են, թէ՝ Դանիէլ պատրիարք - կաթողիկոսէն (1799) և թէ՝ Յովհաննէս պատրիարքէն (1800): Վերջինս ունի թուրքեին լեզուով զբառած օրինակ մ'ալ, երկու մեզր երկար թղթի վրայ: Յիշեալ հայերէն կոնդակին սկիզբը և վերջին մի քանի տողերը կ'օրինակեմ աստ:

«Յի. Քի. ծառայ Տէր Յօվհաննէս վարդապետ և Արքիհապիսկոպոս, որ և շնորհօք սուրբ Հոգուոյն Աստուծոյ ճշմարտի կոչեցնել վերատեսուչ և Պատրիարք մեծի արքայանիստ թագաւորեալ մայրաքաղաքիս կոստանդնուպոլսոյ: Յորքէ ժամանեալ հասցէ զիր օրհնութեան և նամակ պահպանութեան, շնորհը առաքելական Աստուծային բազմապատիկ օրհնութիւնն և նախախնամական զմութիւնըն ի վերայ հոչակաւոր բարեկի կրզզոյն կիպրոսի և ի միջի զորին կառացեալ և հաստատեալ սրբոց եկեղեցնեաց և եկեղեցական մանկանց, այսինքն սրբանուէր և մաքրաբանցաղ քահանայից, ուսումնաուէր սարկաւագ, հաւատարիմ երեցփոխանաց, բարեկաշաօն և Աստուծանէր իշխանոց և Աստուծով զօրացնեալ աշօլլիթեաւորաց, աստածեան խօճաներաց, պարսն վաճառականաց, բազմահնար արուեստաւորաց, արդարավաստակ և քրանաջան հողա-

* Սոյ Ակրուէ կաթողիկոսի կատարած Աւոսնի օրհնութեան հանդիսէ ըշ մէջ (1886) հետեւալ աֆերը տեսաւեցան — Եր. Լուսաւորչ, Նիկողայոս Աքանչեակործի, Ակղեւսորոս հայրապետի և Պարսում հգնաւորի

գործաց, մեծաց և փարունց, արանց եւ կանանց, ծերոց և տղայց, երիտասարդաց և կուսից և ամենայն չափու հասակի խնդալ ի Տէր Յիսուս առ յոյն բնաւից:

•
ամենիրեան գհնաղանդութենէ բուռն հարեալը մի՛ ոք իցէ որ իշխանութեան և ըստ կարզի հրամանի սիրելի եղբօր մերոյ և Առաջնորդին ձերոյ Ճն. Յօհաննու համեստափայլ և բազգրարարոյ վարդապետին և շնորհունակ եղիսկոսով սին հակառակ երեխցի...»:

Այս կոնդակներէն զատ՝ պահուած կը մնայ Յովհաննէս և նու եղիսկոսոսի առաջնորդական Պիրարն ալ, Առութան լիւմի՞ Գ. Էն արաւած:

Յովհաննէսի յաջորդ Պետրոս վարդապետի օրով (1812) կ. Պոլսէն զրկուած է ֆէրմանի մը օրինակը, որով Առութան Մահմուտ Բ., իստիւ կ'արդիկէ կ. Պոլսոյ և զաւաց մէջ հայերու ամսունութիւնը խլամ խմաներու երիւանով, նաև Փրանկներու հետ խնամութիւնը: Խնը տարի վերջ (1821), Ատենքանսո վարդապետի առաջնորդութեան ատեն, Երուսաղէմի Պարիիւ պատրիարքէն զըրեաւած է կոնդակ մը, որ յառաջարանի եւ օրհնութեան սովորական բանաձեւն յետնյ կը շարունակուի այսպէս:

«... Ծաներոր, հարազատ հողեոր զաւակունը մեր ի Տէր, զի որովհետե ՚ի հարիւրաւոր ամաց հետէ բնակեալ և մը խաղաղութեամբ՝ ՚ի խնամն Օսմաննեան աէրութեան, պարտական և մը աղօթող լինել միշտ վասն հաստատութեան աէրութեան նորա, զոր տէր Աստուծուծ՝ ՚ի խաղաղութեան պահսացէ, զթշնամիս նորա կորպուի արացի, բարեկաշտ շէֆրէթիւ ինայէթիւ մէրհամէթիւ Ոութան Մահմուտ ողորմած թագաւորին մերոյ կհանս եր-

կարս խաղաղականս պարզենցէ, և տէրութեանն գրան գործակալաց զօրութիւն և կարողութիւն ատցէ, զսիրս նոցա ի վերայ Հայոց աղջի քաղցրացուցէ, և զաղզս մեր ՚ի հնազանդութեան պահեսցէ. որբ յարածամ ջանան պահել զաղզս մեր ՚ի վնասակարաց որպէս և այժմ։ վասնղի ՚ի կողմանէ տէրութեանն սաստիկ և սաստիկ ֆէրման եկն առ մեղ վասն Ուլահ Պուղտանու երիբի խոռոշութեան և ապստամբութեան, ուստի զմիտ արքունի հրամանին աստ բոլոր ազգին յայտնի ծանուցաք թէպէտ, բայց հրամանն այսպէս է զի յամենայն տեղիս ուր գտանի ազգ մեր Հայոց՝ ծանուցուք կանգակաւ, և այս է միտ բանին, զոր բարւոր ՚ի միտ առնուլ պարա է։ Զի յայսմ ամի ՚ի մեռանել Ուլահու Պէկին՝ յառաջազան փախուցեալ խփուլանղի Պէկի որդի Աւերսանղըն՝ յայտմանէ իբրու նիւթ գտեալ յերկիրն Պուղտանու ապստամբութիւն յարուցանէ, և Պուղտանու Մ'իխալ Պէկին ևս մոռացեալ զայն բան երախտիս մեծազօր տէրութեանն և յիմարաբար հավանեալ ՚ի կամս ապստամբից ՚ի վնաս անձանց և աղղին, ընդգէմ իրաւանց և արդարութեանն զապստամբութեան միտու ստացեալ. գորովազութ, ողորմած Օսմանեան մեծայազթ տէրութեանն հակառակ շարժելով զանմիտ սրիկայս ՚ի մի ժողովեալ՝ զերկիրն վրային. յամենայն տեղիս ուստ համբաւ և զիր առաքելով զրաբարտութեամբ. որպէս թէ ազգն իւրեանց միակամ լիցն ընդ չար խորհուրդ իւրեանց։

«Եւ ապա այս քրէական յանցանք յայտնի եղեալ տէրութեանն՝ յատկապէս ինայելով ՚ի հասարակութիւնն, հրաման առաքեաց մեղ ծանուցանել աֆօրողի բոլոր աղղիս Հայոց որբ բնակեալը են ընդ հովանեաւ տէրութեանն խրոյ, զի թէ զիտէ որ զապստամբութեան միտք ունեցող մարդ կամ զայն յիշեալ զրաբարտական սուսա զրեանսն ահաեալ իցէ, կամ ՚ի ձեռու իւր անցեալ և կամ»

զիտէ թէ որո՞յ մօտ կայ, և կամ ընդ տէրութեան արարմունք ունեցող մարդ թէ գտանի՞ ո՞վ ոք և իցէ զայնպիտեացն՝ ճշմարտութեամբ և անպատճառ խաղար տացէ զաղիթին որ բարնան զայնպիտի վնասակար անձինսն ՚ի միջոյ վարչն խողազութեան և անզորրութեան հասարակաց որպէս և ոմանը ՚ի հարազատաց զայնպիտի ապստամբութեան յորդգորիչ զրեանսն գտեալ տառեալ են տէրութեան։ իսկ եթէ զիտէ և ծածկէ և խաղար չտայ զաղիթին՝ յետոյ մինչ իմացուի, չարաշար զատապարտի և բազում վնասուց պատճառ լինի, զի ըստ Տեսան բանի՞ ոչ ինչ է ծածուկ որ ոչ յայտնեցի. եղազանի որ ոչ ծանիցի։ Շտատի ափօրողով և նոսվիք, ըստ հրամանի տէրութեանն պատճիւրմբ ամենիցդ առհասարակ զգուշ մնալ, արթուն լինել, և անյապաղ կատարել զհրամանն տէրութեան. ըստ վերաբերուցն. զի մի՛ անկանիջիք ՚ի փորձութիւնն. քանզի այս է հարազատ և ստագաթկիւզար լինել. որպէս մինչ ցարդ անխարդախ մաօք ունիմք զնոյն հարազատութիւնն առ յաղթօո տէրութիւնն, զոր միշտ պահելով ՚ի հաստատութեան, պարախմբ առաւել ևս վրէժինղիր լինել տէրութեան կամաց հակառակ կացողին։

«Ապաքէն զայս ամենայն բարեզը ՚ի միտ առեալ ՚ի չափ հոգւոյ պարտիմբ զգաստ մնալ ՚ի վնասակարաց, և խոչ հեմութեամբ կենցազավարիլ յամենայն ուրեք և ծանաչել զտէրութեան հայրական գութն որ ՚ի վերայ մեր և լինել ազօթարար միշտ մասն պայծառութեան և հաստատութեան տէրութեանն, ըստ առաքելական բանի։ Նաև պատիւրմբ չխօսիլ բնատ զձեր վերայ հարկ չեղած մասլաւ համն, մանաւանդ թէ տէրութեան միթալիի խօսեր չէ պարս ՚ի բերանս ձեր գտանել զի յայտ է եթէ վնաս մեծ լինի ազգին. զոր Տէր մի՛ արացէ. այլ

պարտ է ամենայն մարզոյ խոր գործոյն և խոր առեւտքին մուխայէթ լինել առ ազատ մալ յամենայն վիասուց հազուոյ և մարմայ: Նաև ծանիցնար, զի յատկապէս կրկնեմբ զմիտ ֆերմանին: Խաթր կեօնուել շինայելով, որպէս ի վերոյ գրեալ է, աէրութեան հակառակ եթէ ոք գառնիցի՛ կամ յայտնեցը զապիթին տիգորդ, և կամ զապիթի զիտութեամբ առ մեզ առաքենչիք, քանզի եթէ ի մէջ հասարակութեան ապաստամբութեան մտօր մարդ գտցի ոչ թէ միայն զայնպիսին, այլ և զառաջնորդուն, զբահանայն և զիշխանոն ի միասին զասապարտեաց են, վասն զի ի կողմանէ աէրութեան թէստիլներ յատուկ լրտեսներ յամենայն տեղիս յդեցան, որը եթէ զայցին զոք ապստամբ ընդպէտ կամաց տէրութեան՝ զայնպիսին յո՞ր ազգէ և իցէ, հանդերձ զիխաւորոքն սպասելոց են, և զայս պատարիմբը ամենեցաւնցը փակեսլ ի ներքոյ բանադրանաց, որ մի լինիցի ումեք զայնպիսին ի զիտելն թաղուցանել զի մի անկանիցիք ի փարձութենու, վասն զի յանուն մտութեանն Աստուծոյ երդուեալ է տէրութիւնն անինոյ պատճել թէ՝ զապատամբոն և թէ զթագուցանուն այն պիսեաց: Ազարէն ի սակաւոց աստի բազումն իմաստաւսիրեալ զզրեցեալս ըստ ամենայնի զգուշութեամբ ի արթնուաթեամբ և փաւթալ կատարելով երտեր աղջ և օրչնեալը յԱստուծոյ և ամենայն որբոց նորա և ի մէջ: Ամէն:

Վերսյիշեալ Ասեիսանոս վարդապետի օրով (1818) Խօսնա Սարդիսի կինը Մարիամ և որդին Մարտիրոս ազգին կը նուիրեն տուն մը, եկեղեցւոյն կից, և երկու ջրաշացք՝ Վիթրէայի մէջ: Նոյնպէս, Բալուցի սարափ Յաւրուն ամիկան Անտոնիան կը նոյիք եկեղեցւոյն կից քեօշի մը, որուն աեղը կը զանուին այժմ՝ երկու սեհեալ կարգապետի վարչութեամբն Ա. և Հարմանաւ Ծն. Միքայէլի սրբազն Վթղիսի. Հօր մերայ հողեւորի եկեալ Ած. ապահ կղզիս կիպրոսի ի զործ նուիրակուն, որոյ մեսոնի ...» և որ կը ձեմանզրէ զյակարիս վարդապետ՝ «միարան սք. Մակարայ լինելոյ վասն», ինչուս որ կը կարպանք իր ձեռազիր վիպյականի մէջ:

Կիր, աղջկանց զպրոցի վերածուած: Խօնա Ասարդիսի մի որիշ որպին Յովակիլմ, որ իբր միւրկիկլի կօրնօ ջրաշացքին հասոյմը ապրեներով իւրացնելէ յետոյ զայն ուրիշի ծախած էր՝ յանկարծամահ կը լինի 1819ին:

Կիպրոսի վրայ հոգեոր իրաւասութիւնն, առաջուց ի վեր Ասոյ Ալլուորին կը պատկանէր, բայց վերջին ժամանակներու և. Պուսոյ և Երուսաղմի պատրիարքներուն անցաւ, ինչպէս որ կը տեսնուի: Մասնաւրապէս Երուսաղմի աւելի սեհր յարաբերութիւն ունեցած է: Զօրորինակ, Դարրիէլ պատրիարքի օրով, հինգ տարուան միջոցին (1828-1833) հինգ կոնդակ ուղղուած է զանձապես Սիմոն աղային, և իր որպեսին «Յարութիւն վայելէազեղ աղային» կամ «Նորարարով Յարութիւն աղային», և կամ «Հաւատարիմ զանձապես Յիրայու Յարութիւն աղնիս պիրիլի յարգոյապատի աղային»: Այս կոնդակներն ընկալպագիրներ են զանձանակի արքեանց, հինգ տարուան մէջ 450 զրշ. : Եակայն Միքայէլ կամողիկոսն ալ անհոգ չը մնար իր Ալլուորի թեմին նկատմամբ, զի 1837 ին կը տեսնենք մի Յովհաննէս եպիսկոպոս «միարան սք. զահին կիպրիկոյ» որ էր «ոզգումնթեամբն Ա. և Հարմանաւ Ծն. Միքայէլի սրբազն Վթղիսի. Հօր մերայ հողեւորի եկեալ Ած. ապահ կղզիս կիպրոսի ի զործ նուիրակուն, որոյ մեսոնի ...» և որ կը ձեմանզրէ զյակարիս վարդապետ՝ «միարան սք. Մակարայ լինելոյ վասն», ինչուս որ կը կարպանք իր ձեռազիր վիպյականի մէջ:

Իբր 40 տարի վերջ պարձեալ կը տեսնենք մի Յովհաննէս եպիսկոպոս, չգիտենց առաջինն թէ այլ ոք, որ իբր նուիրակ կը մնար ի կիպրոս, և ի պատասխան տեղացւոց ինպրանքին, Միքայէլ կամողիկոս կը զրէ 1846 ին մէջ Առաջնորդ կարգելու համար վարդապետ չունի այն

միջոցին և թէ նուիրակ Յովհաննէս եպիսկոպոսին կը թոյլատրէ մնալ ժամանակ մը իրքի հոգեոր հովիւ։ Ադէ՛ վերջ կաթողիկոսը մի կոնդակ աւ կը դրէ՛, որուն մէջ կը կարդանք այս առղերը։

« . . . Ահա յայս նուագ ի գէմ ձերում Ած. ասիրութեանց նուիրակ առաքեցաք հանգերձ սրբալոյս միունաւ զազեծին սիրելի զաւակ մեր զջր. Յովհաննէս առաքելապահ Արքեպո. և բազմաշխատ հաւատարիմ սրբի սրբը. Ած. աշբաշ Աթոռոյս, . . . արեմն քաջամիր եղիշիք ՚ի տալ զողորմութիւնու ձեր, և զար յանձնել տաշիք նուիրակի ձերում Տօն. Յովհանիսի Ած. արան Արքեպոփ., և մերում եղական նաղեւոյս. սրում հասեալն և յանձնեալն մեզ հասանի, զորմէ աներկրայ լիջիք, վերջապէս ունի իշխանութիւն ի մէնջ սոյն այս վերոյիշեալ բարեկարգ նուիրակ ձեր՝ զհակառակն պատմել և պատուհաւ սել. զապստամբն անաշխարհիկ առնել ի մէջ սրբ. եկեղեցւոյ, զի կապեալն ՚ի սմանէ է կապեալ ՚ի մէնջ և արձակեալն արձակեալ. և սրբան յարդ և պատիւ մատուցանք սմա՝ ինձ համարի, . . . այսու նուիրակութեան կոնդակաւու լերուք ողջ և օրհնեալ յԱստուծոյ, և ՚ի սըրբոյ հօրէն մերմէ Գրիգորէ Հուսաւորչէ ազգիս Արամեան, և ի մէնջ մլչտ։

Գրեցաւ նուիրակութեան կօնդակս այս ի թուին Հայոց ՈՒՂՂ (1847), ի սր. Աթոռ մեծին կիմիկիոյ, բնդ հովանեաւ սրբց. չորից աջերաց և երեսուն ոթ հաղար մարտիրոսաց մասանց, սրբ կան ՚ի սպահութեան մին ազգիս Արամեան, այսր ՚ի հրաշափառ սր. Աթոռ։

Նուիրակ Յովհաննէս եպիսկոպոսի այս այցելութիւնը Առաջնորդական հանգամանք ալ սննեցած և երկու տա-

ժիի չափ տեած է։ Իր ժամանակ Երուսաղէմէն առ Առաջնորդ մը, Յովհաննէս եպիսկոպոս Եղեսեան, զըրկուելով ինքն հեռանալու հարկադրուած է։ Այդ թուականէն (1848) կը դադրի Սոյց յարաքերութիւնը, և կիպուս կը կառավարուի Երուսաղէմի կողմէ, թէև 1877-1889 տեղ շրջանին մէջ՝ այս Աթոռն ալ, իր հեղինակութեան զէմ տեղացիներու ընթացքներէն վշտանալով կամ ուրիշ պատճառներով։ Կ, Պոբոյ պատրիարքարանին կը թողու հոգեոր իրաւասութիւնը և հովիսներ զրկելու հոգր։ Այլտիսի առաջարկ մը 1897 ի սկիզբներն ալ կրկնուեցաւ Երուսաղէմի Ս. Պատրիարքէն, և կ, Պոլսոյ պատրիարքարանին ընդունուեցաւ։ սակայն համաձայնութիւնը գործնական եր չունեցաւ և կղզին մնաց Երուսաղէմէն թիմը։

Ներկայ ժամանակ

Կիպրոսի մէջ ոչ մէկ հայ կայ այժմ, որ սերած լինի վաղեմի գաղթականութենէն։ Վերջին մարդահամարի առաջն (1901) հայերը 362 հոգի էին, մեծ մասը Նիկոսիա հաստատուած, մնացած՝ Լարնաքա, Ս. Մակարի վանքը, Ֆամագիսով, Լիմասոլ, և Բափոս։ Այս ընտանիքներն իսկ որ բուն տեղացի կը համարաւին՝ 150 տարիէ աւելի հնութիւն չունին և կը զրոցեն իրենց պապերուն կամ տատերուն գաղթելը կիսիկիոյ քաղաքներէն, իզմիրէն և որիշ տեղերէ։ Գաղթականութեան վերջին հոսանքն ալ (1896-97) հինգ վեց հարիւր հոգի բերած էր կ. Պոլիսէն, Այնթապէն, Քիլիսէն, Տիարէքիրէն ևն, բայց ասոնք մեծ մասամբ անյաջող մնացին ասլրուստ ճարելու և մեկնեցան կղզիէն, ոմանք հայրենիք վերադառնալով և այլք Եզիզատոս կամ Ամբրիկա փոխազրուելով, այնպէս որ իբր հարիւր հոգի միայն կը մնայ յիշեալ նորեկներէն։

Կիպրոսի մէջ հայկական մեծ գաղութ մը հաստատելու գաղափարը համակիրներ ուներ երեմն։ Մի ընկերութիւն ալ կազմուեցա Անգլիացիներէ (The Eastern and Colonial Association) որ շահագործութիւն և բարեսիրութիւն միացնելով՝ հայ աշխատաւորներու մուտքը պիտի քաջալերէ։ Ընկերութիւնը կղզիին զանազան կողմիրէն զնեց չորս ազարակ, և իբրև ուրիշ ճիւղ գործին՝ Նիկոսիոյ մէջ հաստատուեցան Շերամարուծական վարժարան մը և մնացարի մանարան մը։ Այս ամենուն մէջ զիմանը արարար հայեր կ'ընդունուէին իբրև անօրէն, հսկող, ուսանող, մշակ

են։ Սակայն, կ'երեսի թէ ընկերութիւնն իր սպասածին չափ զրամազլուխ գոյացնելու չը յաջողեցաւ և ձեռնարկ-ներն անկատար մնացին։ Հետաքնակ հայերու կողմէ աբուշալութիւն չը դարձաւ այս զաղթավայրի վրայ։

Նոյնպէս վերջ գտաւ Լարնաքայի Պատսպարան—Որբանոցը, զոր հիմնող Անգլիացի տիկիններուն նպատակն էր բազմաթիւ հայ որբեայրիներ բերել իրենց զաւակներով, զանոնք վարժեցնել արհեստներու և ծառայութիւններու, և վերջնականապէս տեղաւորել կղզիին մէջ։ Լարնոր գումար մը հանգանակուեցաւ այս հաստատութեան համար և 200ի մօտ կիներ և որբեր բերուեցան կիլիկիոյ սահմաններէն, սակայն գործին ներբին վարչութեան և մատակարարութեան մասին յայտնուած աննպաստ դիտող զութիւնները, մանաւանդ Ամերիկացի ՑեսուՀիքին և պատսպարելոց միջն ծագած անհամաձայնութիւնը խանգարումներ յառաջ բերին, և ընկերութիւնն՝ այս կամ նաև որիշ պատճառներով վակեց հաստատութիւնը, և պատսպարեալներն իրենց տեղերը վերադառնուց։

Ինչպէս որ հին զաղթականութիւնն այսօր չունի ներկայացուցիչ մը, այնպէս ալ հին շինուածքներէն չկայ հայկական յիշատակ մը մայրաքաղաքին մէջ։ Ս. Աստուածածին որ կղզիին միակ հայ կիսկեցին է՝ բացի գերեզմանատան և Ս. Մակարի մատուններէն — օտարներէ ձեռք անցած է, ինչպէս տեսնուեցաւ։^{*} Շէնքը, 1310-ին կառուցուած սիրուն է, թէն ոչ ընդարձակ։ Ալայտակը կը ծածկուի հին տականաքարերով, որոնց ոմանց

*— Francesco Piacenza իր մէկ գրքին մէջ (1688 ին տպագրուած ի Վուենա) կը թէ Հայոց եկեղեցին կիպրոսի թագաւորներուն օրով կարգուեան կոժնաւորներու վանքն էր (convento di monache Carthusiane)։

վրայ կը տեսնուին ֆրանսերէն արձանագրութիւններ և նընացեցելներուն պատկերները: * Եկեղեցին կը կազմուի երեք կամարակապ մասերէ որոնց արեկելեանն ու միջինը զեռ կը պահէն իրենց գոթական աղուոր կամարները: Հիւսիս պահէն իրենց գոթական գաւիթը, ուր է այժմ արանց մուտքը՝ շինուած կը կարծուի վենետացւոց ժամանակ (1489-1571): Գաւիթին յաւելուածական կամարները 1838ին շինուած են իրբն նեցուկ: Հնագոյն պատուհաններ ալ կան խորանին կողմը, և կը բաղկանան կամարանկին երկու լուսամուտաներէ, վրանին քառատերե մը՝ գոթածէ բարձր պատուհանի մը մէջ ամիսփուած: Տանիքին և այլ մասերուն ամենալիբջին նորոգութիւնը կատարուած է 1884 ին: Իրբն հայերէն հնագոյն արձանագրութիւն՝ կայ փոքր խաչքար մը, եկեղեցւոյ արանց յատկացուած դրան ձախ կողմը, պատին մէջ վերջէն գետեղուած:

Ահա խաչքարին յիշատակարանը,

«ԹՌԻՒԻՆ Ռ-ՄԲ (1753)

ՍԲ. ԽԾՉ

«Լանգնեցաւ ի պատրիարքութեան Ար. Երուսալէմի և Կոստանդնուպոլսոյ Տն. Յակոբյ Աստուածարան վար-

*— Նիկոսիոյ փոխ-կառավարի Մայոր T. J. Chamberlayne, 1894ին ի Բարիզ հրանտարակեց երկ մը, — (Lacrimae Nicossienses — Recueil d'inscriptions funéraires) որ կը պարունակէ նաև այս տասնամբարերու պատկերները: Տապանագրերէն մէկ մասը նսիրի կամ կապերէն ներքւ ծանկուած լինելով եղծումէ աղաս կը մնան: Կարծէց որ միւսներն ալ պահպանուէն:

Լատինաց եկեղեցւոյն մէջ ալ կայ մի փոքր տապանաքար, մէջ տեղը զինանշան և չորս կողմը հայերէն արձանագրութիւն փորագրուած: Տառերը մեծ մասամբ եղծուած են: Այս քարը հիսուուած էր եկեղեցւոյ խորանին արտաքին որմին մէջ որ երկու տարի առաջ քանդուեցաւ վերաշնութեան առթիւ: Տապանագրարիս պատկերը կը տեսնուի Ախուտան ի մէջ:

կապեաին. Հոգաբարձութեամբ աշակերտի նորին Տեառն Յովսեփայ տեղւոյս Առաջնորդի վարդապետին, և արդեամբ իլլր. ժողովրդոց»:

Եկեղեցին կախուած պատկերներուն ամենահինը կը կրէ Ռ-ՄԲ (1758) թուականը: Մկրտութեան աւազանը շինուած է 1788 ին: Ասոնցմէ աւելի հին է ծնծզայ մը, (Երուսալէմի) Ա. Յարութեան տաճարին նուիրուած (ՌՃԻԱ-1672):

Զանգակատունը հաստատուած է 1860 ին, կ. Պոլսեցի նէվրուգեան Յաբեթիկ աղայի չնորհիւ: Եկեղեցոյ բակին մէջ կայ պարտէզ մը և ջրի աւազան մը: կան նաև մի քանի սենեակներ, որոնց երկուքը դպրոցի կը ծառայն: Մանչերու դպրոցին ճակատը զետեղուած արձանագրութենէն կը հասկցուի որ 1886 ին շինուած է, հիմակուան քահանային, Տ. Յովհաննէս Շահինեանի ջանքով: Նախկին շինութիւնը կատարուած էր՝ Վարդան վարդապետ Մամիկոնեանի ձեռներէցութեամբ: Աղջկանց զպրոցի յատկացուած երկու սենեակներուն վրայ 1902 ին շինուեցաւ վերնայարկ մը: Այս յաւելումը որ աշակերտութիւններու առողջութեան համար և ուրիշ տեսակէտներով մի անհրաժեշտ պէտք էր՝ կատարուեցաւ արզի Առաջնորդ Պետքոս վարդապետ Արարածեանի ջանքով:

Երկու սեռէ աշակերտաներուն թիւը կը հասնի 50 ի, և ասոնց համար կառավարութիւնը կը նպաստէ տարին 24 ոսկի: Լիալոսի հայոց կրթութեան համար վերջին կէս գարու միջոցին հետզհետէ ծառայող աշխատաւորներուն մէջ նշանակելի են թագէսս վարդապետ, վարդապան վարդապետ (այժմ Արքահամ եպիսկոպոս), Գրիգոր Գլըճեան, Մկրտչի Շահինեան (այժմ Տ. Յովհաննէս քահանայ ի Նիկոսիա), Համբարձում Գէորգեան, և արդի

աւսուցիչը՝ Յարութիւն Ասատուրեան։ Ասոնց շնորհիւ է որ կիպրոսի թրբախօս տեղացիներուն մէջ քիչ շատ մուտ գտած են մայրենի լեզուն և ազգային գիտակցութիւնը։ Աղջկանց համար ալ վերջին ատրիներս գտնուեցան կարող վարժուհիներ, ու ասոնց պաշտօնավարութիւնը, թէն ոչ երկարատե՛ բաւական արդինաւոր եղած է։ թէ՛ արական և թէ՛ օրիորդական պարոցներու յառաջացման համար Տ. Պետրոս վարդապետ Սարանեանի երեք ու կէս տարիէ իվեր նուիրած անձնուէր աշխատութիւններն արժանի են մասնաւոր գովխատից։

Նիկոսիոյ մէջ երկու տարիէ իվեր գոյութիւն ունի Օր. Սարգիսեանի Մանկապարտէզը, որ զգալի պակաս մը կը ւեցնէ և յաջող արականը ունի։

Նիկոսիոյ մէջ է նաև «Ազգային կրթարան – Որբանոցը» որ 1897ի սկիզբները հաստատուեցաւ, զիսաւորապէս թուրքացի որբ և չբաւոր աշակերտներու համար, և կը պահպանուի զանազան երկիրներու ազգայնոց օգնութեամբ։ Գիշերօթիկներու թիւը եղած է իբր 30, իւրաքանչյուրին համար տարեկան 10-12 ուկի ծախք լինելով։

Կրթարան-Որբանոցի վերին վարչութիւնը կը գտնուի Մանկեսթի մէջ կազմուած մնայուն խնամակալութեան ձեռքը. իսկ անմիջական հսկողութիւնը կը կատարուի Նիկոսիոյ մէջ կազմուած մի Ծնորչողի կողմէ։ Հաստատութիւնը չունի սեփական շենք և կը գտնուի վարձուածքնականի մէջ։ Ուսումնական ծրագիրը նախակրթական է, բայց մասզբութիւն կայ զայն վերածելու միջնակարգ կամ երկրորդական վարժարանի, – եթէ բաւարար նիւթական օդնութիւններ ընծայուին։

Կրթարան – Որբանոցը կիպրոսի կառավարութենէն նըւպաստ չ'ստանար, որովհետեւ տեղացի հաստակութեան

դատիկանող հաստատութիւն մը չէ։ Մինոյն պատճառով ու զպրոցաց կառավարական բննիչին պաշտօնական իրաւասութեան շրջանակին գուրս կը մնայ։

Եկեղեցւոյ բակին հետ գնոով մը կը հաղորդակցի Ասաշնորդարանի մասը. իսկ եկեղեցւոյ դէմն է «Հոգեւուն» կոչուած շնորհը, որուն սննեակներէն մի քանին յատկացած են չբաւոր ընտանիքներու կամ անհամաներու բնակութեան, միւնիները վարձու կը տրուին։

Նիկոսիոյ ազգային գերեզմանատունը կը գտնուի Հայոց թաղին հինգ վայրկեան մօտ, կանոնաւոր շրջապատի մէջ առնուած և ծասերով հովանաւորուած։ Ունի մատուռ մը 1892 ին շինուած, որուն ծախուց համար գումար մը կը տակւած էր կ. Պոլսեցի Պօղոս Օտաճեանէն։ Այս գերեզմանատունն երեքմեծ եղած է Գոմինիկեանց վանք և Լուսինեան թագւորաց գամբարան։ Մինչև մօտ ատեններս լատիներն ալ այստեղ կը թաղեն եղեր իրենց մեռկները. յետոյ հարկադրուած են առանձին գերեզմանոց շինելու։ Կառավարութիւնը որոշած է որ մի քանի տարիէն Հայոց և այլոց գերեզմանոցները քաղաքէն հետու տեղեր հաստատուին։

Կիպրոսի ազգային գործերն ու կալուածները կը կառավարուին չորս հոգիէ բաղկացած թաղական խորհրդի ձեռքով, Ասաշնորդի նախագահութեան ներքի։ Ա. Մակարի վանուց, և երեք ամբողջական ու երկու մասնական շաղացքներու*, նոյնակէն Նիկոսիա և լարնաքա գտնուած հինգ տուներու և երկու խանութներու տարեկան հասոյթն այժմ կը հասնի 300 անգ. ոսկիի, որովէ կը հոգացուին Ասաշնորդին, բահանային և ուսուցչաց թոշակները։ Զաղացքներէն և տունե-

* — Այս շաղացքներն են, — Քիթրէայի մէջ Աւելիքրիկո և Արեւածիա, ամբողջական. Եօյ աեւելիքրէնի և Թուրքարի մասնական։ Տէքթէրայի մէջ կավիճի, ամբողջական։

ուն մի քանին այժմ հասոյթ չեն բերեր զրեթէ: Եկեղեցւոյ և ջալացըներու նորոգութեան ծախքերէն եւ երեխնի Առուաշնորդներուն յատկացեալ մեծկակ ամսականներու վճարումէն դոյացած մի քանի հարիւր ոսկիի պարտքը վերջին տարիներուս մէջ մաս առ մաս վճարուելով 150 ոսկիի չափ մացած է: Ազգային սնտուկի հաշիներուն մէջ զեղծումներ ալ գործուած են երեխն: Այժմու Թաղական Խորհուրդը խղճամիս հոգածութիւն ցոյց կուտայ, և կը պահէ կանոնաւոր տոմարներ, որոնց հաշուելիուը կը մատուցանէ Երուսալէմի պատրիարքին վաւերացման:*

Կիպրոսի հայ հաստրակութիւնն, իր սահմանափակ թուոյն չընայելով օսմանցւոց վարչութեան ներքե ազգեցիկ զիրք մը զրաւած էր: ԺՈ. դարուն վերջերը և ԺՈ. ին մէջ նշանաւոր եղած են Ասվար օզլու, Յովակիմիան Յարութիւն և Սարգիս, Փօղոս Երամեան Խզմիրցի, Արմէոն Խրիմցի, Յարութիւն Երամեան, և Հայրապետ Մելիքեան:

Օնզիկական վարչութիւնն ալ ՚ի սկզբան մասնաւորապէս նպաստաւոր եղաւ հայերու, և դրսեցի կամ տեղացի հայ երիտասարդներ կարելոր պաշտօններու նշանակուեցան քանի որ կզզեցի յոյներուն և թուքըներուն մէջ լեզուազէտներ կը պակսէին:

Այժմ, հայ պաշտօնէից թիւն է 17, և անոնցմէ զատ կան 4 նախկին պաշտօնեաներ որոնք հանգստեան թուշակ կ'ստանան: Հայ պաշտօնէից մէջ զինաւոր տեղը կը

*—Արդէ Թաղական Խորհուրդը որ 1902ին բնորուած է կը կազմուի արագէս, — Տեարք Արքուողում Խթիւնեան (Ատենապետ), Արքար Կիւլեզեան, Կարապետ Նիկորոսեան, Մագուսաւ Տեփանեան: Տեղական Կարգադրութեան մը համեմատ թաղական Խորհուրդը տարին մի քանի անգամ կը հրաւիրէ Նիկոսիա բնակող ազգայնոց մեծ մասը, իբրև համարառու ընդհանուր ժողովը Պահանջողներ կան որ այս ժողովը ընտրուի ժողովրդի բուեն և գաւառական բնդհանուր ժողովը ծրաւունդներն ունենայ ըստ Ազգ. Սահմանագրութեան:

գրաւէ Տիար Արքսողում Խթիւնեան, կ. Պոլսեցի, որ Անդիական վարչութեան առաջին օրէն ի վեր կը վարէ Աւագ Թարգմանի և Օրէնտղական ժողովոյ թուքերէնի թարգմանչի պաշտօնները: Իր մատուցած այլ և այլ ծառայութիւնները զովիստաներով յիշուած են պաշտօնական տեղեկաբրաց մէջ: Տիար Խթիւնեանի օգնականի պաշտօնը կը վարէ Տիար Գրիգոր Թունկահան, կեսարացի:

Կարեւոր պաշտօններու վրայ կը գտնուին նոյնաէս, Տիար Գասպար Ամիրահան Խզմիրցի, (Առաջին Թարգման և Արձանագրիչ բարձրագոյն գատարանի), Տիար Միհրան Տէրլիշեան, Պրուսացի, (Դիւնապետ —Chief Clerk— և Թարգման Մաքսային վարչութեան), Տիար Ենովք Ճիւածնեան, կ. Պուսեցի, (Դիւնապետ Կալուածահամարի վարչութեան, ի Լիմասոլ), Տիար Պետրոս Ամիրահան Խզմիրցի, (Առյանէս, ի Ֆամակոսթա), Տիար Յարութիւն Երամեան, Կիտրոսցի, (Ոստիկան զինուորութեան քննիչ — Inspector — ի Լարնաքա):

Կողերնակ հայերը կը պարագին զանազան զբաղութեարով, — արհեստներով, երկրսպարծութեամբ, տաեւտրով և ծառայութիւններով: Ժամագործութիւնը գրեթէ հայերու մենաշնորհն է: Խթիւնղագործութեան և ներկարագործութեան գլխաւոր վարպետները հայեր են: Պղնձագործութիւն, ձուլիչութիւն և եազմամայութիւն հայերէ աւանգուեցան յոյնեաժուն: Քիրենիոյ մէջ Տիար Յարունակ Բարունակեան ունի շոգեշարժ աղօրիք, և օճառի և ձեթի զործարան: Նիկունիոյ մէջ Տիար Յարութիւն Ճիւածնեան կը կատարէ շոգեշարժ աղօրիքի մը տնօրէնութիւնը: Կան ուրիշ ճարտար արհեստաւորներ ալ:

Կէպղոսի մէջ գործող 36 փաստաբաններու երեքը և 43 ժմիշիներու երկուքը հայ են: Կայ հայ ատամալրոյժ մը:

Օռմանեան պահքայի Հարնաքայի գրասոնեակին զվասաւոր
Հաշուակալը և Հաշուականերէն մին հայեր են (Տիար
Գրիգոր Պիոքմէնեան, Տիար Յուլիանէս Շէհրիեան): Հու-
ղատէր երկրադործներ են Տիար Յարութիւն Մելիքեան,
Տիար Պօգոս Երամեան և Տիար Որդար Լիմիզզեան:
Վերջացնելով այս մասին համառոտ տեսութիւնը՝ կրնամ-
ընել որ Իիպրոսի Հայոց անտեսական վիճակը, թէ ո՛չ
փայլուն՝ առհասարակ հանդիսաւ և զիսրատար է:

Դիտելի է սակայն՝ որ կան ոմանը որ անտարբերութեամբ
և այլք՝ որ զանազան առարկութեամբ հեռու կը մնան մեր
հասարակական ըրջանակին:

Ա. Մակարի Վանքը

Հնութեան վրոշմը կրող զվասաւոր ազգային հաստատու-
թիւնն ի Կիպրոս՝ Ա. Մակարի մենաստանն է, որ Նիկո-
ախայէն Տ-6 ժամ հեռի կը գտնուի զէպի արևելեան հիւսիս,
Քիրենիա-Քարբա լեռնաշղթային վրայ: Վանքը թէեւ
ծովէն 1700 ոտք բարձր՝ լեռնակներու մէջանդ խորա-
նիստ զերք մը կ'առնէ, բայց հիւսիսային կողմը լայնարձակ
կը տարածուի մինչեւ ծով՝ երկու ժամու ճանապարհ, որմէ
անդին կիլիկիոյ ցամաքն ու Տօրոսի բարձունքն ալ կը
նշարուին:

Ահա այս տեսարանին վրայ կ'իշխէ վանքին «դարպասը»,
վերնայարկ ընդարձակ սենեակ մը: Միենոյն յարկին վրայ
կան վեց փոքր սենեակներ – իբրև հիւրանոց և շանեմա-
րան – և մէկ խոհանոց, նոյնպէս հարաւային կողմը վեց սեն-
եակ, վանքարհակ երկու ընտանիքներու համար: Ասոնց մին
կը ծառայէ իբրև գվրոց, որ կ'ուսանին տասը երկուն
աշակերտաներ, վահրմն մէջը և աւելի հեռուն բնակող վար-
ձակալ ընտանիքներէ: Այս գվրոցն ալ նպաստ կ'ստանայ
կիպրոսի կտորավարութենէն, տարեկան 8 անդլ. ոսկի:

Բակին արևմտեան կողմը կը գտնուին փուոք, ձէթի
հնձանը, մեղուանոցը և բաղնիքի աւերակ մը: Բակին մէջ
կ'աճին մի քանի ծառեր, -թրնջենի, ձիթենի, նշենի եւն:
Երկու տարիէ ի վեր բացուած է ջրհոր մը, որմէ պաղ
Չուր կը քաշուի:

Համեմատաքար աւելի հնութիւն ունենալ կը թուին

վանքին պարիսպը, ճնշարան - խցիկները և վարձակալներու բնակած կամարակապ սենեակները: Խոկ մատուռը, որ փողքիկ, ցած է խոնաւ շինք մոյէ, և գարսղան ու հիւրասենեակները՝ վերաշնուած են Խրիմշի Սիմէոն աղայինոց, 1814-1818 թուականներուն, ինչպէս կը յայտնուի արձանագրութիւններին:

Մատրան ձակատը .-

«Այց արար մեղ տէրն բարձանց,
Աստուած և հայրն ողորմութեանց,
Ետ նորոգել վանքս ի հիմանց,
Յըստորակայ Փրկչին ամաց,
Հոգաբրձութեամբ ազնիւ Սիմէոն աղային,
1814, յունի 3»

Վարձակալներու յատուկի սենեակի մը ձակատը .-

«Արար զսոյն զիւր յիշառակ
Սր. Մակարայ վանիցս սենեակ
Արզոյ Հաճի Սիմէոն աղային
Ընդ ամուսնոյն խաթուն Աննայն»:

Գաւիրին համար պատրաստուած բարի մը վրայ .-

«Շինեցաւ գաւիթ տաճարին
Արդեամբ բարեսէր Խրմշի Սիմէոն աղային
ի յշտկ հոգոյ կենակցոյն իւրոյ
ի Տը հանգուցնալ Աննայ հոգեսէր խաթունին
Դստեր մհասի Սարդիս աղային
Ընթերցօղքի տուք զողորմին. ամէն:
Յամի Տոն 1818»

Աւելի առաջներն ալ կատարուած են նորոգութիւններ Մատուռին ճակատը վերջին գետեղուած բարի մը վրայ

Կը կարդացուի,

«Կերստին նորոգեցի սուրբ անապատու
Մեծին Մակարա ձըգնաւորին
Զեռամբ Յարութիւն վարդապետի:
ի թուին ՌՃԶԴ (1733) »

Վանքը չունի մեծարմէք յիշառակարան կամ արձանագրութիւն մը, հնագոյն զարերէ մնացած: Եկեղեցական մի քանի գրքեր կան, ամենքն ալ մաշած, և մատուռին պատերը զարդարող անարուեստ պատկերներու երկու հնագոյնները — Ս. Աստուածածնի և Ս. Գէորգի — կը կրեն ՌՄԲ (1733) թուականը, և մին «Կեսարացի խօճա Յարութիւնի», միւսը՝ «Մահտեսի Մոքսս աղային» անունները: Ս. Աստուածածնի ուրիշ պատկեր մը 1815 ին դրուած է «Բալուցի սարաֆ Յարսութիւն աղային» յիշառակին: Պատկերներէն աւելի հնութիւն ունեցող առարկան է պըզնձէ ծնծղայ մը որ «Յշտկ. է Ղազանջի պարզեացն հզյն, ի գուռն Սր. Մակարայ. թվին ՌՃԳ (1634)»: Մի Աւետարանի երեսը զարդարող արծաթեայ խաչի վրայ կը տեսնուին «Մահակին հոգուն» բառերը և ՌՃԿ (1711) թուականը: Պղնձէ փոքր ստորանի մը (բարբագ) վրայ փորագրուած է, «Յշտկ. է Ատանացոց, Մակար անապատին, թվին ՌՄՋԷ (1768):» Զեռի լուացակոնք մը (լէկէն) 1815 ին նուիրուած է «Ղարամանցի հաճի Յովհաննէսէն»: Վանքէն Նիկոսիոյ եկեղեցին փոխազրուած է ազգային գարոցի պահարանը զետեղուած 65 օրինակ ձեռագիրներ կան, ոմանք շատ կարևոր*, բայց ատոնք ալ չեն

* — Այս ձեռագիրներու Յուցակը կազմուեցաւ Առաջնորդ Տ. Պետրոս քարտ. Արքաձեանի ձեռքով, և զրկուեցաւ Ս. Ղաղարու վանքը, ընդհանրակի մը մաս կողմեւու համար:

պարունակեր յիշատակարան մը որ լոյս տար, ինչպէս
կիպրոսի հնագոյն հայերուն՝ նոյնպէս և Ս. Մակարի հաս-
տատման թուականին և այլ պարագաներուն վրայ:

Այս մասին ինձ ծանօթ ամենահին յիշատակութիւնը
Հայր Ստեփան Լուսինեանի 1372ին զրածն է, այսպէս:

«... Ղփալիներն ունէին մի եղիսկոպոս որ կը բնա-
կէր ՚ի նեկոսիք: Նաև, հիսոխակողման ւեռներուն մէջ
ունէին մի վանք, Ս. Մակար (Saint Machaire) ա-
նունով, մերձ Բւաղանէ զիւղին որ կը պատկանէր Հա-
յոց»*:

Այս վկայութիւնը կրնանք արժանահաւատ նկատել-
քայց պէտք է ընդունիլ նաև որ վանքը այդ թուականէն
առաջի առաջ Հայոց ձեռքն էր արգէն: Նախայիշեալ ձե-
ռապիք Յայումաւուրբի Յիշատակագրութիւններէն վերջինը,
զոր կ'օրինակեմ այս տեղ, այս մասին կը պարունակէ
աշապրութեան արժանի մի քանի բառ:

«Ո՛հ զմեղաւք գատապարտեալ կազմող սորա Գրիգոր
զանարժան աւագիրէց և զհայր իմ, ի Ք. հանգուցեալ
զլիսոն և զմայր իմ զհանգուցեալ և զեղբայր իմ զհան-
գուցեալ վանէսայ որ սովանաւ ի մեր վանքայ ի Կարո-
նօձիպօն ի Ք. Ո՛Շժի (1362) հոգտեմբերի լ. աւրին և
զիմ վարդապետա զլիսոն աւագիրէցա զհանգուցեալն ի
Ք. և հանդիձ ծնաւզաւք կենդանինեաւք և հանգուցելովք
յիշեցէր ի ար. յա. բա. . . . , աղաշեմ ով ածասէր ընդ-
թերցողք յիշեցէր միով ողորմայիւ և յիշելոց առհասարակ
սորոմի Ած, ի փառաւորեալ գալրստեան իւրոյ յարում
վայելէ փառք աւիտեանս ամէն: Գրեցաւ ի Ք. Ո՛ՇիԶ (1546) և ի թով հայց ԶՂԵ և ի յուլիս ամսոյ թ. և

* Յաղանէի աւերակները կը զանուին Ս. Մակարի արեւմտեան կողմը,
40 գայրկեան հւուի:

ի ահկի ամսոյ է, աւրին ուրբաթ զրեցի և կտորեցաւ այս
գիրգիսա:

Այս տեղ յիշուած կաւրնո ձիորոն՝ Քօրնո-ձիորոյ կամ
կիւրնէն զիւղն է, որ հայարնակ էր ժամանակաւ: Աւս-
տի, եթէ Ս. Մակար իրօք նախապէս կը պատկանէր
Ղփալիներուն՝ կը տեսնուի որ 1312 էն առաջ իսկ եղած
էր «մեր» վանքը:

1635 ին ստացուած մի հեօձնէրի զօրութեամբ Օսման-
իան զատարանը հարկ և տուրք վճարելէ ազատ կը
թուու «Էկօբ մանասթըրը»ը (Ետապոյտ վանքը), ինչպէս որ
կը կոչուէր Ս. Մակար, արտաքուստ կապոյտ ներկուած
մինելուն համար:

Ահա օրինակը այդ հեօձնէրին, որ շատ կարեսր վաւե-
րագրութիւն մ'է:

Մահրուսէի լէֆդօշա միսափամբնտան . . . նամ
դարիիշտէ վազի Էկօբ մանասթըր քինխասարնտա լահիա
օլան Մոսրոփ նամ էրմէնի, վէ սայիր Էրմէնի թայիփէ-
սինտէն Գատար վէլէտի Եշուուպ, վէ Թէփանի վէլէտի
Մուրատ, վէ Ռւետիր վէլէտի Խաչատուր վէ սայիրէրի
մահփիլի զաղայա հազրուն օլտուզլարը հալտէ, հէր պի-
րի թազրիրի քէլամ վէ պասմը մէրամ էտուպ՝ թայի-
փի էրմէն, հազրէթի ըէսալէթիկնահ ըէսուլուլահ սէյիխ-
էլ խափքէյն, շէփիի մէնն ֆիյտարէն, սատաէթ վէ
ինլալ վէ իւպէթ վէ ճէլալ իւէ Մէտինէի մինէլլէրէյէ
հիճրէթ պույսրտուզլարը վազթըն իրիննի սէնէսինտէ պի-
զիմ պէթարիզէ վէ բէհապիյինմիդ հալզուրը հիմայունը
սէյիխաի ալէմ, սալլ Ալլահու թէլալա ալէյհի ուէսուէկմ
հազրէթէրի հուզուրը ալիւրինէ վարուող խարաճիւզուր
վէ Ֆիզիկաուր օլմաղը թէլապոյիւ էյէտյիմիզուն սօն-

բա՝ հազրէթի քախր էլ ալէմ, սաւ Ալլահու ուկանէէմ՝
հոգուրը ճիշարեար լի սայիր ասհապը քիւպպար մէճմա՞
լնտա, եէտիմիդէ ահանամէ իհսան պույուրուպ՝ խարած-
տան դայրի թէքիփ իիէ միւքէլէփ օլմամաղիչին վիւս'աթ
պույուրույլար իքէն՝ հալա խիլաֆը ահտը բէսուզ պիզիմ
քինիսէժիդէ ենիկրմի զրուշ նախակէ թէքիփ էյլէտիկէր տէյու՛
թարիխի հիճրէթի նէպինին իքինճի սէչէսի իիէ միւքը-
րախ ահտնամէի բէսուզուլահը իպրազ էյլէտիքլէրինտէն՝
ֆէգապպէլթիւհա, սիմմէ գապպէլթիւհա, նազար օլունուպ՝
մազմունը թագրիւէրինէ միւթապըդ օլմաղին՝ ոլ մագու-
լէ սէյֆի սարսմը բէսուլէ խիլաֆ՝ մուճիպի խէսարը տիւն-
եա լի ախրէթ օլմաղին՝ մէզպուրէր խիլաֆը շէր՝ նէվայիլա-
իիէ բէնճիտէ օլընմամագ իշին՝ իշպու հրուփ եէտէրինէ
տէփ՝ օլընաը։ Հիւրուռէ քի ելայիլի շէրի թէպի իւլ
ախր, լի սէնչթի իննիթէյնի լի խամսին լի էփ։

(Թարգմանութիւն)

Նիկուխա քաղաքի մասերէն . . . անուն գիւղը* զրու-
նուած կապոյտ վանքի եկեղեցին կրօնաւոր եղող Մես-
րոպ անուն հայը և այլ հայազգի Գասպար որդի Յա-
կոբի, և Լտեփան որդի Մուրասի, և Աւետիք որդի Խա-
չատուրի և այլք, գատաւորութեան ժողովատեղին ներկայ
գտնուելով ամեն մէկը իսուեցան և իրենց նպատակը պար-
զեցին այսպէս։ Նորին Մեծաւթեան, Աստուծոյ Մար-
գարէին, արեելից և արեմտից իշխանին, աշխարհիս և
հանգերձեալին մէջ մարտոց բարեխօսին, երջանիկ ու մե-
ծափառ կերպով դէպի լուսափայն Մէտինէ զաղթելու
թուականին երկրորդ տարին՝ մեր Հայոց ազգի պատրի-
արքները և վարգապետները զիմնեցին աշխարհիս իշխանին

*— Ենացը պատճենին մէջ շը տեսնուիր դիւզի անունը։

օրհնեալ ներկայութեան (Բարձրելոյն Աստուծոյ գլու-
թինն ու խաղաղութիւնը անոր վրան հանգչի), որով մենք
հարկատուութիւն ընդունելէ յեաոյ նորին Մեծաւթիւնը—
աշխարհի փառքը (Աստուծոյ գլութիւնն ու խաղաղու-
թիւնը վրան հանգչի) իր չորս բնարեալ ընկերաց*, եւ
այլ մեծ բարեկամաց խումբին առջև մեր ձեռքը զաշնաղիը
շնորհելով արտօնութիւն պարգևած էր որ գիւահարկէ զատ
տուրը վճարելու չստիպուինք։ Բայց հիմա, Առաքեալին
գաշանց հակառակ մեր եկեղեցոյն վրայ քսան զրուշ ար-
տասուլոր տուրք զրին։

Ասիկա ըսելով՝ ներկայացուցին Աստուծոյ Առաքեալին
զաշնաղիը որ Մարգարէի զաղթելուն երկրորդ տարին թուա-
զրուած է, և ես զայն համբուրեցի, կրիմն և կրիմն համբուրե-
ցի, և նայելով (տեսնուեցաւ որ) իմասալ իրենց ըսածին հա-
մաձայն է, արդ որովհետեւ այզպէս առաքելական հատու-
ուուրին հակառակիլը պատճառ կը լինի կորսնցնելու թէ
այս աշխարհը և թէ հանգերձեալը՝ որպէս զի յիշեալ-
ները օրէնքի հակառակ արտաքոյ կարգի պատրերով ըլ
չարչարուին՝ այս զիրը ձեռքերին յանձնուեցաւ։ Գրուե-
ցաւ Բնեպիւալիը ամսոյ սկիզբը, 1032 թուականին (1642)։

Այս Հէօձձէրի տրամադրութիւնները 18 տարի վերջն
ալ վերահաստատուած կը տեսնենց մի ուրիշ հէօձձէրով։

Օսմանցիներու մուտքին սկրած ամբողջ մէկ զար նշա-
նակելի գործունէութիւն չը տեսնուիր վանքին մէջ, և
անյայտ է ինձ թէ միաբանական ուխտ մը կա՞ր թէ ոչ։
Յայումաւուրքի մը ցեցակեր և կիսամաշ մէկ թերթին վրայ,
երկու յիշատակարանաց վերջինը կը կարգացուի այսպէս։

*— Ենորիալ ընկերներն եին Ապուլէքը, Խօմէր, Ըսման և Սլիւ։

«Թվին ՌՃ՛ՓԹ» (1670)։ Եափացի՞ Օհան եպկ. եկի նուիրակ Լօքօշա և էր Առաջնորդ Մա ... քղբին Մելտոնու? ... առաջնորդութիւնն սուստ քրիստոնեայ անուն վար ... գատաւորաց խամազ և ... Ած. անէ գատաստանի ընդ նորայ ի գատաստանին: Ի կթղկոսութեան Խչւրին: * Եիսպրասի առաջնորդութեան Յովաննէս եպսկապսին. Ճէր Յակոբին ... երեցիսփան մահտեսի Բաղրամին որ է լաւ ողորմած մարդ. Ած. պահէ զիւր որդիք զԱկոբն և զայն որ կան ընդ իւրեանս: Խիստ նեղութիւն կայ ի վր երկրի որ ոչ գրեցաք վմ ոչ ձանձրանալոյ լսողաց, եթէ հոգեսոր և եթէ մարմնաւոր և խառնակութի. առաջնորդաց մերոց որ դատարկացաւ վանրայրէն և մեաց անմիարան զայս խմաստուր. Խմանաք: Գրեցաւ ապրիլ (ե. օրն Գշ.):

Հաճելի զուգաղիպութեամբ մը կը տեսննը որ կիպրոսի մէջ գրուած մեղի ծանօթ զրչագիրներու ամենահինք կ'ընդօրինակուի ճիշդ վերոյիշեալ թուակամին (1670) և միւնոյն Առաջնորդին ձեռքով, ինչպէս կը կարդանք հետեւեալ յիշատակութեան մէջ:

«Արդ գրեցաւ սա (Յարականս) ի ծովածոց կղզին ի կիպրոս որ մականուն Վըպրըզ ձայնի լսօգացն, ի յԱծ. աշխն քաղաքն ի Լաւքօշայ, ընդ հովանեաւ յԱծ. այարկ կաթողիկէ եկեղեցիս Ար. Ած. ածնին, և կա ընդ որ. տաճարին կազմեալ հանգամանք Նկարքն սրբոյն Սարդսի և սրբոյն Գէորգայ որս յոյժ փափաքող էի ևս Յավանէս եպիսկոպոս կողելոյ զտառա որ և ի նոյն կղզին ծնեալ, և սնեալ առ գուռն որ. եկեղեցւոյս ... Գրեցաւ ի... ՌՃՀ (1670) ...»:

*Խաչատուր Գ. Աերաստացի, մականուանեալ Մինուէքի որ կ. Պուլ. առյ պատրիարք աւ Եղաւ.

Ուրիշ ձեռագիրներէ կը քաղեմ հետեւեալ յիշատակաւ գրութիւնները:

«Աւարտեցաւ (Աւետարանս) . . . ի յերկիրն Կիպրոսի, ի քաղաքն Լաւքաւշայ, ի գուռն որ. Ած. ածնին և որ. Սարգսի զաւրավարին և սր. Մակարա անապատիս: Զեամեր յոդնամելզ և տարտամ ոգոյ Ստեփին. երիցու, ի Թվին Հայոց ՌՃԻԳ ամին (1674), ի կթղկոսութե. Կիւկիկցւոց Խաշատուրին: »

«Աւարտեցաւ (Աւետարանս) . . . ի յերկիրն Կիպրոսի ի քաղաքն Լաւքաւշ, ընդ հովանեաւ սրբուհոյ ամէնս օրհնեալ Ած. ածնին. ձեռամբ . . . Ստեփանսո զրչի, որ է նա յերկրէն Մարաշու, Եգեղջէն Ֆոնսու, ի Թվին Հայոց ՌՃԻԶ ամին (1677), ի կթղկոսութե. Կիւկիկցւոց Տեառն Ազարիային և Սահակին . . . : »*

«Արդ կատարեցաւ (Յայնաւուրբս) . . . ի Թուականիս մերում ՌՃԻԳ. (1684) ի կիպրոս կղզիս, ընդ հովանեաւ որ. և փառաւրեալ մեծապածառ Ած. ածնիս և սրբոյն Մակարայ, ձեռամբ անմիտ թումայ աբեղայիս, որ եմ ի գաւառին Բաւրա: »

«Ար սր. Աւետարանս զոր հանեալ եղեւ ժամանակաւ ի կղզոյն կիպրոսայ զրնէ սր.ոյն Մակարա մեծի ճըդնաւորին յանապատէն և յիտ սուզ ժամու եկն նոյն յանապատին Առաջնորդ Յարութիւն վարդապետն, կրկին խր աեղն տառաք որ տանի. Թուին ՌՃԻԴ ին (1715): »

Առնը և ուրիշ յիշատակադրութիւններ ենթագրել

* Զամշեանի Պատմութեան մէջ Վահակ (Մէյսանէմի կոչուած) կաթողիկոսը 1679 ին, և անոր մըցակից Ազարիա Կարկառեցին 1683 ին ամռու նստած կը տեսնուին: Աերի Թուականն աւելի ճիշտ պետք է լինի:

կուտան թէ Ա. Մակարի վանքը, 1670 էն մինչև 1740 աւելի ուշագրութեան արժանացած է, և այդ միջոցին է որ հետզետէ գնուած կամ նուիրուած են վանքապատկան հողերը: Վանքո նաև նշանաւոր ուխտատեղի եղած է այն առենները. մանաւանդ Երբուսաղէմի ուխտաւորներ սովոր են եղեր, ճանապարհի վրայ այցել այստեղն ալ:

Յիշատակուած կայ Թօխտատցի ուխտաւորաց այցելու թիւնը 1701 ին: Վանքին հողերուն վրայ գեռ կը մնան աւերակներն այն տներուն որոնք շնոււած են ուխտաւոր կամ միաբան մշակներու անձնական աշխատութեամբ: Ատոնցմէ նուիրուած շատ մը առարկաներ փճացած կամ կորսուած են: Կը պատմուի թէ Երբուսաղէմին դրկուած մի Սարդիս վարդապետ, եր կենաց վերջին օրերուն մէջ գումար մը կը յանձնէ Հաճի Ոիմէոն աղային, որպէս զի եր յիշատակին գնուի Լատիւմար միքրուկի կոչուած հողը, վանքին սահմանակից: Ոիմէոն աղա կը զործադրէ վարդապետին կտակը և կալուածը կը կառավարէ իբրև միշտ կէլլի: Բայց որովհետեւ սեփականութիւնը կառավարութեան տոմարին մէջ իր անձնական անոււան արձանազըրուած է իր մահէն յետոյ, որպէս Հաճի Յարութիւն բացարձակ տէր կը զանայ և զայն կը վաճառէ յոյներու: Այս հողը մեծ արժէք ունի այսոր:

Ա. Մակարի պատմութեան համար նշանաւոր գէպը է անշուշտ Միհիթար Սկրաստացիի այցելութիւնը 1693 ին: Ապագայ աբրահայրը, գեռ սարկաւագ մը, 19 տարեկան, Ասոյ կաթողիկոս Գրիգոր Պիտակին կը հետեւ Յովիան վարդապետի ըսկերակցութեամբ: Կաթողիկոսը յեպիսկոպութիւն կը բարձրացնէ վարդապետը և անոր հետ կուղեարի չոռմ, մինչ Միհիթար ջերմախոռով կարգելուի, և լարնա-

քա նաւահանգիստէն կը վերագառնայ Սաղամինա:

Միհիթարի յաջորդ արկածները այսպէս կը նկարազրուին Սահմաննոս Ագրոնց աբրահայի գրած կենսագրութեան մէջ:

«Եւ ՚ի կալ անդ (Սաղամինա) աւուրս երիս անայցելու և անդարման, հիւանդութիւն նորա օր քան զօր սաստկանայր, զոր տեսեալ ժողովրդեան, առնալ եղին զնա ի վերայ գրաստու և տարան ընկեցին ի վանս ճգնաւորաց Հայոց, որ միոյ աւուրս ճանապարհաւ հեռի է ի քաղաքէ անափի . . .: Եր յայնժամ Առաջնորդ վանացն այնորիկ նախայիշատակեալ Զօլախ վարդապետն, բայց ոչ գտաւ նա անդ: . . . Արդ խուցն ուր եղին զնա՝ Եր ի վերայ տաննաց սենեկաց վանացն յորոյ ի միում կողման գոյր զառիվայր ճանապարհ ընտ որ լիներ իջանել ի տանեաց անտի և եղանակ ի գուրս վանաց: Եւ արդաբայ զոյր պարտէզ, իբրև երիս քարընկէցս հեռի ի վանաց. և ի պարտիզի անդ ընդարձակ քարածերպ, ուստի բլինէր ջուր յորդառատ և երթայր լընոյր զաւազանն մեծ, որ իբր ասոն կանգնաւ ի բացեայ եր քարանձաւէն, և անափ զեղեալ ծաւալեր ընտ պարտէզն և յայլ տեղիս. և զեռայր ի մեկուցն բազմութիւն օձից զոր բերէ կիսրոս կղզին:»

Կենսագրութիւնը կը յաւելու թէ վանականք և խոհարարը Միհիթարի կրօնական տարբեր համոզումներուն պատճառով անտարբերութեամբ կը դիտեն անսր գտնի վիճակը, և թէ մի անցաւոր ենիսկուպոս տւելի հոգածու

* Սաղամինա քաղաքը կործանուած էր Քրիստոնէ 117 տարի վերը: Հրեայ ապօտաբներու ձեռքով, և անոր աւերակները կը գտնուին Ֆամակոսթայէն 5 միջն զեպի հիւսիս: Այս անդ Սաղամինա անունը դըրւուած է Նիկոսիայի տեղ:

Վերի թուականը (1695) հարկ կը զոյացնէ ՀՀգելու Գրեգոր Բ. Գրեցիկի կաթողիկոսութեան թուականը, ոոր Զամշէան նշանակած է 1682-ին մինչեւ 1691:

կը գտնուի և ջրով խիս կ'եփէ, որով մի քիչ կը կազ-
դուրափ Միթմար, կը վերապառնայ քաղաք և կը մնայ
եկեղեցւոյ խոցի մէջ: Քիչ ժամանակ վերջ երբ Միթմար
կը յրջապայէր քաղաքի մէջ՝ կը բռնուի կառավարական
հարկի համար. հարկահանը տեսնելով անոր հիւանդագին
և չբաւոր վիճակը կը դժայ, և կը հրամայէ « տանիկ զնա
ի մի ի սենեկաց խրոց և տալ նմա խահփէ, զի սակաւ
մի ողի առնուցու և զօրասցի: Եւ առաքեալ կոչեաց զգը-
խաւորն ի Հայոց բնակչաց տեղույն, և առեալ նմանէ զսակ
հարկին ետ զգիրն վճարման ի ձեռն Միթմարայ և արձակ-
եաց զնա խաղաղութեամբ » : Բայց Միթմարի կղզին
գուրս մեկնումը և հայրենիք վերադարձը կը զիւրանայ մի
երեկի յոյնի շնորհիւ, որ անոր անձին համար ըստ կա-
նոնի պահանջուած երաշխաւորութիւնը կ'ընծայէ: *

Ա. Մակարի վանքը, եթէ չունի հին յիշաւակարաններ որ
գոհացնէին մեր հետաքրքրութիւնը՝ ունի բաւական հա-
րստութիւն որ կրնայ բեղմաւորիլ և ծառայել աղդին:
Կաղզուրիչ օդ, Միջերկրականի հովերով զովացած, պա-
ղուկ ջուր որ կը հսուի վանքին վար աղբերակի մը ըր-
թունքն, ծառեր ու թուփեր որ կը պսակեն լեռնակներու
և սարերու բարձունքը, և ընդարձակ հող որ կը հասնի
մինչև ծով, — ահա ինչ որ կը մնայ աղզին՝ բարեյիշաւ-
տակ աշխատաւորներու շնորհիւ:

Վանքի հողին տարածութիւնը կը հաշուուի գրեթէ
40,000 աէօնիւմ որ թէկ մասպար միայն հերկելի է

* Միթմարեան Շիրամանութեան երկհարիւրամեակի հանդէսին ոռ-
թիւ, 1901 Աւոգու. 8 ին Եթարան — Որբանցի աշակերտները քարա-
կոյտ կոթող մէ բարձրացուցին վասքիս զբան հանդիպակաց բլուրին
գրոյ, որ այս օրէն ի վեր կը հոշուի « Միթմարայ բլուր »: Այդ
հանդէսի սկարագրութիւնը տես « Միթմարեան Յոթեւեանի Յիշա-
տակարան », ին էջ. էջ 193:

կրնայ առելի ևս շահագործուիլ: *

Հիմայ այս տարածութեան վըայ կան հետեւալ չորս
վարձակալութիւնները, 1903ի Մարտին սկսած Յ տարի
պայմանաժամով, որոնցմէ ստացուած վարձագնոց գումա-
րը տարեկան 150 անգլիական սոկիի կը մօտենայ:

Ա. Վանքի շրջանակը, — կը բնակին երկու ընտա-
նիքներ, 40 հոգիով:

Բ. Ատալիա. — Վանքն 20 վայրկեան հեռի դէ-
պի հարաւային արեելը: կը բնակին երկու ընտանիքներ
12 հոգիով: Ատալիայի բաժնին հետ միասին վարձու արր-
ուած է վանքապատկան 200 այժերու հօտը և Մանու-
րա (փարախ) ըսուած վայրը ուր կը բնակի թուրք հովիսին
ընտանիքը՝ 4 հոգիէ բաղկացած:

Գ. Այ-Եօրկի. — Ատալիային 43 վայրկեան դէպի
արեելը: կը բնակին երկու ընտանիքներ 8 հոգիով:
Այս աել կայ խարխած եկեղեցի մը, որու գիրէ-
թը կանգուն կը մնայ և որու պատին վրայ կը նշարուի
Ո. Գէորգի պատկերը, եղծուած վիճակի մէջ: Այ-Եօր-
կին յոյներէ զնած է Հաճի կիրակոս անուն հայ մը,
որմէ ալ Յովհաննէս անուն ուրիշ հայ մը, որ վեր-
ջն յունացած է: Այս անձն է որ 80 տարիի շափ
առաջ վաճառած է աղզին:

Դ. Բրակա. — Ծովեղերքին վրայ, վանքն երկու ժումա-
չափ հետի: Այս բաժնին 1897ին վարձուած էր Անգլիա-
կան ընկերութեան (տես՝ էջ 82) որ անուանական վարձագնի
մը փոխարէն 8 տարի պիտի շահագործէր զայն, և յիս
պայմանաժամուն աղզին պիտի վերադարձէր, մշակուած

*—Այէկ տէսնիւմ տարածութիւնը հարացի քառակուսիին
կամ 14,400 քառ. սոկի: Մէկ անգլիական ակրանը (աշե) հաւառար
է 1,1594 տէսնիւմ:

արտերով ու պատուաստուած ծառերովը։ Մի անդիացի քահանայի կողմէ ընդունուած 300 սոկիի մեծ մասովն այս տեղ կառուցուեցան երկու տառներ, իրքն սկզբնաւորուշ թիւն մի հայ գիւղի, որու հիմնարկէքի արարողութիւնն ալ կատարուեցաւ կիմկիացի քահանայի մը ձեռքով և խումբ մը աղջանոց ներկայութեամբ։ վերսյիշեալ թուականէն ի վեր Հայանանցի վեց գաղթականներ, Անդիական ընկերութեան հետ շահակցաբար աշխատած էին, չորս տարուան մէջ 300 տէօնիւմ արտ մշակելով և խել մը ծառեր պատուաստելով։ Երկու տարի առաջ այս մշակներն Ամերիկա մեկնեցան, և Անդիական ընկերութիւնն ալ պայմանաժամի լրանալէն առաջ թաղական Խորհուրդին վերալրածուց հողին շահագործութեան իրաւունքը։ Հիմայ հողը վարձու արուած է յոյն դիւզացիներու, տարեկան 7 սոկիով։

Ս. Մակարի հոգեկուն վրայ կ'աճին ընալիր ցորեն, գարի, վարսակ, շուշիայ, բամպակ, եգիպտացորեն են։ Բլրային և ձորային բաւականութիւնը զիխաւորապէս կը բաղկանայ՝ ձիթենիէ և եղջերենիէ։ 1901 ին 65000 բիոկրամի հասած էր եղջերի քաղը, որ տեղոյն վրայ կ'արժէր զրեթէ 125 անդէ. ոսկի։ Վանքի, Ատալիայի և Այ - Եօրիկի աղբերակներէն ոսովուած պարտէզներուն մէջ քիչ քանակութեամբ կը հասնին զանազան պատուներ և բանջարեղջններ, - սալոր, նուռ, նուշ, կաղին, տանձ, սերկիլ, ընկոյզ, բալ, թուզ, լման, նարինջ, վարունգ, ձմերուկ, սեխ, ամբուկ, լուիկ, պամիա, գրում։ Կան նաև թթենիներ։ Այս ամենքը կրնան ազնուանալ տեսակով և աւելնալ քանակով, և պէտք է խոստովանի որ հշանակելի բարուբամ մը կայ վերջին տարիներուն մէջ։ Թաղական Խորհուրդի վրած պայմաններուն համեմ

մատ՝ վարձակալները տարուէ տարի որոշ թուով ծառեր կը պատուաստեն և մշակելի հողեր կը բանան։ Փափարելի է որ աւելի արագ մզում տրուի գործին, մանաւանդ պաղասաւ ծառերը խնամուին, այդիներ անկուին, և ջուրը տառացնելու միջոցներ ձեռք առնուին։


Ո. Մակարի բաւական հարստութեան մէջ ոչ նուազ կարևոր են անտառային ծառերը — մայրի, կաղնի, եղինի, բեկնի, մաթզենի (arbousier — զօնա եկմրէի,) զղերենի (néfier — մուշւուչա), ալոճնի. նաև հերձի (lentisque — սագրզ) ! լոտանի (micocoulier — չիրշմպիչ) որոնք կրնան պիտուակենիի սրատուաստուիլ և կարիսը հասոյթ արտադրել։

Յաւակի է որ բազմաթիւ մայրիներ և այլ ենանային ծառեր զոհուած են երբեմն, ոմանց ադահութեան և այլոց անհոգութեան։ Բարեբաղզաբար այժմ աղջային իշխանութեան հօկազութենէն զատ կառավարութեան խիստ կանոններն ալ թոյլ չեն տար որ ծառերն անհարկի հարուածներու ենթարկուին։ Երկը տարիէ իվեր Անտառաց վարչութիւնն է որ, աղջային սնտուկին վճարեյի տարեկան 40 ոտկիի փոխարէն սատանձնած է վանքի հողերը հրձիկներու զէմ պահպանիւու հոգը։ Լառաջարական շրջանակաց մէջ այն կարծիքը կը ամիրէր որ օտարազզի վայտահամներէ և ածխագործներէ զատ՝ վանքիներն, իւրենք ալ արտերն անաշխատ բանալու, կամ արօտավայր պատրաստելու մաքով կրակ կը ձգէին, որով հրզեհը վանքապատկան ծառեր փճացնելէ յետոյ՝ կանցնէր պիտուական հողերուն սահմանէն ներս։

Կղզիին մէջ անդիական վարչութեան հաստատուելին յետոյ՝ վանքին աբ՛մտեան սահմանէն լինային մաս մը, որուն սեփականութեան վաւերաթղթերը չեն զանուած՝

գրաւուեցան իբրև պետական հող, և զայն վերստանալու ջանքերն ապարդիւն մնացին։ Այդ բաժնին մէջ կը գըտնուի այն քարայրը ուր, ըստ աւանդութեան, կը ճգնի եղեր լ. Մակար։

Քանի որ վանքը չունի Միաբանութիւն մը՝ վանահայրութեան պաշտօնը կամ տիազուը կը տրուի Ափառուի Առաջնորդին որ Թաղական Խորհուրդի հետ դորժակցութեամբ կը կատարէ պէտք եղած հսկողութիւնը։



ՅԱԿԵԼՈՒԱԾ

— օհքու —

ԿիՊՐՈՍԻ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԵՆ

4

Յայսմաշուրքի մը Յիշատակարանն:

1301 թի գրուած։

(Այս ձեռագրի մի ուրիշ Յիշատակարանը տե՛ս էջ
58, Ծանօթութիւն)։

• • • Յար և ցանկացող եղեալ ի տերունականս մատեան
վերստացեալս Տը։ Կոստանդին և սպասաւորն իւր Յակոբ
քահանայն, և ետուն դրեւ զայ յարդար ընչեց իւրեանց ի
յիշատակ հոգոց իւրեանց և ամենայն զարմեց ի փառ լուսայ-
սկեցից անձանց, և իւրեանց ի կեանս ի սատարութիւն
Ալձ այնին, և յետ տոտի ելլցա իւրեանց նախասացեալ
արքեպիսկոպոսի Տը։ Կոստանդինոց, և լերդայից որդեկին
իւր նորին Յակոբայ, որը իրեւ զիմ մարմին բանական յիրկուց
առ ի մի կերպարան շինեալ կենցարդեցի իրեւ հարազարք
և միայշունչը և միակրաւելք և զաւդայանը, ի յերեց աշաց
առ միենոյն շաւեկը խորհրդայիցեալք, վաճնվի Յակոբայ միակն
գոլով զոր հարեալ եղեւ մինն նետիւ յանտաւրինաց ի մերն
Հռափական կրայն զոր սկաշարեաց Անդեւ Աշրաֆն որ տիրէր
աշխարին Եղիպատոսի և ամենայն ծովեղերացն մինչև յԱնտիոք և
ամենայն շամբուն մինչ յեզր մեծին Եփրատայ, և էր Թիւն
Հայոց 21. (1291)։

Արդ եղեւ աւարտումն մատենիս ի մայրաքաղաքն Սիս,
որ է առ սոսրաով Ած. այսպահ գղեկիս զոր Տը։ Յիսուս
անդրդուելի սպահեաց միշտ և հանապաղ, և մասնչի ոչ Կոյր
սոցայ անդ անդորելց ի մի վայր, գրեալ եղեւ մաս ինչ ի Սիս և
մասն ինչ ի Ճոխաթն որ է վանք Ասորոց ազգին ընդ հավանեաւ

սր. Ածածնին, և մասն ինչ ի սր ու խան Զորյաց կոչնց լոլ վանքը՝
բնեղ հովանեաւ սր. Նշանացն և սր. Ածածնին և սր. Սիսնի: ի
թուականութես հայոց մէծաց, ԶԿ, ի հայրապետութեն, առ.
Կոստանդեայ Կեսարացոյն և ի թագաւորութեն. Աւշնի
Ածայսիրի և բարեպաշտի, սրդոյ Լեռնի, սրդոյ Հեթմայ. զօր
աւրինակ որպէս ի հնաւմի զիաւեթ ընդրեաց ԱՃ. յորդին
Ենակ սայտես և զԱւշնի ի նորումն ընդրեաց ի մէջ եւաւթն
եղբարց իւր և էւաւծ թագաւոր տանս թորդոմայ և ազգին
Հայկայ, յար և համուրակ կարասց կարդալ զԱծայնուագ
մարդարէն բանս թէ փոքր էի ես չեղբարս իմ եւ կրսեր ի
տան հաւը իմոյ: Յոր թէկ ոչ արածէր սայ զիաշնի հաւըն
որպէս զիաւեթ բայց զաւծումն և զժագն ընկալաւ յԱյ. և
խազաղութե, արածէ զըբանաւոր հաւաս հայոց ազգիս զոր
յայլ և յայլ ժամանակն նեղէնին յանաւընաց յոր և զերկնային
ի խազաղութին. ինքն ընդալցի ի Քէ. Ա. մ. բոյ Երկար ամաւք
և բազում ժամանակւ:

Արդ ազաշնմ զհանդիսիւալ վերոյնրեալ Ալշտատակաց
հաւաքեալ բազմայքարչար վկայից որ ի սր. մասնին յա-
ւէտ որ յետ մերոյ էլիցս յայտաւոյց վայելեք ի սայ հո-
գեր միթթարութե. սրախ մասնէ յիշել յաղաւթս ձեր
զիմս նվաստութիւ. կաստանդին եպիսկոպոս եւն եւ զիս.
հանդուցեալ բեանին իմ եւ զիսյժ երախտաւորն իմ զիոհանէս
կարմիր վանցի եւ զքաղցրի մայրն իմ զԱղվոր տիկին. ընդ
նմին եւ զհայրն իմ զՎասիլ, եւ զարեամբ նահանակեալ
հայրազատ եղբայրն իմ վԱրդիս որ մենցէն. մասնուին էր
տիաւը իսպանութեալ եղեւ յանաւընաց և զԱւշնի որդի նորին
որ յանցեալ ամի հանդեաւ խազաղութե, ի ֆո. և է ի պահնասի
ի սր. ու խան ձոխաթն յամսնան յուարի յիրեք աւրին որ էր
շաբաթ աւրն: Ընդ սոցայ յիշեացիք և զհանդուցեալ հայրն
Յակոբայ զԱրքիս և զմայր նորին զԱշամ խաթուն եւ
զշաբագատ անդրանիկ Եղբար ժառանկոյի մասնին Յակո-
կոբայ զԱտեփանոս որյաց Տը. հատուցէ զանսպառ բարին
աստ և ի հանդերձէլումն և յիշելոց և յիշովացտ առ հասա-
րակ միայնի ուղորմեցի ի մէծի աւուրին աշտանի ժամուն
յորժամ ճարտասանութիւնն բանին սպառին և գործին թա-
գաւորեն, միայն ունեցով բարեխաւս զբազմութիւն աստ հա-
ւարեալ սրբոց իւրաքանչիւր յանուանէ ի ֆո. Յիսուս
ար. մեր, որում վայելէ փառք իշխանութի, և պատիւ, այժմ
և միշտ և յաւիտանն յաւիտենից ամէն:

(Ժարբեր ձեռագրով կցուած)

Ոչ զմեզաւք դատաւպարտեալ կազմով սորա զՅակոբ Էրեց
զորդի մէծ պարոնին, և զեղբայրն իմ զՅոհանէս, և զհանգուց-
եալ Եղբայրն իմ ի ֆո. զկաստանդին հանդերձ ծնտւզաւք կեն-
դաննեւաւք և հանդուցելով յիշեցէք ի տր. Յա. ֆո. աղաւնմ
ով ԱՃ. ասէր ընթերցովը ընդ նմին աղաւնմ յիշել ի տր. զուա-
ռական ծերուն զՎասիլ բահնային, և զծնողսն իւր, աղաւնմ
յիշել ի տր. զուառցին իմ զՓորսոս քահ. զմական. . . կուց-
եալ Երկաթ, և ԱՃ. . . այիշելոցամահասարակ . . . ի փառա-
ւորեալ գալըստեան իւրոյ. ուրում փառք յաւիտանն յաւի-
տենից Ամէն:

2.

Ուրիշ Յայտմաւորդի մը մաշամ քերիկն:

1551—1571 Թուականներուն մէջտեղ զրուած:

Վենետիկիներուն ներքի կիպրոսի յոյն, հայ և ուրիշ
եկեղեցիներուն զէմ Լատին կղերի աններողութեան պատ-
ճառով գոյացած ատելութեան սպին կ'արտայայտուի այս
տեղ: Հայազգի Յուլիան եպիսկոպոսի ձեռքով կիպրոսի հա-
յոց մէկ մասին Լատին կղեղեցոյ հետ միացումն ալ այդ
ժամանակաշրջանին կը վերաբերի:

«Պուկաս զ վրդապու հրա(ամանաւ) Խաչատուք կմղկոսին յղեալ
եկաք ի կիպրոս ՚ի մայրաքաղաքն Լաւերջայ յալագու հասի և
իրուանց սր. Աթոռոյն, և ես չունեի կամք վս ահի ծովուն
և յերկիւղի անիծեալ ժժմակէր և զիշակէր արդին Ֆուանիաց.
յորժամ նաւեցուք ՚ի Տարսոնա ՚ի գուստուն տուր ճանապարհ
ի մէջ ծովու ՚ի սահմանա Անկուֆոյ. եկն Ղալին (նաւ) մը
մէծ ՚ի փոյ մեր, զոր ինչ որ կոյը ՚ի նաւն և ունեաք ՚ի հօրէ
և ՚ի մարէ գրեանիք և այլք սուր մերի ՚ի մօրէ արարին մնջ ա-
նողորմ ազգն անիծեալ Լատինացւոց. ԱՃ. կործանեսցէ թար-
ւորուի. նցա զաղաղակի. ով որ տեսցէ և կորդասցէ ասացէ
ամէն և եղիցի:

• • . Եղև մեջ (Ք)ահամէլօ * • • . (անընթեռնէի): իսկ յոր
ժամ եկաք 'ի ծոց նաւահանդիսան Պարբազ (Բարբաս, անա-
սսա մինչ ի Լաւրուշայ բոկոտն և գլուխ ։ ։ ։ մինչ հաս-
տատեալ ազդէն մեր Հայոց որ և նոյն ժամայն 'ի աէսանէլն ։ ։
։ Այ օճեալ քննի Տէր Ստեփաննոս նշին ժամայն զգեցաց
զմեղ և ծածկեաց զմերկութիւն ըստ Աւարնի բանին թէ մերկ
էի և զգեցուցէք զիս և այդն ։ ։ ։ Գրեցաւ յուլիս ։ ։
յաւուր երկուշաբթի, սր. Կուսաւորչի պահոցն ի դուռն սր.
Ածածնին: :

*— Այնպէս կը հասկուի որ նաւը հանդիած է վանամէլօ նաւահան-
դիսար, որ կիւիկիս ձկեր զաւոտին (Բայասի) մաս կը կամէր:

Մինոյն թերթին վրայի երկրորդ գրութեան մէջ ալ (տես էջ 98)
կը յիշուի Խաչատուր Գ. Կաթողիկոս 1670 ին: Բայց ներկայ Յեշա-
տակարանը պէտք է գրուած լինի 1571 էն առաջ, Ղատինաց կամ ֆրան-
կաց, այսինքն Վենետական իշխանութեան ատեն, հետեւարար նախընթաց
Խաչատուրի մը օրու:

Սայ կաթողիկոսներէն Խաչատուր Ա., Զորիկ կաչուած, աթոռ նըս-
տաւ 1551 ին: Խրեն անմիջական յաջորդն էր 1560 ին, Խաչատուր Բ.
Կամ Խաչիկ, Աւենեցի, Երաժիշտ Կոչուած:



ՆԻԿՈՍԻՈՅ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՍԻՆ ԳԱՏՄԱԿԱՐՆ Էջ Մեջ

1810 ի Յունիս 14 ին մէծ իրարանցում կը տիրէր Նիկո-
սիոյ «Տիւրոսի Պալատին» մէջ որ էր ապարանք Զապլուն
Եւխանուուչւցյն: * Զապլունի ամուսնութիւնը Ամորի սպաննուուծ էր,
և գահուուն օրինաւոր ալիրով, Հենրի Բ. ի. Կուսակիցները կաշխա-
տէին որ նա արձակուի Կիլիկիոյ արգելրաանէն և Կիպրոս վե-
րագանցյ:

Սպաննուութեան գէտպէէն առաջ արդէն կասկած կար ոմանց
գէս ։ իբրև Հակառակորդներ Ամորիի: Կասկածելիներու կար-
գին մէջ էին «Տիւրոսի Աստաւածածին» վանդի Մայրապետը և
կոյսերը: Ասոնք ազօթք կատարած էին ներքին խաղաղութեան
վերահաստատման համար, բայց թշնամիք այնպէս սարածայ-
նած էին թէ միշտ բարեմազթութիւնն կընեն աքսորեալ
Հենրի (Ճագաւորին Համար: Ամորի սպանուումէն վերջ աշբա-
տանութիւններն այնչափ զօրացան որ Զապլուն զայրացաւ և
կուզէր պատուհասել Մայրապետը Մարիամ իշխանուհին որ
իր հօրաբըյն էր, և բայր Կոյսերը: Այս միջոցին տարած-
ուած էր այն լուրն ալ թէ ոճքագործները կուսանցին մէջ
ապատանած էն: Պալատական պաշտոններէն Սիմոն Մայ-
րապետեց մինչև իսկ թէ իր սենեկակի պատուիամէն տեսած
է Ամորիի սպանիչ Սիմոն Մոնթոլֆը: Անմիջապէս սկսաւ կա-
տաղի յարձակում վանքին վրա: Կոյսերը նախատուեցան.
անոնց կրօնաւորական հանդամունքը, ընկերական բարձր գիր-
քերը և ընտանեկան սերտ կատերը նկատողութեան շառնուե-
ցան. ամբողջ հաստատութիւնը աւարի ենթարկուեցաւ: Մայ-
րապետը և բոլոր կոյսերը երդումով հաստատեցին թէ ոչ ոք
ապաստանած է վանքին մէջ. բայց յարձակուները կարե-
ռութիւն ըստուն և գիշերանց վերագառնալու և վանքը կը-
րակի տալու սպաննալիք հազիւ թէ հեռացան:

Կրօնաւորուհիներ ահութողի մատուցած՝ պատրաստուե-
ցան փախչելու և իբենց կեանքը փրկելու, բայց Մայրապետը
երիկուան դէմ գնաց Պապի Լեկատին մօտ, բողոքեց իբենց

*Ամորի Լուսինեան էր նաև իշխան Տիւրոսի, ուստի իր բնակարանը
կըսուեր Տիւրոսի Պալատ (Palais de Tyr):

դէմ տարածուած զրաբարտութեանց գէմ։ Հերքից որ եւ Քմելոսիցութիւն Ամօրիկի սպանման, մանաւունդ յիշեցնելով՝ իր աղջականութիւնը, և յանհանառու Եղաւ ողջ ողջ հրկիւուելու, և մէկ ամբաստանութիւնները հասաւառուելին։ Անկատը լուելով Մայրապետին յայտարարութիւնները՝ մխիթարեց և քաջալերեց զնա և խոսանցաւ գիշերը իր ծառաները զրկելու եւ ի հարկին մինչև իսկ անձամբ գալու, Կուսանոցին պաշտպանութեան համար։

Խոզգութիւնն այդ վիճակին մէջ մնաց և ուրիշ հետեանք չունեցաւ։ *

Ս. ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՍԻՆ ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Եկոսիոյ Հայոց վաղեմի Ս. Խոսչ Եկեղեցին, որու տեղը բոլորովին անծանվել է հայ գաղթականութեան՝ Պ. Անլարի վլաղութեան համեմատ այժմու՝ «Արապար Ճամփոր» կամ Աթալիս գու Միսիրիթու, անուն փոքր մզկիթին է, յունց մայր Եկեղեցւոյն գրեթէ կից։ Շէնքին մէջ հայերէն արձանագրութիւն ըլ տեսնուեիր եւ եթէ ներքին պատերուն վրայ կայ՝ ձերման ծեփին ներքի պահուած սկէտք է լինի։

Չեմ կրցած հասկնալ թէ Արապար Ճամփոր (Արաբաց մզկիթ)։ Կամ Աթալիս գու Միսիրիթու (Եղիպատացւոյն Խաչը) անունը ի՞նչ պատճառաւ արուած է ա, ո մատուալին։ Մի աւանդութեան հայելով՝ Եղիպատուն Եկող նիքոլա (Նիկոլոս) անուն մէկը շինել տուած է զայն։ Ըստզներ ալ կան թէ Միսիրիթու բառը տղաւաղումն է Միւսի կը բու (Եղիթ) անուան։ **

* L'Art Gothique et la Renaissance en Chypre. Ա. Հատոր Հեղինակութիւն Պ. Դամիլ Անլարի։

** Բարեկամի մը չնորիւ Փարիզին Պ. Անլարէն տռնուած նոր տեղեկութեան համեմատ՝ Նիկոսիոյ Հայոց գերեզմանատան մօտ պեղուած և մասամբ գուրս բերուած Եկեղեցին կը վերաբերեր լատին կրօնաւորներու։ և ոչ թէ Հայերու (Էջ 76)։

Ս. ՄԱԿԱՐ ՎԱԽԻԹԻ ՄԱՍԻՆ

Կիպրիանոս վարդապետի գրածին նաւելով Հայոց Ս. Մակար վանքին մէջ որի է եղ կենդանի մոցնել արդիւուած էր։ Աքաղաղ մը կը պահուեր որպէս զի անոր խօսելով՝ միաբանները ժամանակին արթնան և առաւտուան ժամերգութիւնը կոտարեն։ Մեծ Պահոց մէջ Ս. Մակարի կրօնաւորները չէին ուտեր մինչև իսկ այս տեսակ ընդէլքները որոնց մէջ որդ կրնայ գոյանալ, ինչպէս բակաց, սիսեռ, ևն։ *

ՆԻԿՈՍԻԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԹԱՓՈՐԸ

Աւերասանդր Գ. Պապը 1200 ին յատուկ Կոնդակով՝ սահմանեց Կիպրոսի լատին կերպին իրաւասութիւնները աեզացի յունաց հոգեկար իշխանութեան վրայ։ Տորակոյ չըկայ որ միւս քրիստոնեայ հասարակութիւններն ալ ենթարկուած էին համանման կանոններու։ Այդ բոլորին ալ ստորակարգութեան կամ հասատակութեան նշան եղող պարտքեր ունեին։ Ի մէջ այլը՝ հարկադրուած էին ներկայ գտնուելու լատին եպիսկոպոսց Սինոդներուն, նաև մասնակցելու հանդիսաւոր օրերու կրօնական թափանիերուն։

Հայր Ստեփան Լուսիննեան կաւանդէ որ սովորութիւն կար նիկոսիոյ մէջ ամեն տարի Աւագ ուրբաթ օրը, մանաւտնդ Ո. Մարկոսի տանին, կատարել այն կրօնական թափորները որոնց կը մասնակցէն ներկայ գրիփատնեայք և հետեւալ կարգով։

Յոյները կուգային ամենէն առաջ, իրենց ժողովրդով, բահանաներով, Աստուածածնի պատկերով և կիննորով։ Յետոյ իրարու հաւեւ։

Մուրացիկ — կրօնաւորները.

Հասկէլքները, որոնց քաջանաները ձերմակ փաթթաց կը կարգէին և եպիսկոպոսը միթր (թագ) կը կրէր,

Նետորականները,

Յակոբիկանները,

Մարոնիները,

Դայիները,

* Կիպրիանոս վարդապետի յունարէն ժամանակադրութիւնը առաջին անգամ 1788 ին տպագրուեցաւ Վենետիկի կերպ վերի տեղեկութիւնները քաղաք է է։ Ստեփան Լուսիննեան էլ այդ տպագրը ուշադրութենէ վրիպած են։

Հայերը, որոնց գլուխները զարդարուած էր լինեն՝ բոլոր
բաձեւ և ոսկեմամուկ ֆէտով:
Ամենէն գերջ կուգային Լատինները, իրենց Արքեպիսկո-
պոսով, զինւորական բանակով, և ազնուականաց կարգերով:*

* Վերը յիշուած հրաւասութեան ժամբամանութիւնները տես՝ The Church of Cyprus, by the Rev. H. T. F. Duckworth, London, 1900.

ԿԻՊՐՈՍԻ ՏԱՐԵԳԻՐՔԸ

Կիպրոսի վրայ կարեսոր և ամփոփ տեղեկութիւններ կը պաշ-
րունակէ հետևեալ անզլիերէն աշխատասիրութիւնը, որ
1901 ին լոյս տեսնելով, 1902 ին ալ հրատարակուեցաւ
(ի Լանտոն) բարեփոխուած և ճոխացած: Գրքոյին կցուած
է աշխարհացոյց քարտէս մը:

A HANDBOOK of CYPRUS.

Compiled by Sir F. T. Hutchinson, M. A.,
Chief Justice, and Claude Delaval Cobham,
B. C. L., M. A., Commissioner of Larnaka.



ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ

Ազգային պատմութեան վերաբերող դեպքերուն:

ՔՐԵՄՈՒՄՆԵՐ ՀԵտոյ

- 868 Աւելքսիս Հայկազն, Բիւլղանդիսներ կայսր Վասիլ Ալ-
շակունիի օրով Արաբները էր վանէ Կապրոսէն:
- 958 Վասիլ Հայկազն, Բիւլղանդական գօրավար, Արաբնե-
րէն գարձեալ եա կը խլէ Կիպրոսը:
- 65 Վրախամիա կամ Վահրամ, Հայու գի գուբու Կիպրոսի-
թորոս Բ. Խիսան և եղբայրը Մէհչ, Ախտիսքի Պայլ
Ռէնալտի հետ կ'առապատակէն Կոզին, ի գրէժ իրենց
Սաեփանէ եղբօր, որ սպաննուած էր Հոյներէն:
- 79 Թագէոս Եպիսկոպոս Կիպրոսի, կը մասնակցի Հռոմ-
կայի ժողովին, Գրիգոր Տղայ կաթողիկոսի օրով:
- 91 Լևոն Բ. Կ'ոյցելէ ի Կիպրոս Անգլիա Ռիչարդ Ա.
Թագաւորին, եւ ամուսնութեանը կնքահայր կը լինէ:
- 1240 Լևոն՝ Երկորդ անգամ կամուսնայ Կիպրոսի
թագաւոր Ամորիի աղջկան, Միպիլի հետ:
- 48 Մրատ Գունդատապլ Ամրզանտէն աեղեկութիւններ
կը հազորդէ առ Հենրի, Թագաւոր Կիպրոսի եւ
առ Թագուհին Սաեփանիա Եմիլիա, որ էր քոյր
Մրատի եւ մեր Հեթում Ա. ի:
- 49 Ա. Լուգովիկոս Թագաւոր Ֆրանսայի, Կիպրոսէն
կը Թղթակցի Հեթում Ա. ի հետ:
- 86 Լևոն Գ. ի որդին Թորոս կ ամուսնայ Կիպրոսի
թագաւոր Հետէոս Գ. ի աղջկան, Մարգարիտի հետ:
- 95 Զապուն կամ Զապէլ, դուսար Լևոն Գ. ի կա-
մաւսնայ Ամօրի Լուսնեանի հետ, որ էր Կիպ-
րոսի Հենրի թագաւորին եղբայրը և Տիրոսի տէրը:
- 297 Մրատ կը գրաւէ Սոյս արքունի գահը, իր եղբայրնե-
րը, Հեթում Բ. Թագաւոր և Թորոս, Խոյս կու-
տան Կիպրոս, օգնութիւն ըս գանելով՝ Կուղենորին
կ. Պոլիս, իրենց քեռայր Մէքայէլ կայսեր մօտ:

- 1302 Զեհան Տարարիացի, Մարտախոս Հայոց թագավաւու
րութեան ի Կիպրոս, կը վախճանի:
- 5 Հեթում Առաջոն, աէր կոսիկոսի, Պուեմնասդ-
րամեանց վակիք մէջ կրօնաւոր կը լինի:
- Յօհաննէս ո ո, Ֆամակոսթայի մէջ կընդօրինակէ
մտս մը Աստուածաշունչէ:
- 6 Զապլունի ամուսինը Ամարի կը բանակալէ ի կիպրոս,
եղբայրը Հենրի Բ. թագաւորը նիլիկիա կը զը-
կէ երբէ կալանաւոր:
- 7 Նիկոլայոս եպիսկոպոս Նիկորոսի կը մասնակցի Սույ
եկեղեցական ժողովին, յարում կը կատարաւէ
նաև կաթողիկոսի ընտրութեալը, որ էր կոս-
տանդին Պրօնագործ, Երկրորդ անդամ:
- 8 Ամրիկ Կիպրոսէն մեր Օշին թագաւորին օգնութեան
կը զրկէ 2000 հետևակ և 1500 հեծեալ զօրք:
- Եշանուհի Ֆեմի, մեր Հեթում Ա. ի գուստորը և
Սիրոնի աէր Յուլիանի այրին, Մայրապետ կը լի-
նի Նիկոսիյ Ս. Աստուածածին կուսանոցին:
- 9 Ֆեմին մեր Մայրապետ կը լինի քոյրը իշխանուհի
Մարիամ, Գուշտան իպլինեան սենեսկալի այրին:
- Անգլիացի Ֆրանչիսկէան, Եղբայր Առամ, Նիկոսիոյ
Լատինաց Ա. Գէորգ Եկեղեցւոյն մէջ կը քարոզէ
Ամրիկի գէմ, և Կիլիկիա կաքսորուի:
- 10 Օշին Կիպրոս Կաքսորէ բազմաթիւ վարդապետներ
որոնք կը հակառակէին Սույ Ժողովին որոշմանց:
- 11 Սենեսկալուհի Անիծ Հեթում Լամբրոնէան ի Կիպ-
րոս, մատեններ օրինակէլ կուտայ ճարտար քա-
հանայ Ստեփան Գոյնէր Երիցանցին:
- Ամրիկ Կ'սպանութիւ. Հենրի Կ'արձակուի Կիլիկիայէն.
Զապլուն կը դառնայ Այաս: Իր ժառանգութեան
համար վէճ կը ծագի Հայոց և Կիպրացոց մէջ:
- 12 Օշին թագաւորի խնդրանոք և Կղեմէս պապի հրամա-
նով Կիպրոսի Փոքր Եղբայրներու (Frères Mineures)
վանքէն վեց կրօնաւորներ կը զրկուին Կիլիկիա
Յօհաննէս սպասաւոր Աստուածածին բանին, Ֆամա-

- կոսթայի Կանչուոր վանքի մէջ: Թերեւս նախայիշ-
եալ ընդօրինակին Աստուածաշունչի:
- 1320 Զապլունի Երկու կրտսեր որդիի, Լուսանեան Ջե-
հան կամ Ճիւան և Գուփտոն, Լեռն Ե. ի ինամակալ
Օշին Պայլի հալած անքէն կը վախչին Կիպրոս, Ե-
րևաց հօրեղբայր Հենրի թագաւորի մօտ: Տասը
տարի վերը Լեռն ըսփահաս կը լինի, սպաննել կու-
տայ Օշին Պայլը, և անոր տեղ պաշտօնի կը հրա-
ւիրէ Զեհանը:
- 22 Յովհաննէս ԻԲ. պապի միջորդութեամբ հաշու-
թիւն կը կնքուի Հայոց և Կիպրացւոց մէջ: Հենրի
զիւնորական օգնութիւն կը զրկէ Հայոց, Եփիպո-
սի սուլթանին դէմ:
- 35 Եփիպտացիք Կարչաւեն Կիլիկիա: Այասէն բազմա-
թիւ հանր կը վախչին Ֆամակոսթա: Քարոզիչ
Եղբայրներէ Յովհան Վերոնացի կը նկարագրէ
Ֆամակոսթայի: Հրապարակին վրայ պարզուած
սրտամմիկ տեսարանը:
- 40 Եշիվա Տամբիէրեան (Eschive de Dampierre)
կը վախճանի և կը թաղուի Նիկոսիոյ Աստուածա-
ծին Եկեղեցին: Այսէրու այժմեան դրան ձախ կող-
մի որժին մէջ տեղաւորուած խորանաձև շինուածքը
այս տիկնուշ շիրիմն է:
- Գրիգոր եպիսկոպոս կը մասնակցի Կիպրոսի յոյն
եպիսկոպոսաց ժողովին:
- 41 Սիմեոն պէկ, եպիսկոպոս Կարնեցի. Հատինամոլ.
վախստական ի Կիպրոս:
- 42 Գուփտոն Լուսնեան կ'ընթրուի Հայոց թագաւոր:
- 45 Ներսէս եպիսկոպոս և Կոստանդին Կարուէլի սե-
պուհ կը յանձնարարուին Պապէն, որ Կիպրոսի
հարկահաններէն դրամական նպաստ ստանան Կի-
լիկիոյ համար:
- 46 Այասէն վախչելով Ֆամակոսթա ցամաք կելէն
1500 հայեր, ըստ վկայութեան Յակոբ Պերնացէ
ուխտաւորի:
- 47 Կիպրոսի Ճիւկոս թագաւորը Եփիպտացւոց դէմ
կ'օդնէ Հայոց Կոստանդին թագաւորին. բայց թը-

- նամիք կը յաղթեն և կը գրաւեն Այասը:
- 1348 Զեհան Լուսինեանի տիկինը Սուլթան կիլիկիայէն
կը փախչի Կիպրոս, երկու որդիներով, — Պե-
մունդ և Լուսն:
- 63 Կոստանդին Ե., Կիպրոսի ճարտերէն, կը թագաւո-
րէ Հայոց:
- 67 Պետրոս Ա. Թագաւոր Կիպրոսի, կը ճանաչուի իր-
ու Հայոց թագաւոր: Նշն տարին կ'ալզատէ Այասը
Թիւրբեմէն հրոսակներէն:
- 73 Պարոն Լուսն Համբաւցի և այլք պատգամաւոր կու-
տան կիլիկիայէն 'ի դահ հրաւիրելու զԼուն,
Զեհան Լուսինեանի որդին:
- 74 Կիպրոսի վրայ բռնակալող ձենովացիք Լուսնէն
անիրաւաբար կ'ստանան 6000 արծաթ դահեկան
կամ 500 տուկադ, և անոր կնոջ աւատական
կալուած որ 30,000 արծաթ կ'արժէր:
- 74 Լուսն կը մեկնի Կիպրոսէն և Սիս կը հասնի Յու-
լիս 26 ին.ինը ամիս վերջ գերի կը աւարուի Երիպոսու:
- 96 Լուսնի մահէն վերջ նիկոսիոյ Ա. Սօփիա եեղեցւոյն
մէջ Յակոբ Ա. կը հռչակուի թագաւոր Հայոց:
Նոյնպէս Կիպրոսի արքունի զինանշանին վրայ կ'ա-
ւելնայ Հայկական տուծը:
- 99 Տարսոնի Մատթէոս եպիսկոպոս կ'օրէնք զջովհան կամ
Յանոս Թագաւոր Կիպրոսի. Խոյ. 11:
- 1404 Պարոն Կարապետ, թռոռն կոստանդին թագաւորի և
այլք, կը գաղթեն Կիպրոս:
- 23 Մեծ գաղթ Կիլիկիայէն Կիպրոս:
- 25 Լուսն եպիսկոպոս:
- Կիպրոս արշաւող Եգիպտացւոց դէմ կը պատե-
րազմին և կ'սպաննուին Սիր Թորոս կոստանց ձի-
ւոր, և Կոստանդին երեց, եղբայր Լուսն եպիս-
կոպոսի:
- 57 Նիկոսիայ Հայերը Յակոբ Բ. ի զինւորներուն դէմ կը
պաշտպանեն Հայոց դուռը, բայց կը յաղթուին:
- 58 Կիլիկիայ Կոռիկոս ծովաբերդը, որ 1871 ին բնակչացը


- կամբըով Կիպրոսի համատակած էր՝ Գարսման Թուր-
քերու ձեռքի կ'անցնի:
- 1459 Փետրոս Լուսինեան, Մարտախտ Հայոց ի Կիպրոս:
- 67 Սարդիս եպիսկոպոս Կիպրոսի: Իր օրով՝ Հայերն ալ
կը կատարեն երաշտութեան առթիւ մհծահանդէս
թափոր որմէ անմիջապէս վերջ անձրև կը տեղայ:
- 89 Վենետիկան տէրութիւնը կը հաստատէ Կիպրոս
Հայ աւագներու ոռմիկները:
- 1504 Դաւիթ եպիսկոպոս: Գրիգոր աւագէրէց որդի Լիվոնի:
- 61 Ստեփանոս Քահանայ:
- 63 Էջմիածնի կաթոլիկոս Միքայէլ Սեբաստացիի կազմէ
Հովմ զրկուող գեսպանը Արքալ, որդին Սուլթան,
և Տէր Աղեքսանդր քահանայ կը հասնին Կիպրոս:
- 67 Յովհաննէս եպիսկոպոս, Առաջնորդ:
- 68 Յովհան եպիսկոպոս: Նուելիրակ Սոյ:
- 70 Յովհիան Հայազդի եպիսկոպոս, լատինացած. Կիպրո-
սէն Հովմ կը մեկնի:
- Սուլթան Սելիմ Բ. ի Փէրմանով նորէն Հայոց կը
յանձնուի Ա. Աստուածածին Եկեղեցին:
- 81 Ստեփանոս աբեղայ: Համթեցի Խաչատրւը սարկ:
- 1613 Սիմէոն Ղազարեան և ուրիշ երեւելիներ Խաս էֆէն-
տիկ գէմ կը դատավարեն եկեղեցւոյ համար:
- 42 Մեսրոպ վահահայր:
- 68 Թովման վարդ. Կուրիճաննէան Վահանդէյի, այցելու:
- 78 Սարգիս վարդապէտ:
- 79 Վարդան վարդապէտ, այցելու:
- 90 Զօլախ վարդապէտ, վանահայր:
- 95 Պաւիթ Արեւելցի, պատրիարք Ա. Պոլսոյ, Թօվմաս
վարդապէտ Բերիացիի գրդամամբ Կաջորուի Կիպ-
րոս, բայց քիչ վերջ կը դառնայ իր Աթոռի վրայ:
- Սոյ կաթողիկոս Գրիգոր Բ. Աստանացի - Պիծակ,
Յովհան վարդապէտի և Միքիթար Սեբաստացիի
չետ ի Ա. Մակար:

- 1701 Թօխատցի Յակոբ Քալիք, մահաւոփ Պասմածի Փանոս
որդի, այցելու ի Ս. Մակար:
- 05 Մինաս վարդապետ Համբեցին, նախկին պատրիարք
Երևանացէմի, կը վախճանի ի Կիպրոս:
- 11 Աստուածատուր վարդ., ի Ֆամակոսթա, այցելու:
- 15 Յարութիւն վարդապետ, Վանահայր:
- 45 Դաւիթ Եպիսկոպոս, Առաջնորդ:
- 51 Յովակի վարդապետ, >
- 75 Գրիգոր Պասմածեան, նախկին պատրիարք կ. Պոլոսյ.
իբրև Առաջնորդ Կիպրոս կը մնայ 11 ամիս, կու-
ղեորի Եւրոպա, կը վախճանի ի Թորիեսթ, 1791 ին:
- 79 Մարտիրոս Եպիսկոպոս, Առաջնորդ:
- 83 Յակոբ Եպիսկոպոս, > :
- 84 Յովհաննէս վարդապետ, > :
- 99 Յովհաննէս Եպիսկոպոս, > :
- 1803 Էտիրնէցի Մկրտիչ վարդապետ և Տաթեացի Պոլոս
վարդապետ:
- 12 Պետրոս վարդապետ:
- 14 Ստեփանոս վարդապետ:
- 17 Դիտնեսիոս վարդապետ. Առաջնորդ որ յետոյ բո-
ղոքականութիւն ընդունեց ի Գէյրութ:
- 22 Գաբրիէլ վարդապետ, Առաջնորդ:
- 27 Յարութիւն վարդապետ Իզմիրցի >:
- 29 Յարութիւն Աստուածաբան, Աւագերեց:
- 37 Յովհաննէս Եպիսկոպոս Սոյո: Բարթողիմէոս, Մա-
կարիսու և Պօլոս վարդապետներ:
- 43 Գրիգորիոս վարդապետ:
- 44 Թադէոս վարդապետ:
- 46 Յովհաննէս Եպիսկոպոս Մարաշցի:
- 47 Յովհաննէս Եպիսկոպոս Նաւիրակ Սոյո:
- 50 Յովհաննէս վարդապետ, Կաթողիկոս մականու անեալ:

- 1851 Պոլոս վարդապետ Վանեցի:
- 52 Գէորգ վարդապետ, Նուիրակ Սոյո:
- 54 Նիկոլաս Եպիսկոպոս Ֆրնուղի. այցելու:
- 56 Արքահամ Վարդապետ:
- 60 Յովհաննէս վարդապետ Շամիկոնեան վանահայր
- 61 Յովհաննէս վարդապետ, Վագալուղուտ մոկանու-
թանակ. Նուիրակ Սոյո:
- 64 Արքահամ Խապեկոսյան Ջրաշինլ:
- 66 Աբահով Ջարդառանն իզմիրցի Այս միջոցին հրդեհ
կը պատճի Առաջնորդամանի մէջ և զանազան
թղթէր կը փառնան:
- 68 Յովհաննէս վարդապետ Եղմիածինէն. այցելու:
- 70 Թադէոս վարդ. Վառնացի, կ. Պոլսէն զրկուած:
- 71 Իր օրով կը դադրի Սոյո կաթողիկոսին յիշատա-
կութիւնը և Կ'ակսի Եղմիածնի կաթողիկոսինը:
- 74 Ղուկաս վարդապետ Բալուցի: Երուսաղէմէն: Քու-
կարկութեամբ Թաղական խորհուրդ Կ'ընտրուէ:
առաջին անգամ:
- 76 Վարդան վարդապետ Մամիկոնեան:
- 77 Սովէս վարդապետ Կէօմրիւքմեան:
- 78 Մաղաքիա վարդապետ Տերունեան:
- 79 Մեսրոպ վարդապետ:
- 80 Կարոպետ վարդապետ Բագրատունի:
- 81 Յովհաննէս քահանայ Հիւնքեարպէյէնտէան, կ.
Պոլսէն:
- (Տօքթ. Յովհէփ Շիշմաննէան —Մերենց,
զինւորական բժիշկի պաշտօնով կը բնակի Նիկո-
սիոյ մէջ, իր Թագուհի աղջկան հետ 1875 - 78):
- Զաքարիա վարդապետ:
- Մովէս վարդ. Կէօմրիւքմեան, Կրկորդ անգամ,
կ. Պոլսէն:

1889 Խորէն վարդապէտ Փորթուգալէան Երուսաղէմէն:
- 99 Պետրոս վարդապէտ Սարանքան:

ԾԱՆՈՅ. — Առաջնորդներէ ոմանց անունները և Յուականները առ
են բերանացի տեղեկութիւններէ, առ ի չգոյէ գրաւոր յիշատակութեաւ



ՈՒՂՂԵԼԻՔ

34րդ էջ, 2րդ տողը պէտք է հասկնալ այսպէս:
Խնայողական արկղը կ'ընդունի առնուազն մէկ շիլին:
Բայց մէկ անձի անունով յանձնուած դրամներուն զումա-
րը 300 սոկիէն աւելի պէտք չէ լինի:

46րդ էջ, վարէն 10րդ տող:
(Յամնակոսթայի) տասնամեայ (պաշարումը) կարգա-
տասնամսայ:

ՎԵՐՋ

ՀՀ Ազգային գրադարան

NL0506998

520

20112